

451


Lwy
965

Survey

57-37

288

12013



~~N 315~~ N 321

Յ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

288

Վ Ե Պ Ի Ր

2082

Թ Ի Ֆ Լ Ի Ս.

Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի.

1879

2101

644
965

РА
7596

В. СЕР-ГРИБОВИЧ



Ч Ё 9 1 1



Р. И. С. Л. И. У.

Տպարան Եղիշանեկա Մարտիրոսեանցի

1879



Дозвол. Цензурою 30 Ноября 1879 года.



965-2013
7.8.960

Типографія И. Мартиросіанца на Орбе-
ліановской улицѣ д. № 5

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Մի քանի բարեկամներս խորհուրդ տուին
ինձ վէպիկներս, որոնք «Մշակի» մէջ զանազան
ժամանակներ տպւած են եղել, առանձին գրք-
քոյկով հրատարակել: Այդ խորհուրդին հետե-
լով հրատարակում եմ վէպիկներս առանց որ և
է փոփոխութեան, նոյնութեամբ, ինչպէս տպւած
են եղել «Մշակի» մէջ: Աշխատութիւնս խորին
յարգանքով նուիրում եմ պ. Գ. Արծրունուն:

Յ. Տէր-Գրիգորեան



Ն Ի Ն 0

I.

18. . Թուականի զարուհն էր: Վանքի Թաղում, ուստա Գեվորգի տան ներքի յարկի սենեակներից մէկում, որ նա տալիս էր ամիսը վեց մանէթ քրէհով, նստած էին երկու ջահել աղջկերք և սաստիկ տաքութեամբ քփուում էին:

Նրանցից մէկը դունաթափ երեսով, արտասուքները աչքերին այնպէս ազդու կերպով խօսում էր միւսի հետ, որ առաջին հայեացքից կարելի էր իմանալ, որ խօսակցութեան առարկան շատ մօտիկ է նորան: Սա խարազ Նազօրի տան և ութ տարեկան նշանած աղջիկն էր: Միւսը, Նինօից աւելի ջահել, մեծ ուշադրու-

Թեամբ լսում էր իւր ընկերութեան և երևում էր, որ նա կամենում է համաձայնել նրա հետ, բայց կամ վախենում էր կամ աւելի լաւ էր համարում մխիթարել նորան:

— Աստուծ գիշենայ, Նինօ ջան, սիրադ ղայմացրու ու զաբուլ կաց քու բաղդին:

— Դու ինձ համա մի դարդ անի, Սօնա ջան, իմ բանն էն վուխտը խարաբ էլաւ, վուր ինձ էն գիժ Կարօի վրա նշնեցին:

— Ինչ է ասում քան, խալխը կու իմանայ, նշանածիդ կու իմաց անին, մէ մատը միդը կու դառնաս սաղ քաղքումը:

— Հայ գիդի հա, մէ վուխտ կեր իս էի քիզ խրատում, հիմի դուն իս իմ գլխին աւետրան կարգում. ամա չիմ կանա չէ. Աստուծ գիշենայ էստի է հասի, ասում էր Նինօն, ձեռքը բողազին տանելով և աչքերից արտասուք թափելով: Ի՞նչ էր ուզում ինձմէն իմ դեղէն, ի՞նչ էի իս նրան գէթ անում, ինձ համա տանը ննդած էի, մէ թիքա հաց էի չորլամիշ բլում, էն էլ իմ մատի պողոնցով էի աշխատում: Ել մարթ չը մնաց, վուր մէջ չը գցեցի, առջիւր չոքած աղանչաք էի անում, ամա նա իրն արաւ ու ինձ նշնեց:

— Ախար վուր չիմ իմանում, թէ ի՞նչի չես հաւնում քու նշանածիդ: Իմ Վասօի արիւր գիշենայ, Նինօ ջան, վուր լաւ տղայ է, ասում էր Սօնէն մխիթարելով իր ընկերութեան, էն օրն էլ Ուսնիփէրը, նրանց հարեանը, իմ պարգեդի հիդ խօսում էր դուր ու իս ախօշկեմէն անգա՞մ էի գնում. անրա ջիբեմէն, ասում է, իր օրումը փուլը չի պակսի կօսէ, Շուլաւէր մօդ վից բաղի երես ունէ վիկալած, կօսէ ղուրթ է քիչ չար է, ասում է, ամա մէ պակասութիւն ո՞վ չունէ, կօսէ: Զամ էլ, Նինօ ջան, խօ գիդիս վուր հիմի վերջի կինտօն հարուր երկու հարուր լծուման քրթամ է ուզում, էնէնց էլ բաժինք, նա խօմ խիսձը քիզ անիուդ, անբաժինք ուզից, քու սիրունութենի խաթիր:

— Այ վուչ էր էլի էս սիրունութիւնը, վուր իմ քամբախտացնողը սա էլաւ, էրնէկ իս իմ դէղի փուրումը ջուր էի կտրվի ու աշխարք չէի տեսի, ասաց Նինօն և արտասուքները հեղեղի պէս թափվեցան նորա զեղեցիկ սև աչքերից:

Սօնան բարի սիրտ ունէր և մի և նոյն ամանակ սաստիկ սիրում էր իր Նինօին, որտեղ Նինօն էր, էնտեղ էլ Սօնան, Սօնան իր սրտի

բոլոր խորհուրդները յայտնում էր Նինո-
ին. մէկ խօսքով նոքա միասին ուրախա-
նում էին և միասին տխրում, միասին ծիծա-
ղում ու միասին լաց լինում։ Նւ հիմա սրանցից
մէկը տեսնելով միւսի արտասուքները, չը կարո-
ղացաւ իրան պահել և ինքն էլ լաց եղաւ։
Նոքա գրկեցին միմեանց և այնպէս լուռ արտա-
սուքներ էին թափում։ Բաւական երկար տևում
էր այս կենդանի տեսարանը, վերջապէս Սոնան
գսպեց իրան և առաջինը խօսեց։

Հալբաթ, Նինո ջան, դուն օմբնու սի-
րում ես, վուր էտէնց զլուխդ մահու իս տալի։
Թէ վուր էտ թափուր բան կայ ի՞նչի ինձ չիս
ասում։ Գանա իս էլ էն Սոնէն չիմ, վուրիմէն
դուն վունչիչ չէիր թաքցնում։ Մինք մէտի մին-
ձացիլ ինք, միր դարդն էլ կէս է էլի, ուրախու-
թիւնն էլ. գանա մէ օր էնթաուր օր պէտք է
էկիլ էր, վուր դուն ինձմէն իքմին էիր թաքցրի.
ասում էր Սոնան փաղաքշական և սիրտը թա-
փանցող ձայնով։

Խորամանկ աղջիկը չը սխալվեց, նրա ուղիղ
զգած նետը հասաւ իր նպատակին։ Նինոն

խոստովանեցաւ, որ սիրում է Գրիգորեանցի որ-
դի Նիկոլէն։

— Այ քուանամ իս, էտ ի՞նչ իս ասում,
Նինո ջան։ Նշնիլ էին քիզ, չէին նշնի՛ նա իս
քիզ վունց գուգէր ու վունց գուգէ, նրա համա
հօրէն չուրս հինգ հարուր թուման քրթամ
է գնում։

— Իս էլ գիցիմ էտ, իս էլ էտ իմ իմ զլուխը
վայ տալի. ի՞նչ անիմ, վուր սիրում իմ նրան։
Նխար վուր ջուրը ննգնիմ, իս նրան չիմ կա-
նացի իմ սրտէն հանի. վուրդի գնում իմ նա է
իմ առջիւր կանգնած, նրա վրա վուր փէքր իմ
անում սիրտս պատռւում է, էլ վունց գիշերն
ունիմ հանգիստ, վունց ցերեկը. իս վուր նրան
տեսնում իմ, նա վուր ինձ մօտիկ է տալի իր
սիւ մինձ աչկիրով վուտնիրս դողումին, կռնիրս
թլանում ին, սիրտս գնում է ու էն վուտոր
վուր նա ինձ ասէ թէ արի քիզ ջուրը գցիմ,
արի սպանիմ քիզ, արի քիզ խիտալիմ, իս նրան
ուար չիմ կանա ասի. ի՞նչ անիմ, Սոնա ջան,
վունց վայտամ իմ զլուխը։ Ինչի էին ինձ
նշնում, թող տանը ննգած էի էլի, դուրթ է
նա ինձ չէր ուզի, ամա էնդով էլէ կու հանէի

սրտիս փխցուկը վուր թէ իմ սիրածը չը տարաւ ինձ, ոչովին էլի չիմ պատկանում:

— Ղուրթ իս ասում Նինօ ջան, ամա հիմի էլ ի՞նչ կանաս օտկի, հազար գուգէ լաց ըլես, հազար գուգէ զլուխդ սպանիս, վունջիչ չես շինի: Ուփրօ լաւ է Նիկօլին մտէտ գցիս, հանիս սրտէմէդ:

— Չէ, չէ էտ մի ասի, էտ ըլելու բան չէ, ո՛ւմը սրտէս հանիմ, ո՛ւմը մտէս գցիմ, ի՞նչ իս ասում: Իմ ապրեցնողը նա է, նրանով իմ իս շունչ քաշում, նրա փեքրն է, վուր զիմնում իմ իս էս օրին, իս կա՛նամ նրան իմ սրտէն հանի: Չէ էտ չիմ կանա անի: Իս գուցիմ Միկիտին, չարա չը կայ, ամա իմ ուղածը Նիկօլը կուլի, իս կու պսակվիմ Միկիտի հիդ, ամա ինձ վրա պսակվողը Նիկօլը կուլի, իմ փքրումը Նիկօլը կուլի իմ մարթը, ինձ հիդ խօսողը ու ինձ սիրողը, հալբաթ իմ ճակտին էլ էս էր գրած:

Սօնէն մնաց շուարած. երբէք նա չէր տեսել իր ընկերուհուն այսպիսի դրութեան մէջ: Նինօի ոգևորած երեսը, նրա վառվռուն աչքերը, նրա քաղցր, բայց ազդու ձայնը այնպիսի ապաւորութիւն ունեցան Սօնի վրա, որ

այս վերջինը աւելի լաւ համարեց յետ ձգել իր պատասխանը:

II

Նիկօլը Նինօի և Սօնի տանտիրոջ պ. Համբարձում Գրփողեանցի որդին էր: Թիֆլիսի կլասիկական գիմնազիայում կուրսը աւարտելուց յետոյ, Նիկօլը գնաց Պետերբուրգ, ոչ այնքան իր ուսումը շարունակելու (Նիկօլը Թիֆլիս էլ չէր սիրում սովորել), ինչքան այն մտքով, որ իր ընկերները գնում են, ուրեմն ինքն էլ պէտք է գնայ:

Պետերբուրգ նա չը կարողացաւ քննութիւն տալ, բայց այս հանգամանքը նրան չը վրդովեց: Նիկօլը Պետերբուրգ ծանօթացաւ Բերգի թատրօնի դերասանուհիներէից մէկի հետ, թողեց նրա մօտ իր հօրից ստացած երեք հազար մանէթը և յետ դարձաւ Թիֆլիս: Այստեղ նա նոր նկատեց Նինօի գեղեցկութիւնը: Նիկօլը տեսաւ, որ այդ աղջիկը այլ ևս այն երեխան չէր, որի հետ սովորել էր խաղալ և որի մագերը շատ անգամ քաշքշել էր: Նինօի սեւ աչք և յօնքը, նրա գեղեցիկ պատկերը, նրա բարակ մէջքը գրաւեցին Նիկօլի բոլոր ուշադրութիւնը: „Ото-

ИТЪ ЕЮ ПОЗАНЯТЬСЯ“ ասաց նա և այս օրից էլ հանգիստ չէր տալիս Նինօին: Թէ ինչպէս տարաւ նա իր գործը, թէ ինչպէս կարողացաւ գրաւել Նինօի սիրտը, այդ երկար պատմելու բան է, այսքանը կասեմ միայն, որ մէկ գեղեցիկ երեկոյ, Նիկօլը յայտնեց Նինօին իր սէրը և մի և նոյն ժամանակը աւելացրեց, որ Նիկօլի պապինկէն չի թողնի նրան Նինօի հետ պսակվելու: Նինօն էլ չը հարցրեց թէ ի՞նչ պէտք է դուրս դայ ուրեմն նրանց սէրից, չասաց թէ աւելի լաւ է հիմիկուց բաժանվել և նա այս բանը չէր կարող անել, որովհետեւ նա սիրում էր և սաստիկ սիրում էր Նիկօլին: Աչքերը խփած, առանց երկար դատելու Նինօն ընկաւ Նիկօլի գիրկը, անձնատուր եղաւ նրան: Բայց զարմանալի բան, Նիկօլը բաւականացաւ Նինօի պատճառական սիրով:

— Пока и это достаточно, ասում էր նա:

III

Կիրակի օր է, երեկոեան տասն և մէկ ժամը: Վանքի եկեղեցին լուսաւորված է: Կանանց դասի առաջ, շրջապատված երկու կողմից ժողո-

վրդով կանգնած են երկու տղամարդ և նոցա մէջ տեղը մէկ երիտասարդ աղջիկ: Աղջկայ ձախ կողմը կանգնածը հագված սև կաբայ, մախոխի ռանդը ակալուխ, լայն շառաւար, մօտ երեսուն և երկու տարեկան մարդ է. նրա արեւից այրված երեսը ցոյց էր տալիս, որ նա շատ օրեր է անցկացրել բաց երկնքի տակը: Այս մարդը շիրաջի Միկիտան էր:

Շիրաջի Միկիտի կրպակը գտնվում էր Հաւլաբար, բայց նա այնտեղ շատ քիչ էր մնում, գրեթէ բոլոր ժամանակը նստած ձիու վրա, նա գնում էր երբեմն Կախէթ, երբեմն Թէլաւ, երբեմն Շուլաւէր, կամ Թիֆլիս գինիք ուղարկելու, կամ բաղերի երես առնելու:

Մէկ անգամ, երբ շիրաջի Միկիտը դառնում էր Շուլաւէրից, նա սովորաբար գնաց Թէլէթ սուրբ Գէորգի առաջ մոմ վառելու: Այստեղ նա առաջին անգամ տեսաւ Նինօին և շատ հաւանեց: Փոքր հարց ու փորձ անելուց յետոյ նա իմացաւ, որ խարազ Նագօրի աղջիկն էր: Երբ Միկիտը եկաւ Թիֆլիս, նա պատմեց իր մօրը, որ մէկ աղջիկ է տեսել և շատ հաւանել և եթէ Միկիտը այդ աղջկան չուզէր, էլ իբր օրումը կին չէր առնի: Միկիտի մայրը գիտէր

իր որդու բնութիւնը, որ նա մէկ բան ասաց անպատճառ կը կատարի, նա շուտով մարդ մէջ գցեց և որովհետեւ Նինօի ծնողները համաձայնութիւն տուին, նշեց իր տղին:

Նինօն արդէն սիրում էր Նիկօլին, նա շատ աղաչեց իր մօրը, որ իրան մարդու չը տան, շատ արտասուքներ թափեց, բայց ինչպէս տեսնում էք նա կանգնած է եկեղեցում Միկիտի կողքին:

Միւս մարդը Միկիտի ընկեր և նրա խաչ եղբայրն է:

Սկսեցին շարականը և պսակվողները կամաց կամաց գնացին բեմի առաջը:

— Քա Սօփիօ մէ մօրիկ թէ նորահարսի ռանգ ու ռունգը վրէժն է գնացի, աչքերն էլ արտասուքով լքցվիլ է, ասում էր կանանցից մէկը: Հէնց գիշերնաս պսակելու մագիէր, զասարխանէն ըլին տանում:

— Հա բա ջան, էն օրը Փէփէն էլ էր ասում: Քինչ նշնիլ ին, ասում է, Նինօի աչքը չէ ցամքի՞ կօսէ:

— Իս ուփրօ փիս բան իմացայ, ասումին միթամ իրանց տանտիրուչ տղին է էլի սիրում:

— Չէ, չէ մէ գիւս է էլի:

— Հօրէն, հօրէն, նա էլ մօգ գնաց բեմի առջիւր մում վառելու:

— Քա Նինօն էլ կարմրեցաւ, ինչկի հիմի զիփ գեգնին էր մօրիկ անում, հեմի Նիկօլիմէն աչքը չէ հիռացնում, հէնց գիշերնաս ուզում է վրա ննդնի ու փաթթվի:

Աղջկերքը ճշմարիտն էին ասում, Նիկօլը վառեց բեմի առաջը մում և պսակվողներից քիչ հեռու կանգնեց, այս բոպէից Նինօն էլ իր աչքը չէր հեռացնում Նիկօլից: Լսեց արդեօք Նինօն թէ ի՞նչպէս քահանան հարցրուց երեք անգամ նրա համաձայնութիւնը, գիտէ՞ր արդեօք թէ ինչ պատասխանեց քահանային, իմացաւ արդեօք թէ ինչպէս կատարեցին պսակի խորհուրդը: Ոչ, Նինօն նայում էր Նիկօլին, մտածում էր Նիկօլի վրա, խօսում էր Նիկօլի հետ, մէկ խօսքով բոլոր նրա գոյութիւնը կենտրոնացել էր միայն Նիկօլի մէջ:

Գրէթէ ուշաթափ նա դուրս գնաց եկեղեցուց, գրէթէ ուշաթափ նրան տարան Հաւլաբար Միկիտի տունը, գրէթէ ուշաթափ նա անցկացրուց բոլոր գիշերը:

— Խնամի ջան, ի՞նչէ է հարսս ջգրած, հարցնում էր Միկիտի մայրը Նինօի մօրից:

— Էրեխայ է խնամի, խամութին է անում,
համ էլ ինձմէն բաժանվելը հէնց գիդիս հիշտ
է դրա համա:

— Բաս դիւի տանը քի մօդ խօ չէր նստի:

— Արի ու ասա, ամա ասում իմ էրեխա է,
պատասխանեց նինօի մայրը:

Մէկ ամիս Միկիտը մնաց քաղաքումը, բայց
եկաւ խաղողը քամելու ժամանակը և նա գնաց
Կախէթ:

IV

Գրեթէ կէս գեղեր էր: Խորին լուծիւնը ախ-
րել էր Թիֆլիսի վրա: Սուրբ Մինաս եկեղեցու
մօտ կանգնած էր մէկ Փայետօն, միւս քուշումը
մէկ երիտասարդ եւրօպական հագուստով անց
ու դարձ էր անում և շուտ շուտ իր խորա-
մանկ աչքերը դարձնում էր դէպի Միկիտի տան
քուշի դուռը: Ժամանակ առ ժամանակ սա իր
քթի տակը փնթփնթում էր. «էս օր խիտ
ուշացաւ, կամաց կամաց վունց որ տեսնում
իմ իս բեղրում իմ, քիչ էլ կու մնամ, թէ չի
դուս գայ, կհամա» այս ասելուց յետոյ նա մօ-
տեցաւ, զրան ծակից նայեց և շուտով հե-
ռացաւ, հէնց նա ուզեց թեքել իր ճանա-

պարհը դէպի միւս փողոցը, սուրբ Մինասի
կողմը, Միկիտի տան քուշի դուռը բացվեց և
երեւաց մէկ կանացի գլուխ: Երիտասարդը յետ
դարձաւ և գնաց դէպի աղջիկը:

— Նիկօլ ջան դուն իս:

— Իս իմ, նինօ ջան, մէ սհաթ է մնում
իմ քիւ, հէնց դիդէի չիս դուս գայ, էս է ու-
ղում էի գնայ:

— Ախ նիկօլ ջան. իմ միղ չէ, իս քիւ եդ-
քան չի ման ածի դուսը. ամա պտուար էս
է հիմի քնից, մնամ վուր նա իմքին մաշուր է
անում:

— Իհ դուն էլ բան ասիր, էդքան սատա-
նութին վուր ունենայ, խօ իր համա էլ լաւ է:

— Չէ նիկօլ, խօ դիդիս ինչ Միկիտը գնա-
ցիլ է էլ զնջութին չէր աալի, էս իրիք օր է
հիդս էլ չէ կուում ու դիշնիկը ուշ է քնում:
էս օր վուր ճաշի վրա նստած էինք մէքաշ ա-
սում է մէ շաբթիւս էգնէն Միկիտը գութայ,
ասում է: Իժում թէ ունգ ու ունգդ ի՞նչի
գնաց, էստի հալաթ մէ բան կայ, սասաց Նի-
նօն շփոթված:

— Ինչ իս տուտուցութին անում, դուն վուր
դիւի էտու վրա իս փեքր անում, հէնց դիդիս

Թէ ուրիշներն էլ զիգին. դուն օղոնդ ուրախ կաց, մարթոփ վուր գայ հիդը քաղցր խօսի, սաաթ ու բէսաաթ լաց մի ըլն, իժում Թէ-դուզ ձեռս կու կտրիմ, Թէ օքմին իքմին իմա-նայ, ասուում էր Նիկօլը համբուրելով Նինօին:

— Լաւ իս ասում, Նիկօլ ջան, ամա իս է-տունք չիմ կանա անի, էլն սկեսրիս հիդ վունչիչ, ամա մարթոս վուր ձէն է տալն, վուր փաթըթ-վում է, հէնց գիդիմ դժուխքումը էրվում իմ: Հիմի դուրթի վուր նա շուտ գայ, ի՛նչ պիտի անիմ իս էնչախը, վունց պիտի խօսիմ նրա հիդ, վունց պիտի նրա էրէսին մտիկ անիմ: Նա վուր ինձ հիդ խօսի, հէնց կու գիդենամ այ հօրէս, կօսէ, Թէ չիս ամանչում, նա վուր մէկ քաղցր խօսք ասէ ինձ, հէնց կու գիդենամ շուբերով ին ինձ ծակծկում. երնէկ չարանում ըլն էլէ վրէս, երնէկ ծեծում ըլի էլէ, ամա իս ջէր նրամէն մէ չոր չիմ իմացի, ջէր նրա բերնմէն չէ դուս էկի առաջ իս նստած հիդ նստի: Ախ դէդի, ինչ էի արի իս քիզ, վուր էս օրը գցեցիր ինձ, ասաց Նինօն լաց ըլելով:

— Գիդիս ինչ է, Նինօ, էս մէ շաբաթ է քանի գալիս իմ, դուն գանգաւում իս ու լաց

իս ըլում, Թէ էսէնց պիտի անիս ասա, իս էլ չիմ գայ...

— Ձէ չէ, Նիկօլ ջան, էտ մի ասի, իս էլ չիմ լաց ըլն, չիմ գանգաւի, դիփ կու ծիծաղիմ, ողոնդ դուն ինձմէն ձեռը չը վիկալիս, նամուսէ-մէս ձեռը վիկալայ, խղճմտանքս Թաղեցի, կինքս էլ քիզ չարի փուխ ըլն, ողոնդ ինձ սիրէ, դիփ սիրէ, առաջ վայ պէս, վունց որ իմ աղջիկ վուխտն էիր սիրում, ետ Թէ չէ վիկալ ու ինձ սպանէ, առանց քիզ իս չիմ ուզում ապրի:

— Լաւ է լաւ հանաք էի անում... ամա էստի օքմին չը տեսնէ միզ, ասաց Նիկօլը:

— Հա դուրթ իս ասում, արի գնանք տուն: Նոքա մտան և մոռացան դուռը փակել:

V

Այս ժամանակը կապարմի առաջ անց էր կենում մէկ ձիաւոր: Նա ունէր հագին սև շալի չուխայ և շալաւար. չիթ ախալուխ, որի վրա կապած քամարից քաշ էր արած խանջալը, Թամբի ետեւից կապած է խուրջինը, իսկ առաջից ետինջի: Նրա քրտնած ձիուց երևում էր, որ այս մարդը բաւական երկար ճանապարհ է անցկացել, նա շուտ շուտ խօսում էր իր ձիու հետ...

— Ետլա եօրդա ջան, ասում էր նա մորտկը

բարձրացնելով և չը խփելով ձիուն, թաւիլէդ մօ-
ղիկ է, քիչ էլ է մնացի, էնդի կու դնջանաս, Նի-
նօն իր ձեռով ննդրած Կարի կու բերէ քի հա-
մո, ուրախ իս գանձ, ձեռն էլ կու բսէ քիզ,
ի՞նչիս անկրճՆիրդ սրում, հա մօ լօթի, իս
կօսիմ վուր պաչ էլ անի քիզ, գուզիս:

Այս ասելու ժամանակ Միկիտը (ձիաւորը
նա էր) մօտեցաւ իրանց թաղին, ձին զգալով
ախորի մօտիկութիւնը խրինջաց:

— Գուզիս, շարունակեց ծիծաղելով Միկիտը,
հայ մօ պաժարնի, թուրմէ կնգաս վրա աչքն
իս ունեցի, չը փախցնիս ու մաղբուն չանիս,
իժում միտկը չիմ... վահ:

Չին կանգնեց. Միկիտը նայեց քուչի դուռը
բաց է: Գուզ ջըլի էկի, ասեց նա ձեռքը խան-
ջալին տանելով: Կամոց կամաց Միկիտը մտաւ
բազր: Նա տեսաւ իրանց քնելու սենեակի կողքին
գտնված սենեակում մօմ է վառած, մօտեցաւ,
նայեց պատուհանից և ինչպէս կայծակնահար
մնաց անշարժ իր տեղը. սենեակի մէջ Նիկօլը
և Նինօն միմեանց գրկած նստած էին տախտի
վրա:

Մէկ քանի րօպէ Միկիտը մնաց կանգնած
անշարժ իրրեւ արձան, վերջապէս նա վեր-

թռաւ կատարած արիւծի նման և մտաւ սե-
նեակը թուանքը ձեռքին: Նինօն տեսնելով Մի-
կիտին խնայն ուշաթափվեց, Նիկօլը ուզում էր
բղաւի շօտկեցէք: Բայց չը կարողացաւ ձայն
հանել, նա վեր ընկաւ տախտից և չոքեց Մի-
կիտի առաջը, այս վերջինը գցեց Նիկօլի վե-
րա արհամարհական հայեացք, և մէկ կողմը
գրեց թուանքը, որը պատրաստել էր Նիկօլին
սպանելու:

— Վիկաց, վիկաց էդ կապկտրածին ու կո-
րէք հստղանցէն, տար Աստուած բալի վայե-
լումը տայ. ասաց Միկիտը իրան զսպելով:

Նիկօլը անշարժ կանգնած էր: Նա չը դիտէր
թէ ինչ անէ, ուր տանէ այդ ուշաթափ աղջիկը:
Միկիտը հասկացաւ նորա միտքը:

— Վիկաց էս սհաթիս, գոռաց նա ձեռք
խանջալին տանելով, թէ չէ փաշուկդ վերածի-
վերածի:

Միկիտը վերցրեց Նինօին մազերից և Նի-
կօլի շինքին աւելով՝ դուրս ձգեց երկուսին քու-
չէն և փակեց դուռը:

Միւս առաւօտը Միկիտի մայրը գաւա իւր
որդուն քուչի դրան ետեւը ուշաթափ:

965-2013
45



ՓՈՒՂԻ ԲԱԶԱՐ

Ինչ հարկաւոր է քեզ որդի, քո որդին փողն է, փողի համար ես աղօթք անում, փողը չինել ես քո Աստուածը:

(Ելն մէկ զոհ, վերջին գործ.)

I

Լաւ է, հերիք է, Միհրդատ, լացով էլ վուն- չեչ չես օտկի, իմ բանը պրծաւ, անգամ դի իմ վերջին խնդիրքին:

— Էտէնց մի խօսի, Կէկէլ ջան, ումիկս մի կտրի, դուն չես մեռնի չէ, սուտ ին ասում հե- քիմնիրը, ասաց գողալով Միհրդատը:

— Ինչ գուզէ ասին հեքիմնիրը, իս ինքս զգում իմ, վուր պիտի մեռնիմ, մի լաց ըլն ու վերջին խնդիրքս լսէ: Դուն լաւ զիդիս ինչ թա- ւուր կնիկ իմ էլն քիզ համա, էս տասը տարի է վունց իմ հիգդ լուծ քաշի ու ինչ օր էլ վուր քաշել իմ քու ձեռին էն էլ Աստծուն է յայտնի. հիմի քիչ էլ պիտի ապրիմ իս, խոստացի, վուր իմ վիրջի կամբը կու կատարիս:

— Սիրտդ պահէ, Կէկէլ ջան, Աստուծ օղոր- մած է, լաւ կուլիս, ասաց Միհրդատը լաց լի- նելով:

Հիւանդը անհամբերութիւն ցոյց տուեց:

— Կուլի վուր լանամ էլ, ասաց նա, ամա ասածս իմ լաւանալուն չէ դաշլա անում: Էս աշխրքի հիդ բաժնվիլը դժար չէ ինձ համա, մէնակ մէ գանձ իմ թողնում էստի ու էն էլ զիդիմ, լաւ օմքնու իմ պահ տալի միր վուր- թիքը, Միհրդատ, դուն նրանցն ու քունն Աս- տուծ, Ախ, Միհրդատ, լաւ պահէ նրանցը ու իս ամէն սահաթ իմ գերեզմանումը աղօթք կօնիմ քի համա: Դուն ջէր պառաւ չիս, համ էլ առանց տանտիկնի տուն չիս կանա պահի, ամա իմ երէկանցը մոէդ չը գցիս: Դս չիմ ասում քիզ, վուր դուն կնիկ չուզիս, էտ չի ըլի, ամա, վուր փիքը իմ անում, թէ կուլի իմ վուրթկե- լանց դէդի փուլը նրանցը զքնէ, իմ Մաշօի սիրուն աչքերեմէն արտսունք թափիլ տայ, հազար գամ մեռնելեմէս վաթար օրն իմ նընդ- նում, օրթում կի իմ մեռնելու սահաթով, վուր դուն նրանց համա համ հէր կուլիս համ մէր. օրթում կի, վուր դուն ոչովին չիս թողնի, վուր նրանց զէհին դիփչի... Մի միսթարի ինձ, Միհրդատ, շարունակեց հիւանդը, տեսնելով, որ իր ամուսինը կամենում է պատասխան տալ. իս քու խօսքին իմ մնում, քու ագնիւ խօսքին,

վուր դուն միր վուրթկերանցը մուղարթ կու
կենաս:

— Երգվում իմ, Կէկէլ, երգվում իմ քու վեր-
ջի օրերով, վուր քու տիպը բանիմ ու իմ բոլոր
կեանքը միր վուրթկերանց մինձացնելուն նուիրիմ:
Չէ, Կէկէլ ջան, դուն ինձ չիս ճանչնում, էն
տիպի պիտի ըլի վուր ինձ մօդ կանենայ քու տի-
պը բանի, ասաց Միհրդատը ընկնելով հիւանդի
անկողնակալի վրա:

Կէկէլը թոյլ ձեռքերով հեռացրեց նրան:

— Կնա մէ Մաշօին ղոգէ էստի, իժում մէ-
կէլ էրէխերանցն էլ կու տեսնիմ:

Միհրդատը դուրս գնաց սենեակից, երկար
նայում էր Կէկէլը նրա յետեւից, նրա աչքերը
լցվեցաւ արտասուքով, յետոյ նա շնչաց-
ածէր Աստուծ, դուն ըլիս դրա բարի միտք տը-
ւողը, վուր դա կանենայ իր խօսքը կատարի:

II

Այսպէս խօսում էին երկու ամուսիններ,
Միհրդատը և Կէկէլը, որը գունաթափ և թոյլ,
պառկած անկողնակալի վրա կտակում էր իր
վերջին կամքը Միհրդատին: Փոխանակ այս ան-
ցքը շարունակելու, մէկ հայեացք ձգենք Կէկէլի
անցեալի վրա:

Երաւանց հարսը, առաջ Թապիբինց աղջիկ
Կէկէլը հարուստ ծնողաց զաւակ էր, որոնք
սաստիկ սիրում էին նրան, որովհետեւ նա իր
ծնողաց սիրոյ առաջին պտուղն էր, շատ գե-
ղեցիկ և բնութիւնից ունէր սիրող և բարի
սիրտ: Ծնողները երբէք չէին կարող անբաւա-
կան լինել իրանց աղջկանից, որը երբէք չարու-
թիւն չէր անում և երբ հասաւ այն տարիքնե-
րին, որ նա կարող էր ուսում ստանալ, միշտ
լաւ էր պատրաստում իր դասերը: Կէկէլի սեւ,
երկար թերթերունքներով շրջապատված աչ-
քերը, նրա բաց ճակատը, միշտ տրամուլթեան
քողով էին ծածկված և երբ մարդ նայում էր
այդ տխուր աչքերին, մէկ անգամ բարեկամու-
թիւն էր զգում դէպի նա: Երևի այ ժամանակը
Կէկէլը միշտ հեռանում էր իր ընկերուհիներից և
քոյրերից՝ նա սաստիկ սիրում էր միայնակու-
թիւն և երբ մեծացաւ, այդ երևոյթը աւելի
կարելի էր նկատել նրա մէջ. նա միշտ դուրսն
էր մեր կանանց այն շրջանից, որոնց շատ սա-
ղում է ուրիշ մարիտ ապա՜ն անունը՝ «безгра-
мотная дурь»:

Երբ Կէկէլը դառաւ ութը տարեկան, նրա
ծնողքը նորան սովորաբար չը տուին ծափի պան-

սիօնը, կամ զաւերենիէն: Նոքա վարձեցին մէկ անպիւղացի վարժապետուհի: Թէ ինչպէս էր սո-
վորում Կէկէլը միստրիս Ջօնի մօտ, այդ կարելի
էր տեսնել նորանից, որ այս տիկինը միշտ սի-
րում և գովում էր նորան, իսկ միստրիս Ջօնը
այն կանանց թուից չէր, որոնք առատ գովա-
սանութիւններ են վատնում: Շուտ, ինչպէս ե-
րազ, անցաւ իննը տարին և Կէկէլը տասն և
եօթը տարեկան, «երկու հազար թումնաւուր
մարթու տալու աղջիկ էր»: Մեր պարոն, բեխե-
րը ոլորած Մարմարովներից շատերը ուրախ
ուրախ, ժպիտը երեսին մանում էին Քասլբինց
տուն, իրանց ձեռքը և սիրտը առաջարկելու
«Կէկէլէ Մարտիրոսովնէ», ինչպէս ասում էին
նոքա, բայց դուռը քաշ գցած յետ էին դառ-
նում: Վերջապէս Կէկէլը ընտրեց Շրտըրինց Մի-
հրդատին: Թէպէտ Կէկէլն ծնողները բաւական
լուսաւորված էին, ընդունում էին իրանց
տուն երիտասարդներին, բայց այնու ամենայնիւ
նոքա չէին թոյլ տալ իրանց աղջկան աւելի
մօտենալ նոցա, այնպէս որ Կէկէլը դրսից մի-
այն ճանաչում էր Միհրդատին. սորա հետեանքը
այն էր որ Կէկէլը զոջաց իր ընտրութիւնը,
բայց նա արդէն պսակված էր:

Միհրդատը առաջ ծառայում էր արքունի
դատարաններից մէկում, իսկ յետոյ, երբ մոց-
րին դատաստանական ըէֆօրման, դարձաւ փաս-
տաբան: Նա շատ բարի, ազնիւ և ազգասէր
մարդ էր յիշվում, գոնէ այդպէս էին ճանա-
չում նորան թիֆլիսեցիքը, որոնք եթէ մէկ
գործք ռնենային պաշտպանելու դատաստանի
առաջը, իսկոյն նորան էին յանձնում: Այդպէս
էր ճանաչում նորան և Կէկէլը մինչև նոցա
ամուսնութիւնը, բայց յետոյ նկատեց, որ
սխալուել է: Նա տեսաւ, որ իր ամուսնոյ բա-
րի դիմակի տակը ծածկված է եղել մէկ դար-
շելի մարդ սաստիկ շահասէր, կեղտոտ և ժլատ:
Արդարեւ Միհրդատը, եթէ մէկ գործքի մէջ
տեսնում էր իրան մէկ քանի ռուբլի շահ, ամէն
ճանապարհ պատրաստ էր գործ գնել այդ փո-
ղը ստանալու: Եթէ Միհրդատը բժիշկ լինէր
և նորան առաջարկէին հազար ռ., նա իր
հիւանդին համարձակ կուղարկէր երանելի մար-
գերը առողջանալու համար: Փողը նա շինել էր
կուռք, որին երկրպագութիւն էր տալիս, փողն
համար նա ամէն բան կը զոհէր՝ նորա անունը,
նորա պատիւը, նորա ընտանիքը նշանակութիւն
չունէին, երբ մէջտեղը փող կար: Փողն համար

Նա աշխատում էր անուանի մարդ լինել, փողի համար նա ամուսնացաւ։ Կէկէի հետ և փողին կը զօհէր իր կնոջը, եթէ հարկաւոր լինէր։ Այս ամէնը իմացաւ Կէկէլը, նկատեց, որ իր ամուսինը չարժի իրան և այս միտքը աւելի դժուար էր, որովհետեւ նա իր կամքով ուզեց Միհրդատին, ինքը նորան ընտրեց։

Միհրդատը պսակվեց և վեց տարի ապրում էր իր աներոջ տանը, ասելով, որ լաւ տուն չէ կարողանում գտնել։ Այս միջոցին նորան պատահեցաւ լաւ տուն, որը պարսքի համար ծախվում էր գրեթէ ձրի։ Միհրդատը առաւ այդ տունը և այն ժամանակը միայն մտածեց դուրս գնալ իր աներոջ տանից և այն էլ Կէկէլի շատ աղաչանքներից յետոյ։ Այդ տունը շատ գեղեցիկ էր և գտնվում Թիֆլիսի ամենալաւ փողոցների վրա։ Շատ խեղճ մարդ անցնելիս այդ տան առաջը, նախանձոտ հայտնեցներ էր գցում նորա վրա, բայց չը գիտէր թէ այդ գեղեցիկ խնձորի մէջ ինչպիսի ճիւղ կար ծածկված, թէ այդ փայլուն շինուածքի տանտիկինը ինչպիսի վշտերով էր խեղդված։ Շատ անգամ այդ դրսից փայլուն արկնոջը կարելի էր տեսնել միայնակ, ախուր նստած սե-

չէր ցոյց տալի, որ նկատում է իր ամուսնոյ կեղտոտութիւնը, ընդհակառակը նա ամէն միջոց գործ էր գնում Միհրդատի կամքը կատարելու և միշտ աշխատում էր, որ միւսները չը նկատեն թէ ինքը անբաղդ է։ Վինձ ով ինչ կու օտկէ, վուր խալխին գանգառւիմ, մէկ ննգիլ իմ էս օրը, պիտի զլուխ էլ դուս տանիմ, ապում էր նա միշտ։ Բայց նա չէր կարող գլուխ դուս տանել, որովհետեւ անչափ հոգսերից և ցաւերից նորա մէջ երեւում էին բարակացաւի նշաններ և հետզհետէ արմատանում, այս բանը ինքը ևս նկատում էր։ Մաշօն, այսպէս էր Կէկէլի աղջկայ անունը, դառաւ երեք տարեկան, նա այլ ևս չէր տրտնջում։

Ինչքան Կէկէլը, բնութիւնից արդէն թոյլ, նուազանքում էր, այնքան Մաշօն գեղեցիկանում էր և փարթամանում։ Ինչպիսի սիրով Կէկէլը նայում էր իր աղջկան, ինչպէս ուրախացաւ, երբ լսեց երեխայից առաջին մայր բառը, որը ամէն կնոջ համար երջանկութիւն է, ինչպիսի հաւեսով նա առաւօտից մինչև երեկոյ սովորացնում էր երեխային մանգալ և հիմա, երբ Մաշօն հինգ տարեկան է, ինչ զուարճութիւն է գգում խեղճ մայրը, երբ նա, ենթարկված ե-

նեակի մէջ, շատ անգամ նորա շրթունքներից կարելի էր լսել յանդուգն խնդրք, որ Աստուած նրան շուտ մահ ուղարկէ: Կէկէլը հանգիստ չունէր. նա, ինչպէս աւագն մէջ անկված վարդ, կամաց կամաց չորանում էր. մէկ հանգամանք փոխեց նրա դրութիւնը:

III

Երեք տարի Կէկէլն ամուսնութիւնից յետոյ, նա դարձաւ մայր գեղեցիկ աղջկայ բոլորովին իրան նման: Այս բանը Կէկէլին յոյս տուեց: Նա ինքը կաթը տուեց նորան, ինքը մեծացրեց երեխային, նա չէր կարող իր միակ յոյսը յանձնել «նեանկա» և «կարմիլեցաներին», որոնց արհամարհում էր:

Վեց տարից յետոյ նա վեց ուրիշ որդկերանց մայր եղաւ: Կէկէլը կարողացաւ կերակրել իր կաթնով միայն Մաշօն, իր աղջկան, իսկ միւսների համար դայեակներ բռնվեցան, որովհետեւ ինքը թոյլ էր: Երեւակայեցէք ձեզ Կէկէլն զրութիւնը, երբ նա մէկ անգամ տեսաւ իր ամուսնուն, համբուրելիս իր երկրորդ որդու ուսու դայեակին և միթէ միայն այս էր, ոչ. սա ատումն էր այն կեղտոտութիւններինը, որ Միհրդատը չէր ամաչում անել: Կէկէլը երբէք

րեխայի խորը և խելացի հայեացքին, սովորացնում է «չայր մեր» ասել. արան էլէ խղճայ Աստուծ, մի սպանի ինձ, իմ էղնէն ում ձեռը պիտի ննգնիս, ասում էր նա:

Այժմ Կէկէլը մահ չէր խնդրում, ընդհակառակը նա ուզում էր ապրի: Միայն լոկ միտքը, որ նա պէտք է բաժանվի իր աղջկանից, որ նորա օտար Մաշօն, պէտք է Միհրդատի ձեռքը ընկնի, որ Միհրդատը ուրիշի հետ կը պսակվի, որովհետեւ նրան կը տան 20 կարելի է 30 հազար ռ. փող և Մաշօն պէտք է ուրիշ կնոջ տայ մայր անունը, նորան յուսահատութեան անդունդն էր ձգում: Այժմ նա նախանձում էր մէկ կնոջ այնպիսի վիճակին, որը նրա համար գերեզման փորեց՝ և ով է խմանում, ինչպէս կը վարվեն իր աչքի լուսի հիդ, ինչ թաւուր ուսում կուտան: Հազար ու մէկ այսպիսի մտքեր ծնում էին խեղճ մօր գլխումը և նորա աչքերից առատ արտասուքներ թափել տալի:

Յայտնի է, որ եթէ մէկը որ և իցէ վեշտ ունէ և մի և նոյն ժամանակը սրտացաւ բարեկամ, այդպիսի բարեկամին իր հոգսը պատմելով, նա իր բեռը թեթեւցնում է: Բայց

նում կարող էր պատմել Կէկէլը. երեխան նորան չէր հասկանայ, իսկ ծնողներին ասելը նորա ինքնասիրութիւնը չէր ներում՝ ծնողները ամեն հնարք գործ զրին նրան բաղդաւորացնելու համար. Կէկէլին նշանակված էր տանել խաչ, որի բարձրացնելը նորա ոյժերը չէին ներում և նա տանում էր լուռ առանց տրտունջ, — մինչև կրնկներ այդ ծանր բեռան տակը:

Սրանից յետ նա երկու տարի հիւանդ էր, և նորան դեղ էր տալի մէկ էփանագին բժիշկ: Բայց երբ Կէկէլի հիւանդութիւնը սաստկացաւ, Միհրդատը ստիպված էր հրաւիրել և ուրիշ բժիշկներ. նոքա կազմեցին «consilium» և տրւին մահուան վճիռ: Բժիշկներին խորհուրդը հիւանդի զրացի սենեակի մէջն էր. նա լսել էր նոցա դատակնիքը և ինքն էլ զգում էր, որ մահը մօտենում է իրան: Նա ցանկացաւ խօսել իր ամուսնու հետ, յանձնեց նորան իր որդիքը: Երբ նորա ամուսինը դուրս գնաց, Կէկէլը ցանկանալով նորան ոյժ իր խոստումը կատարելու, նուազ ընկաւ անկողնակալի վրա, ծածկեց աչքերը և սկսեց մտածել իր աղջկայ վրա:

«Գէրիս կու մտէն պցէ Մաշօն իրան, գէրիս

ուրիշին էնէնց կու սիրէ, վունցօր իրան էր սիրում թէ դարդ կօնէ ու կու մեռնի»:

IV

Հինգ րօպէ չանցաւ մի և նոյն դուռը, որ տեղեց դուրս գնաց Միհրդատը, բացվեց և սենեակը մտաւ փոքր աղջիկ, եօթը տարեկան: Երեխան բոլորովին նման էր Կէկէլին, այն զանազանութիւնը միայն կարելի էր նկատել նոցա մէջ, որ Մաշօի թշերը վարդի նման կարմիր էին, նորա խուճուճ մազերը կարգի սանրած, իսկ մայրը գունաթափ և հիւանդ էր: Մաշօն մտաւ սենեակը և անհամարձակ կանգնեց դրան մօտ. պատուհանի կիսաբաց ստաներից նուազ լոյս էր մտնում, մահուան լուծիւնը տիրել էր սենեակի մէջ, նորան խանգարում էր հիւանդի ծանր շնչառութիւնը: Երեխան մօտեցաւ անկողնակալին:

— Մամաշա, ասաց նա կամաց:

Կէկէլը աչքերը բաց արաւ:

— Պապէն շրգից, աւելացրեց Մաշօն, իբր թէ կամենալով իրան արգարացնել, որ համարձակվեցաւ իր մօր հանգիստը խանգարել:

— Լաւ առաւ, գննացուէ, մօզիկ արի՛ նստի կրաւատիս վրա, ասաց հիւանդը:

Մաշօն նստեց: Կէկէլը վերցրեց նորա փոքր, գեղեցիկ ձեռքերը և երկար, տխուր հայեացք ձգեց նորա մանկական դէմքի վրա: Եւ ինչ չը կար այդ հայեացքի մէջ: Մայրը, քսան և եօթը տարեկան մայրը բաժանվում է իր անդրանիկ, իր սիրելի աղջկանից, բաժանվում է յաւիտեան... սէր, տրամուլծիւն, հեղուլծիւն, այս բոլորը կարելի էր կադդալ նրա արտասուածից աչքերում:

Ինչ չէր տայ արդե՞օք խեղճ հիւանդը, եթէ կարողանար երկարացնել այս ըրպէն: Աղջիկը աւելի մօտիկ կալաւ իր մօրը, կարծես նա զգում էր որ իրանից պէտք է խլեն իր ծնողը:

— Մաշօ ջան, ասաց վերջապէս Կէկէլը, իս գնում իմ, էնդուր կանչեցի քիզ, մնաս բարով:

— Ուր իս գնում, մամաշա, հարցրեց Մաշօն:

— Ուր... ասաց հիւանդը և նստեցաւ իր անկողնակալի վրա, իս գնում իմ միր Հօր մօդ, նա ինձ կանչում է:

— Իս էլ գուքամ, մամաշա:

— Չէ, Մաշօ ջան, քունը ջէր վուխտու չէ, դուն ջեր պիտի մինձանաս, պառուխ ու իժում... իս աղանչաք կօնիմ, վուր նա քիզ ուշ կանչէ:

Չէ մամաշա, աղանչաք արա, վուր չուտ կանչէ, իս ուզում իմ քիզ մօդ ըլի:

— Իս դիմ քի մօդ կուլիմ, Մաշօ ջան, պատասխանեց Կէկէլը, դուն ինձ չիս տեսնի, ամա իս քիզ դիմ կու տեսնիմ, իմ հօղին կէհայ միր Հօր մօդ, իժում ինձ ժամը կու տանին՝ բաբուշկէն ու տեօտեն քիզ էլ կու բերին, իժում ինձ ժամեմէն կու դուրս տանին ու էլ դուն ինձ չիս տեսնի: Բաբուշկէն էլ կու լաց ըլի, տեօտէն էլ, պապէն էլ, ամա դուն մի լաց ըլի չիս լաց ըլի:

— Կու լաց ըլիմ, մամաշա, Աստուծ գիղենայ կու լաց ըլիմ, ասաց արտասուելով Մաշօն:

— Իտ լաւ չէ, չիս պիտի լաց ըլի, միսկ է գենացուալէ. իս ուզում իմ, վուր դուն չը լաց ըլիս:

— Կու լաց ըլիմ, մամաշա, ինձ էլ տար, իս էնդի խելօք կու կենամ. քու հօքուն մեռնիմ ինձ էլ տար, մամաշա, աղաչում էր Մաշօն:

— Չէ էդ չի ըլի... իս վուր գնամ, Մաշօ ջան, ինձ քու օրումը մոէտ չը գցիս. դիմ փիքր արա, վուր դուն մամաշա ունէիր, վուր նա դնաց Ասծու մօդ, վուր նա քիզ աշխլքի էրէսին ամեն բանեմէն շատ էր սիրում... ո՞վ

է քու մամաշէն, Մաշօ ջան:

— Դուն, մամաշա:

— Հա իս իմ, միտդ պահէ, վուր իս իմ քու մամաշէն ուրիշ ոչով. ու քիզ խիստ իմ սիրումս Հիմի «Հայր մեր» ասա:

— Հայր մեր, ինձ էլ տար մամաշի հիդ, ինձ էլ կանչէ, Աստուծ զիդենայ իս Քի մօդ խելօք կու կենամ, աղաղակում էր Մաշօն, իր փոքր ձեռքերը բարձրացնելով և լաց լինելով:

Երկար ժամանակ նա չէր լսում իր մօր խօսքը, կրկնում էր, որ մեր Հայրը նրան էլ տանէ իր մամաշի հետ, վերջապէս Կէկէլը ստիպեց նրան «Հայր մեր» ասել:

— Մտէդ չը գցիս, Մաշօ ջան, ամէն առու տեան ու իրիզուն «Հայր մեր» ասա, կօսի՞ս:

— Կօսիմ, մամաշա:

— Հիմի գնա, ախպրտեանցդ կանչէ ու պապին ասա, վուր բարուշկին ու տեօտին էլ բերէ, ասաց Կէկէլը և երբ երեխան գնում էր, մայրը յետ կանչեց նրան և կրկին հարցրեց ո՞վ է քու մամաշէն, Մաշօ ջան:

— Դունիս մամաշա, պատասխանեց նա, զարմանալով, որ եկու անգամ այս հարցը առաջարկեցին նորան:

— Հա, Մաշօ ջան, ի՞ս իմ քու մամաշէն, հիմի գնա, ասաց նա Մաշօին զրկելուց յետոյ:

Շուտով եկան հիւանդի սենեակը Միհրդատը, Կէկէլը մայրը և քոյրը, որոնք նրա խնդրելով էին դուրս գնացել սենեակից և երեխաները: Կէկէլը խնդրեց որ պատուհանը բաց անեն և իր անկողնակալը մօտեցնեն նրան: Նորա խնդիրքը կատարեցին:

Ապրիլ ամիսն էր, արեւը մայր էր մտնում: Փոքրիկ այգին, որ դռնվում էր Միհրդատի տան առաջը սկսել էր ծաղկել, նա նորից կեանք է ստանում, ծիծեռնակները մէկ քանիսը նստած, միւսները թռչելով երգում էին և ողջունում դարնան գայը, թիթեռները մէկ բոյսից միւսն էին թռչում:

Կէկէլը տեսաւ այս ամենը և իր երեսը դարձրուց դէպի սենեակում դռնվողները. նա ամենքին զրկեց և համբուրեց և Մաշօին իր անկողնակալի վրա նստեցրեց: Կրկին անգամ նայեց Կէկէլը դէպի այգին. այդպանը կանգնած բահը ձեռքին մշակում էր մէկ անկիւն: Կէկէլը զրկեց Մաշօին. նա մտածում էր՝ այս փոքրիկ այգու համար մարդ կայ, որ աշխատում

է մշակել նրան, արդեօք ով պէտք է մշակի իմ երեխայի մանուկ զգացմունքները:

Միւս օրը Կէկէլը հոգին աւանդեց, իր գըրկումն ունենալով Մաշօին:

V

Երեք օրից յետոյ Կէկէլին թաղում էին: Խեղճ Միհրդատ. ի՞նչ զրուծեան մէջն էր նա: Ինչպէս նորա փոքր քաջերը ուռել էին արտասուէքներով, երեսի գոյնը գնացել, սերթուկը իր կտրած մաղերով ծածկվել: Ինչպէս աշխատում էր եկեղեցումը կանգնած չը լաց լինել, բայց ժամանակ առժամանակ յանկարծ գոռում էր «Կէկէլ ջան», ի՞նչպիսի հերոսութեամբ նա համբերում էր: Բայց երբ աւետարանը խորանից դուրս բերին, նա գնաց համբուրեց, յետ դառնալու ժամանակը տեսաւ իր կնոջ դադաղը և ուշաթափվեց, նորան դուրս տարան եկեղեցուց: Մէկ քառորդ ժամ պ. Մ. բժշկապետը գործ էր դնում իր հոտ առնելու բոլոր դեղերը, բայց նոքա չէին օգնում: «Աստուած բարի տայ ուստայ Կոմիտին», մինչև նա չը մօտեցաւ Միհրդատի ականջները չը քաշեց և նորա քթում սպիչկա չը վառեց, նա անզգայ էր, բայց երբ ուշկի եկաւ այնպիսի հայացք

չգեց խեղճ ուստայ Կոմիտի վրա որ նա ամիան ծակը հարուր թռնաւ ի կառնէր...

Կարգը կատարեցին և ննջեցեալը դուրս էին տանում, ինչ սուգ և կոծ բարձրացրին Կէկէլի բարեկամները, Մաշօն, նա մանաւանդ Միհրդատը:

Նա գրկում էր հանգուցեալը, նորա խաչած ձեռքերը հեռացնում էր և համբուրում... Միհրդատը սկսեց հազալ, նորան հեռացրին գազաղից:

— Վայքի, վայքի, վայքու կօկօք օրին Կէկել, վուր էտէնց չուտ խաւրեցաւ, ասաց Խօխօինց պառաւր:

— Էրնէկ գիգենամ, ինչ իս ասում, բատօնօ, պատասխանեց Կիրակոսեանց Օսանէն, քսանու ութ տարեկան որբւերին, նրան ի՞նչ նա մէջ գամ մեռաւ ու պրծաւ, վայ նրա մարթու միխկը, վուր անտէր ու անտիրտկան մնաց էս փուշ աշխրքումը:

Վ ուրվեւերութիւնը հիշտ չէ, աւելացրեց նա հոգոց քաշելով, էտ բանը ինձ հարցրու:

VI

Մէկ ամիս անց էր կացել Կէկէլի մահից յետ: Միհրդատը Կէկէլի հօրանց տանը խօսում էր նորա մօր հետ:

— Էհ, դէդի ջան, էտով էլ վունչեչ չի՛

դառնայ: Իս էլ շատ լաց էլայ, շատ գլուխս վայ տուի, շատ մաղերս գջլտեցի, ամա վուն-
չեջը չօտկից. Կէկէլը չը կենդանացաւ: Ելն ասի
էրէխէրքս միսկ ին, նրանց խաթիր էլէ
գլուխս պահելով անիմ: Ախ, Կէկէլ, էս օինն էլ
էկար գլխիս էլն, ասում էր Միհրդատը հառա-
չելով:

— Այ քու դէղին, Կէկէլ ջան, ասում էր
Կէկէլն մայրը:

— «Իմ Մաշօին ուրիշի ձեռը չը գցիս», ասում
էր ինձ մեռնելու առաջ Կէկէլը, բաս վունց ա-
նիմ, հօրս ու մօրս հիդ կռված իմ, նրանց
մօդ գնալ չի ըլն, ո՛ւր գնամ ու ո՛ւր կորչեմ:
Քօծն ու բիջը խօ տունն ու ախոս գուղը թնոյ
վիր գցեցին ու երէխէրանցս կոտորեցին, ասում
էր Միհրդատը գանդատվելով:

— Ել ի՞նչ ասիլ դուզէ, վուրթի, քօծի ու
բջի աբով իմ դուշմանը չը ննգնի. անողլուշադ
մարթը դժար է, ասում էր Կէկէլն մայրը:

— «Ա, դէղի դժար է, ամէն վուխտ մարթ
խօ տանը չի ըլն, մնում ին էրէխէրքը քօծե-
րու աբով ու նրանք էլ մէկ ձէն ին հանում
թէ չէ «գորս դու պատուիրեցիր», սիլէն շխպեց-
նում ին:

— Ուրիշ չարա չը կայ, պիտիս գուվերնանկա
բռնիս, էրէխէրքդ միսկ ին, վուրթի:

— Էհ վունց կուշի, դէղի, ասում էր նեղա-
նալով Միհրդատը, գուվերնանկէքը էրէխանցը
խարաբ ին անում. համ էլ, դէղի ջան, թազա
վուրփեվերի իմ, խօ կու ճանձնաս միր քաղիի
խալխին, ո՞վ գիգէ ինչիւր մօգօնին:

— Այ թէ գուզ իմ իրկրուրդ վուրթու ռուս
ձիձէն խօ կնգաս վուխտն էլ միր տանն էր,
ամա հիմի ի՞նչ ասիս ասում ին:

— Իսս ի՞նչ պիտիս անի, վուրթի, հալցրեց
Կէկէլն մայրը հառաչելով:

Ինչ պիտի անիմ, դէղի, էլն իմ չարէն դուն
իս, եա դուն պիտի գաս միր տունն կենաս, եա
իս ձիր տանը, էրէխէրքս միսկ ին, ասաց Մի-
հրդատը:

— Իմ գալը չի ըլն, փեսայ ջան, էլն դուն
պիտի գաս. իս իմ տունը չիմ կանա մօշլա անի:

Այն օրը երեկոյեան տասը մշակ Միհրդա-
տի տան կայքը բերում էին Փասլիբինց տուն:
Ինչ անիս Փասլիբինք «Փասլիբը ննգան»: Շա-
րունակ երեք տարի այսօրից Միհրդատը կե-
նում էր իր աներանց տանը և ինչքան շահվեց
իր կացած տան քրէհն էր վերցնում և ձրի

ապրում էր, Կէկէլի մօրն էլ նա իւր երեխանց դայեակ էր շինել:

Մաշօն մեծանում էր և իր մայրը նրա գլխից չէր դուրս գալի: Միշտ հեռու իր եղբայրներից, նա նստած էր լինում մէկ անկիւնում և մտածում էր: Նորա գլխից չէին դուրս գալի իր մօր ասած խօսքերը. «Իս դիւի քի մօդ կուլիմ, դուն ինձ չիս տեսնի, ամա իս քիզ կու տեսնիմ և նա երբեմն իր մայրը որ և իցէ մութը անկիւնում կանգնած ժպտում էր, նայելով Մաշօի վրա և ի՞նչպէս այս րօպէներում Մաշօն ուրախ էր լինում, ի՞նչպէս նրա երեսը ոգևորվում էր. բայց շուտ երևոյթը փոխվում էր և նա միտքն էր բերում իր մօրը, պառկած մահուան մահճի վրա, միտքն էր բերում նորա տխուր ժպիտը և երկու անգամ կրկնած հարցը. «Ի՞նչ է քու մամաշէն»: Այս խօսքերը խորը թափանցել էին նորա մանկական սիրտը. . . բայց թողնենք Մաշօին և նկարագրենք մէկ անձն, որ փոքր դեր չէ խաղում այս անցքի մէջ:

VII

Նիլդերդօինց հարս Դարինկէն, բաւական հարուստ որբւերի էր. նա ունէր մէկ պրօցէս

«Միրօվօի սուգում», որը եթէ իրան կողմը վճռէին, նա կը ստանար երեսուն և հինգ հազար ռուբլուց աւել: Դարինկի հակառակ կողմը իրանց գործը յանձնել էին Միհրդատին, որը հաւատացնում էր, որ ինքը կը կը տանի, որովհետեւ այնպիսի թղթեր ունի իր ձեռքին, որի գոյութիւնը Նիլդերդօինց հարսը չը գիտէր, եթէ ոչ նա բոլորովին չէր սկսի այդ գործքը: Այս լուրը հասաւ Դարինկին և նա ցանկացաւ ծանօթանալ Միհրդատի հետ: Նորա ցանկութիւնը շուտով կատարվեցաւ. մէկ առաւօտ, տասերկու ժամին, Միհրդատի Ֆայետօնը կանգնած էր Նիլդերդօինց հարսի պապեզդի մօտ:

Միհրդատը այնպիսի բարի էր, այնպէս քաղաքավարի, որ առաջին անգամից Դարինկէն չէր կարող նորա հետ գործքի վրա խօսել, այդ պահանջում էր քաղաքավարութիւնը: Երբ Միհրդատը գնում էր քաղաքավարութիւնը: Երբ Միհրդատը գնում էր, կրթեալ տանտիկիներ խնդրեց նորանից կրկնել իր այցելութիւնները: Ի հարկէ Միհրդատը երջանկութիւն համարեց իրան համար լսել այդպիսի հրամանք, d'une belle dame, ինչպէս Նիլդերդօինց հարսն էր:

Այս օրից Միհրդատը ամէն օր այցելում
թիւն էր անում Դարինկին և ինչպիսի, ինչ-
պիսի խօսքեր չէր ասում խեղճ, անվորձ տիկ-
նոջը, ինչպէս նորա բարձր սկսած ճառը կա-
մաց կամաց հասնում էր քչփշոցին և ինչ
քաղցր խօսքեր էին, այսինքն կիսախօսքեր, ու-
րովհետեւ երբ մարդ քչփշում է միւսի հետ,
նա միայն խօսքերի սկիզբն է ասում, իսկ միւսի
երեւակայութիւնը թամամեցնում է մնացա-
ծը՝ այնքան այդ ժամանակը նոցա հոգիքը մի-
մեանց համակրում են: Դուք, սիրելի կարդա-
ցող, մեղադրում էք որբւերին, մանաւանդ
Դարինկին, ոչ մի անէք այդ բանը աղաչում
եմ: Հարկաւոր է ձեզ միայն մէկ հայացք ձգել
խեղճ Շիրքըրըզօինց հարսի վրա, միայն տես-
նել թէ ինչպէս անմեղ տիկնոջ բերանի ջուրը
դնում է, թէ ինչպէս գլուխը ժաժ տալով և
քնքոյշ ժպիտով նա ասում է իր հետ խօսողին
«ինչ հանաքչի իք» և դուք իսկոյն կը փոխէք
ձեր վճիռը, եթէ ոչ դուք անզգայ, անգութ
կը լինիք:

Վեց տարի, երեակայեցէք, ամբողջ վեց
տարի Դարինկէն որբւերի էր, ամբողջ վեց
տարի նա այդպիսի խօսքեր չէ լսել և առաջ

էլ, թէպէտ իր ամուսինը սիրում էր Դարին-
կին, թէպէտ նա էլ մէկ քանի սիրոյ դաս էր
առել «Ռօնժուանից», բայց այնու ամե-
նայնիւ սիրոյ բառերը նորա շրթունքների վրա
այսպիսի քաղցր շնչին չունէին և մի և նոյն
ժամանակը նա այնքան անտանելի էր, որ այդ
քաղցր ըօպէներում ասում էր. «էսօր մէ թօփ
ատլաս ծախեցի արշինումը մէ աբասի դադում,
եարսուն արշինս կօնէ վից մանէթ... գեղեցիկ
ռուս քօծը դափա է բերում:

— Համեցէք, ասում է Դարինկէն:

— Շնորհակալ իմ, չիմ ուզի, պատասխանում
է Միհրդատը:

— Ի՞նչի, հարցնում է որբւերին:

— Ղափա խմելիս չիմ կանա ձիզ մտիկ տայ:

— Հիհի հիհի, հի, քնքոյշ ծիծաղում է Դա-
րինկէն և վերցնելով իր ահագին, կարմիր, նէժ-
նի ձեռքերով բաժակը, դնում էր Միհրդատի
առաջը:

Գրէթէ ամբողջ ամիս Միհրդատը շարուն-
ակում էր այսպէս իր յարաբերութիւնները
Շիրքըրըզօինց հարսի հետ, վերջապէս մէկ օր
նա առաջարկեց Դարինկին իր տան համեստ
տանտիկնութիւնը:

— Իս էնդուր իմ հիմիսկեւէդ ասում ձիդ, վուր մէ շարթուա էդնէն ձիր գուրծն է, ասում էր Միհրդատը, կուլի ձիր կուրը կտրին իժում կօսիք թէ՛ փուղի խաթիր ուզեցի ձիդ:

— Օ էտ ինչ իք ասում, Միհրդատ, իս աւա-
տում իմ ձիր ազնուութենին ու գիգիմ, վուր
փուղը ձիդ համա վունչիչ է, ասում էր քըն-
քշութեամբ Նիլգըբըզօինց հարսը:

— Բաս իս ումիկ ունենամ, վուր դուք կու
համաձայնէք:

— Համեցէք էս մատնիքը, ասաց Դարինկէն:

— Ամա, ինչկի գուրծը վերջանայ, միր նըշ-
նուիլը ոչովուն չասիք. կուլի գուրծը դուք սա-
նիք իժում կօսին վուր իս ղասիդի տանուլ
տուլ:

Սէկ շարթից յետոյ Նիլգըբըզօինց հարսի
գործն էր դատարանում: Միհրդատը գործքը
տանուլ տուեց, Դարինկէն ստացաւ երեսուն և
հինգ հազար ուրբի: Միհրդատի տանը կորել
էին այն թղթերը, որոնցով նա անպատճառ
գործը կը տանէր յօգուտ Դարինկի հակա-
ռակորդների և ցաւալին այն էր, որ ապեւա-
ցիա չէր կարելի տալ, որովհետեւ երկու կողմը
ևս խնդրել էին դատաւորից, որ նա գործը

վճռի հիմնվելով դրաժդանակի ղակօնի երե-
սուներորդ յօդուածի վրա:

VIII

Ամառն էր, երեկոյեան ութ ժամը, արեւը
մայր էր մտել: Կէկէլն մայրը նստած տախտի
վրա նայում էր Մաշօի երեսին, որը իր գլուխը
դրել էր մեծ մօր ծնգանը և աչքերը խփած,
պառկած էր: Կէկէլն մայրը, նայելով Մաշօի ե-
րեսին մտաբերում էր իր հանգուցեալ աղջկան:
Նա չէր կարողանում ջոկել Մաշօին Կէկէլից
այնքան նամանութիւն կար այս երկուսի մէջ, ո-
րոնց դէմքը, բնութիւնը և վարմունքները չէին
զանազանվում: Ինչպէս շատ անգամ Կէկէլն էլ,
երբ նոր սկսում էր մթնել և սենեակի մէջ
մօմ չը կար, գալիս էր իր մօր մօտ, նորա
ծնգան վրա դնում էր իր գլուխը և սկսում էր
մտածել, քանի անգամ սրտացաւ ձեռքերով
նա վերցրել է իր շալը և ծածկել երեսային,
որ ինչ է չը մրսի. բայց նա աչքերը բաց է
արել և հեռացնելով շալը ասել է «քնած չիմ,
դէդի»: Պառաւի երեւակայութիւնը տանում է
նորան աւելի հեռու, նրանք դնացել են Սրթա-
ճալա իրանց բաղը, Կէկէլը գնացել նստել է
ծառի տակը և նայում է թէ ինչպէս ծտերը

մէկ ծառից միւսն են թռչում, ի՞նչպէս այս ճիւղին վրա իրանց բունի մօտ նստած թռչունքը երգում են, իսկ միւսը թռչելով մօտենում է բնին, որից փոքր դուխերը բերանները բաց անելով, ընդունում են իւրեանց մօր բերած կերակուրը, հոգի փչում է և բոլոր տերևները սկսում են շարժվել, միմեանց քսվիլ և տալիս են մէկ ընտան կօնցերաւ. Կէկէլը վեր է կենում իր տեղից, մօտենում է ջրին և իր ոտները նորա մէջն է դարսում: Արտասուքները սկսեցին վազել պառաւի թշերի վրա. «Կէկէլ ջան, Կէկէլ», փնթփնթաց նա: Մաշօն աչքերը բաց արաւ, նա քնած չէր, նա էլ իր մօր վերա էր մտածում:

— Բարուշկա, ասաց նա, մամաշէն վուր մեռնում էր երկու դամ ինձմէն ի՞նչի հարցրեց թէ ո՞վ է իմ մամաշէն:

— Գանա քնած չիս գէնացուալէ, հարցրեց պառաւր:

— Չէ, բարուշկա, մամաշէն մեռնելու վրա էի փիքը անում. . . ի՞նչի հարցրեց հըա, բարուշկա:

— Էնդուր, Մաշօ ջան, վուր նա հէնց գիդէր թէ քու պապէն կնիկ գուզէ ու նա կուլի քու մամաշէն:

Երեխան կրկին անդամ ծածկեց աչքերը և սկսեց մտածել: Պառաւր իր չորացած ձեռքը սկսեց քսել Մաշօի մազերին. «սա վուր չըլի ի՞նչ կուլի իմ հայը», մտածում էր նա:

— Իժում, բարուշկա, պապէն գուզէ կնիկ, հարցրեց Մաշօն փոքր ժամանակից յետոյ:

— Չիմ գիդի, գենացուալէ, կուլի, վուր ուզէ էլ պատասխանեց պառաւր. ի՞նչի վրա իս հարցնում:

— Իս ուրիշ մամաշա չիմ ուզի, բարուշկա: Իմ մամաշէն իս ամէն օր տեսնում իմ, ամէն օր ինձ հարցնում է. ո՞վ է քու մամաշէն, իս էլ ասում իմ գուն իս ու իժում նա ասում է. «հա իս իմ, ուրիշ ոչով, իս քիզ խիստ իմ սիրում», այ հիմի էլ, վուր պառկած էի, իս նրան տեսայ. սպալնումը պառկած ինձ մօրիկ էր տալի ու. . .

Դուռը բացվեց և սենեակը մտաւ Միհրըրդատը, երեխան վեր կացաւ և մօտեցաւ նորան:

— Բարով Մաշօ ջան, ասաց նա հեռացնելով երեխային և մօտենալով իր զօնքէն, բարիգուն, գէդի, աչկո լուս, գիդիմ կու ուրախանաս, իս նշովեցայ Շիլդըրըդօինց հարսի վրա:

Պառաւր մնաց շուարված, քիչ էր մնում, որ թուլանար. նա դիդէր, որ իր փեսան մէկ օր կին պէտք է առնէ, բայց այս լուսինն չէր սպասում այդպիսի համբաւի:

— Ի՞նչ պատահեցաւ քիզ, դէդի, շարունակեց Միհրդատը, բէգամաղ էլա՞ր:

— Չէ, վուրթի, ասաց նա, հազար գուգէ բէգամաղ ըլիմ, ինչ կանամ շինի:

— Բաս մէ ասա էրէխէրանցը հագցնին պիտի տանիմ, ճանանչեցնիմ իրանց թաղա մամաշի հիդ:

Մաշօն լուռ կանգնած էր մինչև հիմա, նա մօտեցաւ իր հօրը, վերցրեց նրա ձեռքը և իր աչքերը ցցեց Միհրդատի դէմքին:

— Պապա, ասաց նա աղաչելով, իս չիմ գայ, իս ուրիշ մամաշա չիմ ուզի, իս բարուշկի մօդ կու մնամ, պապա:

— Ինչի, Մաշօ, թաղա մամաշէն լաւն է, նա քիզ կանֆէտնիր կուտայ, ասաց Միհրդատը:

— Չիմ ուզի իս նրա կանֆէտնիրը, իս բարուշկի մօդ կուլիմ:

— Չի ըլի, դիմի խօ բարուշկի մօդ չիս պիտի մնայ. հիմի կու տանիմ կու ճանանչեցնիմ, վուր իժում դիմի նրա մօդ ըլիս:

— Իս չիմ գայ, պապա, չիմ ուզի նրա հիդ կենալը:

— Նու, շատ մի խօսի, զնա շուրդ փոխէ ու գնանք, ասաց Միհրդատը հրամայելով:

— Չիմ գա, չէ, պապա, ասաց Մաշօն լաց ըլելով:

— Չիս գայ, իմի որ ուզգի կու խիմ էն վուխտը գուքաս:

Մաշօն փախաւ իր սենեակը և այնտեղ սկսեց բարձր լաց լինել:

Կէկէլի մայրը շատ աղաչեց Միհրդատին, որ թողնէ, չը տանէ Մաշօին, բայց նա անողոք էր:

— Ինչկլի իմի, դէդի, մէ օր պիտի գնայ թէ չէ, էտ դիմի քիմէն գիդենամ, էնէնց էրէս իս տուի, վուր հիմի խօսքս էլ չէ լում:

Պառաւր գնաց Մաշօի մօտ, սկսեց փաղաքշել նորան, համբուրել, մէկ խօսքով հազար ու մէկ հնարներ գործ զնելուց յետոյ նա կարողացաւ համոզել Մաշօին շոր հաքնել և գնալ հօր հետ, միւս երեխաները փոքր լաց եղան, բայց կանֆէտի անունը նոցա կաշառեց: Միհրդատը տարաւ ամէնքին Դարինկի մօտ, ճանապարհին Մաշօն լուր լացով գնում էր: Նրբ նոքա մօտան Դարինկի սենեակը, նա իրան մօտ

կանչեց ամէնքին և համբուրելով սկսեց կան-
ֆէտներ տալ: Մաշօն միայն չը մօտեցաւ և կանգ-
նած անկիւնում նայում էր. Դարինկի վրա:
Այս վերջինի գէմքը նոցանից չէր, որոնք ան-
կամ դրաւում են երեխաների սիրտը, սորա
բարձր հասակը, մեծ աչքերը, կարմիր և լուրջ
պզուկներով ծածկված երեսը. բոլոր ձայնը շատ
վատ տպաւորութիւն ունեցան Մաշօի վրա:
Դարինկէն մօտ կանչեց երեխային:

— Չիմ գայ, ասաց նա:

— Ինչի, դու շինկա, արի կանֆէտ չի ուղի,
կանչեց կրկին Դարինկէն:

— Չիմ ուղի իս քու կանֆէտը, իս քիզ չիմ
սիրում, դուն իմ մամաշէն չիս, ասաց երեխան
և նորից սկսեց լաց լինել:

— Հէ, հէ, հէ, հէ, խամութին է անում,
հէ հէ հէ, կու սովրի. ասաց ծիծաղելով Մի-
հրդատը:

— Քու անուռն ի՞նչ է, հարցրեց Դարինկէն
Մաշօից:

— Չիմ ասի, իս քիզ չիմ սիրում, կրկնեց
Մաշօն:

— Բաս դուն էրէվում է գրուբիան իս վուր
ինձ մօդ չիս գալի ու քաղաքավարի ջուղաբ

չիս գալի, ասաց Դարինկէն Մաշօին:

— Իս գրուբիան չիմ, պատասխանեց նա:

— Բաս ինչ իս, վուր գրուբիան չիս:

— Իս գրուբիան չիմ, կրկնեց Մաշօն և բար-
ձր լաց լինելով դուրս ընկաւ սենեակից:

Մաշօն այլ ևս չը մտաւ այն սենեակը, որ-
տեղ միսներն էին, նա դուրսը այնքան լաց ե-
ղաւ մինչև նորան ծառայի հետ տուն ուղար-
կեցին, և երբ եկաւ տուն նա զանգատովում էր
իր մեծ մօրը, ասելով, որ այն աղջիկը (նա
Դարինկին մամաշա ասելը չէր ուղում) իրան
գրուբիան ասաւ, որ Մաշօն չէ ուղում «Թազա
մամաշա», որ նա «փիսն» է և հազար ու մէկ
այսպիսի բաներ: Պառաւը նրան մխիթարում
էր, բայց Մաշօն միայն կրկնում էր, որ չէ ու-
ղում «Թազա մամաշա», երեխային այն երեկոյ
տաքութիւն տունեց և նա հիւանդացաւ ջեր-
մով: Իսկ Միհրդատը այս ժամանակ կօմպլի-
մէնտներ էր ասում իր ապագայ ամուսնուն:

— Չը գիդենաս, Դարինկա, վուր Մաշօն ամէն
օր քի հիզ էտէնց կու վարուի, ասաց նա Մա-
շօին տուն ուղարկելուց յետոյ, նա շատ լաւ
սիրտ ունէ, վուր կու սովրի, կու սիրէ էլ
քիզ:

—Օ՛րհնչ իս ասում, Միհրդատ, ասում էր քնքոյշ սիրահարված տիկինը, քու խաթիր ինձ դժուրքն էլ վուր զըգին չիմ'նիղանայ:

Մաշօի ջերմը սաստկացաւ այն գիշերը, իսկ միւս առաւօտ նա անմիտ իր անկողնի մէջ կրկնում էր. «ինձ էլ տար հիդդ մամաշա, իս էնդի չարութիւն չիմ'անի, իս խէջօք կու կե- նամ. պապա, իս թաղա մամաշա չիմ' ուզի: Զիմ գայ քի մօդ, իս քիզ չիմ' սիրում, դուն իմ մամաշէն չիս. բաբուշկա, ինձ էն աղջկը դրուրիան ասաւ...»

Երկու օրից յետ Մաշօին փոքր դադաղել մէջ տարան Խօջի վանքը և այնտեղ, իր մօր կողքին թաղեցին...

Իսկ Միհրդատը...նա շուտով պսակկեցաւ Շիրղըրըգօինց հարսի հետ և այսպէս իր կայ- քին աւելացրեց քառասուն հազար ռուբլից աւելի «փոշի»:

ՄԱՐԴԱՍՊԱՆ

I

Խարազխանում գտնվող տներից մէկում նըս- տած էր գետնին գցած խալէչայի վրա մէկ խումբ, որը բաղկանում էր մէկ կնոջից և հինգ երեխաներից: Կինարմատին կարելի էր տալ 29 տարի: Զընայելով, որ անչափ վշտերը նորա գէմքի վրա թողել էին իրանց հեռքե- րը, այնու ամենայնիւ առաջին գցած հայաց- քից այդ կնոջ վրա կարելի էր իմանալ, որ նա մէկ ժամանակ շատ գեղեցիկ է եղել: Նորա մէկ անգամ կարմիր թշերը այժմ մեռելանման գու- նաթափվել էին, գեղեցիկ աչքերը լեքը ար- տասուքով, որոնց նա աշխատում էր ծածկել իր երեխաներից, յուսահատութիւն էին ցոյց տալի:

Երեխաներից մէկը, կպած նրա կրծքին, կա- թըն էր ծըծում, իսկ ֆնացածներից երկուքը իրանց ձեռքերը դրել էին մօր գօքին և չոր- րորդի հետ միասին, որը կանգնել էր Մայինի

այսպէս էր կնոջ անունը, յետեւ մէկ ձայն ադէ-
ղիւօ, դէղի ջան, քաղցած իմ, դէղի ջան հաց
իմ ուզում, էին կանչում:

Միայն Մային մեծ որդին, որին կարելի էր
տալ ութ տարի, նստած էր լուռ ու մունջ,
յօնքերը վեր թողած սենեակի անկիւնում և էր
ձեռքին բռնած փոքր փայտով աշխատասիրու-
թեամբ փորում էր գետինը: Քանի երեխաները
հաց էին ուղում, այնքան մայրը մխիթարում
էր նոցա, խոստանալով, որ իսկոյն հայրը հաց
ու միրք կը բերէ:

— Մի լաց ըլէք, գինացուալոս գեղէն, մի
լաց ըլէք. քիչ էլ վուր մնաք մամէն գութայ
ձիզ համա հաց էլ կու բերէ, միրք էլ, ասում
էր նա:

Այս խոստումից յետոյ, որ այն օրը շատ
անդամ կրկնվել էր, երեխաները փոքր ժա-
մանակ լուռ էին և յետոյ կրկին անգամ
սկսում էին լաց լինել: Միայն մեծը անկիւնից
բարձրացնում էր իր աչքերը, նայում էր մօր
վրա և կրկին շարունակում էր իր գործը. այդ
հայացքից ելեւում էր, որ Գարշօն չէր հաւա-
տում մօր խօսքերին:

Բաւական երկար տեւում էր մօր խոստում:

ները և երեխաների վերանորոգված պահանջ-
ները, վերջապէս դուրսը լավեցաւ ծանր քայ-
լերի ձայն: Ամէնքը աչքերը դարձրին դէպի
դուռը, կարծես այդտեղից մտնողը նոցա մա-
հաւան կամ կենաց վճիռը պէտք է տար. բայց
սենեակը ոչոք չէր մտնում:

Մային գետին դրեց իր ծրծի երեխան և
դուրս մտիկ տուեց:

Դրան մօտ, մէջքը պատին դէմ տուած, պա-
տառտառ սպիտակ չթի ակալուխը հաքին, որի
վրա կապված էր կաշուէ քամառ, խարազի
կարած կօշիկներից պճիղները դուրս թափած,
կանգնած էր մի տղամարդ մօտ 40 տարեկան:
Եթէ նորա վսեմ դէմքը չը լինէր, որը դեղնել էր
թամբաքօի հոտից, կարելի էր մտածել, որ այդ
պարոնը Թիֆլիսի ջիբի ուստաններից մէկն է, ո-
րոնց մէջ Թիֆլիսը կարօտութիւն չունի: Բայց
այդ պարոնի դէմքը աւելի յուսահատութիւն
էր ցոյց տալի քան թէ որ և իցէ չար միտք:

— Միխակ ջան, ի՞նչ իս էտի կանգնի, ի՞նչի
չիս տուն գալի, հարցրեց Մային, դառնալով
դէպի դուրսը կանգնած մարդը, որին նա Մի-
խակ անուանեց և որը նորա ամուսինն էր:

— Չը վիկալան, Մայի, առանց քիզ էլ շատն

ունինք ասում է, պատասխանեց Միխակը և իր գլուխը կախ դրեց դռնի վրա :

— Ինչ անինք, Միխակ ջան, Աստուծոյ որոմած է, Իր ստիղծած մարթուն նա չի կորցնիր արի գնանք տուն, ասաց Մային և առնելով իր ամուսնու ձեռքը, տարաւ նրան սենեակը :

Երեխաները շրջապատեցին Միխակին, մէկը նրա ձեռքը բռնեց, միւսը ախալուսի փէշը, երրորդը նրա ծնկներին փաթաթեցաւ և ամենքը ձայն տուին. — Մամի ջան, հաց չես բերի, մամի ջան, քաղցած իմ դեղէն ասում էր, վուր դուն կու բերիս, ինչի չը բերիր :

Կարծես Միխակը պապանձվել էր. նա խօսք չէր գտնում, որ ասել էր իր որդկերանցը, միայն լուռ նա իր աչքերը երբեմն մէկի վրա էր դարձնում, երբեմն միւսի վրա, վերջապէս նա հեռացրեց իրանից երեխաներին և խորը ռախք քաշելով, պարկեց գետնի վրա և իր երեսը պատի կողմը դարձրեց : Երեխաները դիմեցին մօրը. նա էլ չը գիտէր ինչ ասէր նրանցը և մինչև հիմա զսպած արտասուքները վազեցին խեղճ կնոջ թշերի վրա : Դարչօն միայն չը մօտեցաւ իր հօրը : Նա, երբ տեսաւ, որ Միխակը ձեռքին ոչինչ չունէ, վերկացաւ, և իր փայտի օգնութեամբ

(Դարչօն աջ ոտը կոտրած էր) դուրս գնաց սենեակից :

II

Գրեթէ քսան տարի էր, ինչ Միխակը միջի փողոցում պապիրոզներ էր ծախում : Եօթը տարեկան հասակից Միխակի ծնողները տուին նորան պապիրոզ ծախող ուստա Գէվուրքին աշակերտ և սրանից յետոյ շուտով վախճանվեցան, թողնելով իրանց միակ որդուն տան և հինգ թուման պարտք, իբրև ժառանգութիւն :

Ուստա Գէվուրքը, տեսնելով, որ Միխակը հալալ տղայ է, վերցրեց նրան իրան մօտ և իբրև որդի պահում էր իր տանը : Միխակը գիշեր ցերեկ այնքան աշխատեց, որ կարողացաւ վճարել իր հօր թողած պարտքը : Մէկ քանի ժամանակից յետ Միխակը ուստա օրհնվեց և պսակվելով իր ուստի միակ աղջիկ Մայինի հետ, որին Միխակը երեսոյ ժամանակից սիրում էր, ուստա Գէվուրքի մահից յետոյ դառաւ նրա դուքնի տէրը : Զմեռն էր : Զիւնը փունջ փունջ, խաղալով օդի մէջ, ընկնում էր գետնի վրա և լճերի նման ծածկում էր Թիֆլիսի քուչէքը : Երեկոյեան ժամանակն էր, Թիֆլիսի վա-

ճառականներից մի քանիսը փակում էին իրանց տուփերը՝ միւսները, սպասելով ուշացած մուշտարիներին, տաքացնում էին փոքր մաղաշների վրա իրանց սառած ձեռքերը:

Միխակը արդէն փակել էր իր դռքանը և շտապ, շտապ գնում էր դէպի բաղաները: Նրբ նա մօտեցաւ նոցանից մէկին, բաղալը կշեռքը բարձրացրեց և խփելով դադգին ասաց.

— Ուստա Միխակ, աբա մէ էս խրամուլի դրուխը տիս, մէ էս խալերուն մտիկ, մէ դունչը անդէ, հէնց գիդենաս սիրուն աղջկայ պրօշնիր ըլի:

— Լաւն է, ասաց Միխակը, չարէքը վո՞նց:

— Էինդ շայով ծախում իմ, ամա քու խաթիր համա մէ աբասով կուտամ:

Միխակը առաւ մէ չարէք խրամուլ և գնաց դէպի տուն: Նրբ նա մօտեցաւ իր տան դրանք գեղեցիկ կանացի ձայնը, որը նանա էր ասում, դրաւեց նրա ուշադրութիւնը և ստիպեց կանգնել դրան մօտ:

Մինչև Միխակը հիացած լսում է երգը, մենք մոնենք սենեակը և մէկ հայացք ձգենք նրա վրա. ահագին դարբասի անկիւնում դրած է տախտը իր վրայի նահապետական քուրսիով:

Ճրագուէ մումը ծոյլ լոյս էր տարածում սենեակի մէջ:

Ոտքերը քուրսու տակը դրած, կիսապառկած օրօրոցի վրա, երեխային կաթն էր տալի մէկ մանկահասակ կին, որի գեղեցիկութեանը կը նախանձէր ամեն գեղեցիկ կին: Նորա կամար-կապած ունքերի և ալուանի թշերի մէջտեղը դրած էին երկու արեգակ, որոնց ամեն մօտեցող թռչունը անշուշտ պէտք է այրէր իր թևերը և որոնց ամէն մահկանացու աչքեր անուանելով, պէտք է մահացու մեղք գործէր: Նա հանում է իր ծիծը երեխայի բերանից և սկսում է քնքշութեամբ օրօրել երեխային և շարժելով իր մեղմիկ շրթունքները, նա երգում է առաջ կամաց և յետոյ աւելի բարձր:

Նանի նանա Լէւանօ

Չէմօ զուրճնիս մոէւանօ:

Անարմատի աչքերը սկսում են վառվռի տալ, նոցա մէջ երևում է սէր դէպի իր մանուկը՝ այդպէս կարող են փայլել միայն այն մօր աչքերը, որի զաւակը սիրոյ պտուղ է: Նա շարունակում է երգել, այս ժամանակ դուռը բացվում է և մտնում է Միխակը ձեռքերը սարգած, մէկ վայրկեանից յետ Մային նորա գլուխը կուգն էր:

Միխակը թողնում է Մայինին և նստում է քուրսու մօտ, այս վերջինը բերում է մաւի դաժած սուփրէն, դցում է քուրսու վրա, դնում է այնտեղ իրանց խոհեմ ընթրիքը և ինքն էլ նստում է Միխակի կողքին:

— Էսօր թամբաքօս պրծայ, Մայի, փուղը տարայ տուի տիրուչը, էքուց էլի էրկու հակը պիտի բերիմ:

— Էս ամսվայ դադումը ի՞նչքան է, հարցրեց Մային:

— Տասն ու իննը մանէթ մէ արասի կէս շայի, եօլա կէհանք էլի, պատասխանեց Միխակը:

— Թամբաքօն վուր կտրիս, ինձ համա էլ ղըգէ, վուր շինիմ, էս օր իս էլ պրծայ իմ թամբաքուն, թուղթ շատ կայ, ասաց Մային:

— Անգին քար իս, Մայի ջան, Աստուծ գիւղենայ, հիդս մէ գլուխ լուծ իս քաշում էլի, էնղադա թամբաքօն էտէնց չուստ պապիրող շինեցիր:

— Ելինեցի էլի. այ հօրէն տիս, ասաց Մային մատով ցոյց տալով:

— Մէ խօսքով ինձպէս բախտաւոր մարթ աշխրթի երէսին չը կայ: Փառք քիզ Աստուծ, ասաց Միխակը երեսը խաչ հանելով և վերջացրեց ընթրիքը:

Մային վեր քաղեց սուփրէն և մէկ քանի րօպէից յետոյ մոմը հանգաւ և դարբասի մէջ տիրեց խորը լռութիւն.

III

Այսպէս Միխակը երջանիկ ապրում էր: Ոչ ոքի առաջը չէր ծռում իր գլուխը, ոչոքին չէր շողջորթում և ում մէջ ծռնութիւն տեսներ, խեղոյն երեսին ասում էր, և այս բանը վերջը նորան շատ փնասեց: Ողորմեւն չը գիտէր, որ ազատախօսին թիֆլիսցին աւազակից չէ զանաղանում:

1873 թուի յունիս ամիսն էր, Միխակը հիւանդ գողով պառկած էր իր տանը: Այս հանգամանքը դժուար տանելու էր նրա համար, որովհետեւ ահագին ընտանիք ունէր, բայց այնուամենայնիւ տարաբախտութիւն չէր: Դարչօն, Միխակի մեծ որդին բաց էր անում դուքանը և ծախում էր իր մօր Մայինի շինած պապիրօզները: Այս վերջինը այնքան աշխատում էր, որ կարողանում էր կառավարել իր տունը: Յկաւ յուլիս ամիսը, Դարչօն փակեց դուքանը, որտեղ այլ ևս ոչինչ չը կար:

Մային սկսեց կամաց կամաց ծախել իր տան խեղճ կայքը և տեսնելով, որ ապրուստի այդ

Թշուառ միջոցը հատաւ, նա սկսեց լուսաց անել, բայց ամէն ժամանակ հեռը ունենալով իր ծըծի և միւս փոքր երեխաներին, նրան բացասեցին: Նրբ Միխակը լաւացաւ նրա միակ կաբէն անգամ ծախված էր: Նա գնաց գործարանատիրոջ մէկի մօտ և խնդրեց, որ իրան վերցնեն իբրև բանուոր:

— Ուշ էկար, ուստա Միխակ, առանց քիզ էլ էնքանն ունինք, փութ չինք կանացի օխտայ դայ:

— Պարուն, ասում էր Միխակը, էրէխէրքս ուտելու հաց չունին, թէ Աստուծ կու սիրիս, մէ բան չարա արա ինձ:

— Ինչ իս ասում տօ, փունց չարա անիմ. ուրիշին դուս անիմ, քիզ վեկալնիմ, ի՞նչ գիդիս թէ նա քիզմէն աւելի նաչար չէ, ասում էր գործարանատէրը, և երբ Միխակը հեռացաւ, նա փրնթփնթաց. գլխիս զարաուլ իմ կանգնեցնում քիզ. ինչ անիմ, պիտի էրէսիս ասիս, թէ ի՞նչ ասում է. ինձ մարթ չէ հարկաւոր, ամա փութ պէտք էլ ըլն քիզ չիմ վեկալնի:

Այսպէս Միխակը ամէն գործարանատիրոջից խնդրեց դործ և ամէնքը նորան բացասեցին: Նա գումար չունէր և առաջարկում էր իր աշ-

խատանքը, իսկ նրա քրտինքը ոչոք չէր կառնում գնել:

Այսօր Միխակը գնաց վերջին գործարանատիրոջ մօտ և մի և նոյն բացասական պատասխանը ստացաւ: Մենք տեսնիք, ինչպէս նա անհաստատ քայլերով դառնում էր տուն, բայց երբ մօտեցաւ դրանը, երբ միտքն եկաւ, որ իր ընտանիքը քաղցած է, նա չը համարձակվեցաւ ներս մօնել և այնպէս սաղ օրը դուրսը կը մնար, եթէ իր կինը չը տանէր տուն:

IV

Մէկ ժամից աւելի Միխակը պառկած էր սենեակի մէջ, երեսը պատի կողմը դարձրած: Ծովն ալիքների նման զանազան մտքեր գալիս էին նորա գլուխը և դիպչելով ափին, իրողութեանը ջարդվում էին և հեռանում, որ աւելի ոյժ հաւաքեն և նորից յարձակվին: Նրեխաների ժամանակ առ ժամանակ կրկնած օղէղի ջան, քաղցած իմօք, Միխակի սրտին նետի նման դիպչում էին: Դրսից լավեցաւ երկու անգամ «Միխակ»:

Միխակը վեր կացաւ, դուրս նայեց և տեսաւ իր տանտիրոջը. համեցէք, ասաց նա:

Սենեակը մտաւ Միխակի տանտէրը: Նա

այս կողմ այն կողմը նայեց փնտռելով իր համար նստելու տեղ, բայց ոչինչ չը գտաւ: Նրեխաները հետաքրքիր հայեացք ձգեցին պարոնի ձեռքերի վրա և տեսնելով, որ նոքա դատարկ են, շարունակեցին լաց լինել:

Տանտէրը դարձաւ դէպի Միխակը:

— Ուստա Միխակ, ասաց նա, ախար էտէնց իս չե ըլի. էրկու թուման տան քրիհ իս պարտ, վունց քրիհն իս տալի, վունց տունն իս դարդկում:

— Ինչ անիմ, աղա, պատասխանեց Միխակը, այ քու բարի աչքով տեսնում իս՝ էրէխէքս հաց ին ուզում, փուղ չունիմ, վուր հաց առնիմ ուտեցնիմ ու քու քրիհը վճարդանց տամ:

— Լաւ իս ասում, ուստա, ասաց տանտէրը, ամա իս իս չիմ խլի քու հայր. իս իմ տան քրիհն իմ ուզում: Համ էլ, ախպեր, տանը կենում իս, չէ՞ վուր օրէց օր պարտքդ աւելնում է, տունն էլէ դարդկէ ու էն էրկու թումանը իժում տու:

— Լաւ է, աղա, մէ էրկու օր վաղա տու ու դուս կէհամ:

— Տւիլ իմ, ուստա, էրկու օր վաղա իմ տուի, հիմի դուն գիդիս, ասաց նա ու դուրս գնաց:

Մէկ քանի լուպէից յետոյ Միխակն էլ հետեց նրան:

— Ինչ անիմ, մտածում էր նա, վուրդի ճարիմ իս փուղ, վուր հաց առնիմ օղլուչաղիս համ. տունն էլ պիտի դարդկիմ: պարապ մարթ, ինձ ո՞վ տուն կուտայ. աղքատութիւն անիմ, թէ...

Նա կտրեց իր մտածմանց թելը և ստատիկ գունաթափւեց: «Ձէ իս գուղութին չիմ անի»:

Այս ժամանակ նա մօտեցաւ Սիօնին: Ինչպէս ջրումը խեղդվող մարդ շտապում է իր ձեռքը ընկած թփով պաշտպանվել, այնպէս շտապով Միխակը գնաց սանդուղտով ներքև և իր զլուխը տաճարի պատին կպցրուց: Բաւական երկար ժամանակ Միխակը անշարժ կանգնած էր: Ի՞նչ էր անում նա, ի՞նչ էր մտածում: Արդեօք անիծում էր իր հացի խլողներին, թէ աղօթք էր անում: Աղօթք էր անում, որովհետև տե երբ նա հեռացաւ տաճարից, նրա դէմքը պարզ և հանգիստ էր, կարծես նա իր բեռը թողել էր տաճարի մօտ:

Վ

Միխակը գնաց դէպի ծածկած Բազաղխանէն: Մագազիններից մէկի պատուհանների վրա

կայցրած էին վիհերի շնորհիւ բիւհաներ, դրան մօտ կանգնած էր մէկ կարծաւոր մարդ: Նա իր ձեռքերը մէջքի վրա էր դարձել և փորը դուրս ձգել, նրա յօնքերը ձիւ պայտն էին մտաբերում:

Միտակը դիմեց դէպի այդ պարոնը:

— Աղա Փարսիդ, ասաց նա, մինձ առուտուր ունիս, մինձ աբարօտի մէջն իս, թէ քու Աստուծոյ կու սիրիս, թէ քու ստիղծողը կու սիրիս, ինձ մէ բան տու, մէ գուրձի կանգնեցրու, օղւոյնդ ուտելու հաց չունէ:

Աղա Փարսիդը, ինչպէս անուանեց նրան Միտակը, կասկածաւոր հայացք ձգեց այս վերջինի վրա և իր ձեռքով ծածկեց ժամացոյցի ճեղքը:

— Ինչքէ հիմի դուն ինչ բանի վրա էիր, հարցրեց աղա Փարսիդը:

— Գանա ինձ չիս ճաննա, իս պապիրոզ շէնող էի, դուքանս մէջի փողոցումն էր. քանի ջէր ինձմէն պապիրոզ իս առի, ասաց Միտակը:

— Չիմ գիտի, միտս չէ. լաւ վուր պապիրոզ շէնող իս, ինչի մէ փաթրիկանտի մօտ չիս գնում ու չիս կանգնում, հարցրեց վաճառականը:

Միտակը պատմեց պատճառները:

— Է լաւ, նրանք վուր չին վեկալի, ասաց

աղա Փարսիդը, իս վունց վեկալնիմ, եա ի՞նչ բանի վրա կանգնեցնիմ:

Միտակը հեռացաւ նեղացած:

— Ամա ի՞նչ իմ ասում, կանչեց նորա յետեւից վաճառականը, մէ ամսվայ էդնէն արի. մէ բան իմ վեկալնում, թէ էն գլուխ էկաւ, կուլի քի համա էլ բան ըլի:

Միտակը շարունակեց իր ճանապարհը, նա սպասում էր այդ պատասխանին, միայն կամենում էր այդ վերջին միջոցն էլ փորձել:

VI

Միտակը մեքենայաբար գնում էր դէպի մէյ-դանը: Այստեղ նրա ուղադրութիւնը իր վրա դարձրեց Դարչօն: Քստի սա ի՞նչ է շէնում, մտածեց Միտակը, որը չէր նկատել իր որդու տանից դուրս գնալը: Միտակը նայում էր Դարչօնի յետեւից, այս վերջինը գնում էր մէկ լաւ հագված պարոնի հետ: Մէկ քանի բօպէից յետ Դարչօն իր ձեռքը տարաւ դէպի պարոնի ջերը: Միտակը տեսաւ այս շարժումը և քարացած մնաց, բայց այդ դուրսից լաւ տեսնելու էր՝ նա ճիշդով ամբոխը հասաւ Դարչօնին, բռնեց նորա շրթնից և դուրս բերեց մէկդանից:

— Տօ էդ ի՞նչ էիր ուղում անի. գուղութի՞ն,

չիս ամանչում, էն օրը չը տեսար, վուր մէ մար-
թու գուղութենի խաթիր բիրթը տարան:

— Մամի քաղցած իմ, պատասխանեց Դարչուն:

— Գնա տուն, էլ էղթաւուր բան չանիս,
ասաց Միխակը խստութեամբ, իս ձիւ համա
հաց կու բերիմ:

Դարչուն հեռացաւ: Միխակը նայում էր նորա
հեռանալուն: Միխակը մտաբերեց երեսայի ա-
սածը. «Մամի քաղցած իմ», նա յետ կանչեց
Դարչոնին, գրկեց, համբուրեց և հեռացաւ...

VII

Թիֆլիսը ծածկվեցաւ խաւարով: Յետոյ կա-
մաց կամաց, կարելով իր ամենօրեայ ճանա-
պարհը, լուսինը դուրս սողաց Մախաթի վրա
զանկող ամպերի միջից և իր գունաթափ ճա-
ռագայթը տարածեց Թիֆլիսի վրա: Օդը իս-
տակ էր և գիշերը դիւրալի: Այս այն լուսա-
ւոր գիշերներից մէկն էր, որը մտաբերում է
մերժված սիրահարին անհաւատարմի անցեալ
փաղաքշական խօսքերը, մեղմիկ ձեռքի սեղմելը և
քնքոյշ համբոյրը, որը մտաբերում է աքսորակա-
նին իր հայրենիքը: Այնտեղ էլ իր աքսորանքի
մէջ նա տեսնում է խայտառ առուներ և կա-
նաւով ծածկված բլուրներ, այնտեղ էլ մի և

նոյն լուսինն է, բայց նորա հայրենիքում ուրիշ
տեսակ է խաղում լուսնի ճառագայթը գետի
փրփուրների հետ և մի և նոյն ժամանակը նո-
րա խրճթի դրանը նստած է կամ նորա մայրը,
կամ երեսայութեան ընկերուհին և կամ անտէր
և միայնակ թողած ահագին աղքատ ըն-
տանիքը: Եւ ի՞նչի համար նա էստեղ է ընկել,
մի՞թէ ճշմարիտ նա աւազակ է...

Միխակը կանգնած էր Մէյդանում: Յանկարծ
սարսափելի ճայթոցը դլդղեց Թիֆլիսը: Միխակը
դէպի երկինք բարձրացրեց իր աչքերը. լուսինը
բաւական բարձրացել էր, նա խաւարել էր այն
բազմաթիւ գոյնգոյն աստղերից, որոնք լքցրել
էին օդը և դեռ չը հանգած իրանց տեղը ուրիշ-
ներին էին թողնում:

— Կօնսուլօբա կուլի, մտածեց Միխակը:

Ամբոխի հոսանքը, որը ուղղված էր դէպի
Թամանդովի քարվանսարան, Միխակին էլ տարաւ
իր հետ: Ճանապարհին նա լսեց հետեւեալ
խօսքերը.

— Տօ Կունձօ, ասում ին Նահն էկիլ է:

— Հա, սօ, ասում ին թուրքացիլ է ու
Մահմէդի օրէնքն է բռնի:

— Չէ Կօնսուլօբա չի էլի, Նահի համա

կուլի էս շուշտունէքը, մտածեց Միխակը,

Նա հասաւ Քամոյենց եկեղեցուն: Պալատը լուսաւորված էր, Փոխարքայի այգիի մէջ մուգեկա էր ածվում և ջուխտ ջուխտ տղայ և աղջիկ անց ու դարձ էին անում: Թիֆլիսի բոլոր բնակիչները պալատի առաջն էին:

Միխակը անց կացաւ ամբոխի միջով: Նրբ բաւական հեռացաւ, նորա ուշադրութիւնը դրաւեց մէկ պապիրոզի մագաղին: Միխակը այդ կրպակը էլի տեսել էր, միայն այն փոփոխութիւնները, որոնց նա ենթարկվել էր, Միխակի վրա ծանր տպաւորութիւն ունեցան:

Պատուհանների և դրան մէջ դգված էին ահագին մէկ բոյի շուշէք, գազգէն ու շիտֆները կակալեց էին շինած և դէմ առ դէմ դրանք ժամացոյց. վերջապէս երկու հատ բազկաթուները, լոմբօրնի սեղանը, իր վրայի ջրով լի դրաֆինով և բաժակով, ահագին հայելին, շիտֆների մէջ զտրսած ոոկեղօժ պապիրոզիցէքը, մուշտուկները և գեղեցիկ զանազան բանդիրօլ կպցրած պաշկերով պապիրոզները թամամեցնում էին մագաղինի գեղեցիկութիւնը:

— Էստի մոիկ, էստի մոիկ. սրանք վրձնց ին սարքի իրանց դուքանը ու իս իմ աշխատան-

քով չիմ կանացի հաց ճարի. սրանք վրձնց ին սարքի իրանց դուքանը, ու իմ վուրթին, իմ ութ տարեկան էլէխէն հացի խաթիր պիտի դուղութին անէ, չէ, Դարչօ, ուփրօ լաւ է իս մեռնիմ, քան թէ քու դուղութինը տեսնիմ:

VIII

Մէկ քանի ժամանակից յետ մենք տեսնում ենք Միխակին Թաժմիւղի թաղում մէկ հարուստ տան առաջ կանգնած: Տան պարեպրի դուռը պատահաբար բաց է մնացել: Միխակը կանգնել է այդ դրան առաջը և իր աչքերը ցըցել նորա վրա: Քրաինքը վազում է նորա երեսի վրա, նա մեքենայաբար ներս է մտնում և բարձրանում է սանդխտի վրա: Յանկարծ նա կանգնեց. «էս ի՞նչ եմ անում, մտածեց նա, ո՞ւմ տուն իմ գնում, ի՞նչի... դուղութենի՞. չէ ուփրօ լաւ է, վուր գիփ մէտի մեռնինք», նա շտապով յետ է դառնում, բայց քուչից լսում է ձայներ և չէ համարձակվում դուրս գնալ: Զայները մօտենում են: Խօսողները դրան առաջն են կանգնում: Միխակը շունչը պահում է և անշարժ մնում է դրան մօտ և լսում է:

— Տօ ասում իմ, մէ գիշեր բի ու եարասուն թուման կուտամ, ասում է առաջին ձայիր:

— Չէ անում, աղա, ասում է միս ձայնը:
 — Տո՛ւմ գիշեր, իժում եարսուն թումնով
 լաւ բաժինը կու շինիք ու մարթու կուտաք:
 — Ա՛յ գիշեր ու եարսուն թուման, եարսուն
 թուման, մտածեց Միխակը, եարսուն թուման,
 կրկնեց նա, ու Դարչոն գուղութին անէ, էրէ-
 խքոս քաղցած ին. . .»

Միխակը այդ ևս չէ լսում դրսի խօսակցու-
 թիւնը, նորա առաջ կանգնած է իր քաղցած
 և տխուր կինը, իր մտաբերում է իր մէկ ան-
 դամ համար, բայց երջանիկ ընտանեկան
 կեանքը, նա մտաբերում է իր կնոջ վառվռուն
 աչքերը, հիմա նորա վշտից խորը ընկել են.
 նա տեսնում է Դարչոն ձեռք ուրիշի ջիւր տա-
 նելիս, լսում է նորա ասած՝ «քաղցած իմ,
 մամի» և օգոցակի բարձրանում է սանդխտի
 վրայով: Միխակը պնդում է սենեակներից
 մէկը, միւսում նա տեսնում է արծաթեղէնով
 լի շկաֆը, բայց ձախ կողմը դուռը կիսաբաց է
 և այնտեղից բնորոշ հրամայողական կանացի
 ձայն է լսվում: Միխակը լսնկարժ. քնկնում է
 շկաֆի վրա, կոտրում է շուշան և ագնում է
 արծաթեղէնը:

Այս աղմուկից շփոթված, դուռն են Թա-

փում ծառան և աղախինը, առաջինը յարձակ-
 վում է Միխակի վրա և բռնում, իսկ միւսը
 «օտկեցէք» կանչելով, դուռն է ընկնում սե-
 նեակից:

— Էստի դուն ի՞նչ իս շինում, էդ էրծը-
 թեղէնը ո՞ւր իս տանում, հայ տօ գուղ, ասաց
 ծառան բռնելով Միխակին:

— Թող, բռնէ քու էրծթեղէնը, իս էլ չեմ
 գիդի ինչի էկայ, Թող գնամ:

— Չիս գիդի ինչի իս էկի, Թողնիմ, քու
 հօրն օղորմի:

— Տօ Թող, օղլուշաղս միսկ է:

— Չէ գնանք պօլեցիէն:

— Թող ասում իմ, ասաց Թափ դալով Մի-
 խակը:

— Չիմ Թողնի, ասաց ծառան և նորից
 բռնեց Միխակին:

— Չիս Թողնի, այ թէ չես Թողնի, ասաց
 Միխակը, բարձրացրեց իր ձեռքը և պինդ խփեց
 ծառայի սրտին:

Այս վերջինը ընկաւ անշունչ: Միխակը ու-
 զում էր փախչել, բայց խկոյն եկան աղախնի
 կանաճ մարդիքը և «հայ տօ մարդասպան» ա-
 սելով, կապեցին և տարան. . .

Երեք օրից յեա Միխակը արեստանտի շորը հաքին, զլուխը ուսի կողմը ծռած, երկու զինուորականների միջով, անց էր կենում տամօժնի առաջը: Երբ նա հաւասարվեցաւ Զիզիանովի բաղին, որտեղից երևում էր բերդը, նա բարձրացրեց գլուխը, տեսաւ իր ապագայ, տխուր բնակարանը, կանգնեց մէկ րոպէ և այս խաղը ասաց.

Քէնա եալ օլդի, նէիլիմ,

Դարդւմ իւլ օլդի, նէիլիմ

Ափարդլան էամադա

Սաբաբ քիւմ օլդի, նէիլիմ:

Իսկ Մային իր երեխանցով, սիրելի կարգացողուհի, սպասում է, որ դու պարզես քո ուղորմած ձեռքը դէպի նոցա, բացի քեզանից, նա ուրիշ յոյս չունի. . .

ՈՐԴՈՒ ՀԱՐՍԱՆՈՒՔ

I

Գիշեր էր: Կանանցից և տղամարդիկներից բաղկացած մի խումբ, զուռնաչի Մնացականին առաջնէր գցած, վառու մոմերը ձեռքերին սուրբ Շմաւոնի եկեղեցուց դէպի Մայրանի-Աղբիւրի Թաղն էր դնում: Սա մի հարսանիք էր. Հայրապետեանց Ասլանը պսակում էր իր միակ որդի Սեդրակին: Փեսան ձեռքը հարսին տուած, խաչեղծօր հետ միասին գնում էր տղամարդկերանց և կանանց մէջ տեղը: Զուռնան տնդադար փչում էր, մականները Փշանգներ և հրացաններ էին արձակում, իսկ մակարբաշին, աղափների այդ զլխաւորը, անդադար ձայն էր տալիս մականներին:

— Այ թագաւորի մականներ:

— Հա բալլի, միաձայն պատասխանում էին մականները:

— Ուրբա. . .

— Ուրբա, կանչում էին մականները, խառ-

ներով իրանց բազմատեսակ ձայները մակարբաշու ձայնի հետ:

Մի խօսքով ուրախութեան սահման չը կար: Թըզվաքոյրերը *) անդադար կամ նորահարսի փեշերն էին ուղղում, կամ միմեանց ականջին ծածուկ նկատողութիւններ էին անում ու ուրախ ուրախ ծիծաղում. . . Թէ ի՞նչ էին նոքա ասում, Թէ ի՞նչ խօսքեր էին լինում նրանց ծիծաղի պատճառը, ես չը գիտեմ, և ո՞վ կարող է իմանալ դրանց գաղտնի, քնքոյշ ճրկճրկոցը: Շատ երիտասարդներ և շատ օրիորդներ նախանձում էին ուրախութեան հեղինակներին. «ինքը հարուստ, գեղեցիկ և բաժինքով կին է աւելում, երանի քեզ Սեդրակ» մտածում էին առաջնները: «Ջահիլ, սիրուն և հարուստ, ասում էին երկրորդները, երանի քեզ Մարիամ»: Բայց ի՞նչ էր անցնում գլխուոր հերոսների սրտերում. Սեդրակը ուրախ էր, ուրախ էր այնպէս, ինչպէս ուրախանում է մի երեխայ, որի համար մի այսպիսի հանդէս է կատարվում: Հազիւ 18 տարեկան, հասակը միջակ, դէմքը գեղեցիկ, մազերը սև, մի տեսակ երեխայական

*) Հարսանիք հրաւիրված կանայք:

հպարտութեամբ նա բռնել էր Մարիամի ձեռքը և գնում էր, բոլորովին չը մտածելով Թէ ի՞նչի համար է պսակվում և ի՞նչ պարտականութիւններ ունի դէպի իր կեանքի անբաժան ընկերուհին: Հայրը ասել էր, որ Մարիամը լուաղջիկ է, որ նա փող և բաժինք ունի, որ Սեդրակը պէտք է պսակվի Մարիամի հետ, և նա պսակվեց. . . մինչև անգամ նա հպարտանում էր, երբ մտածում էր, Թէ ինքն էլ կունենայ մի էակ, որ իր կամքին բոլորովին հլու հպատակ կը լինի. . . Իր հօր կամքին անպայման հնազանդելու սովոր, Սեդրակը ուզում էր, որ մէկն էլ իր կամքին հնազանդ լինէր: Այսպէս գնում էր ընտանիքի ապագայ հայրը իր ընկերուհու հետ. . .

Մարիամը հաւանում էր Սեդրակին. այդ քնքոյշ, գեղեցիկ, անմահ Մարիամը հաւանում էր Սեդրակին. այդ երևում էր նորա սև, փիալա, վառվռուն աչքերից, նորա ժպտող փափուկ շրթունքներից, նորա երկնակամօր ունքերից, նրա սև, երկար թերթերունքներից, նրա սպիտակ փափուկ երեսից, նրա վարդանման թշերից և հպարտութեամբ բարձրացած կողը ուսերից. . . Երանի ինձ հաւանէիր,

Մարիամ, ես այն ժամանակ ոտիդ տակի հողը
կը լինէի. . . Մարիամը 16 տարեկան էր, հա-
րաւի աղջիկ էր նա. 16 տարեկան հասակում
նա մինչև անգամ փորձում էր ծանապարհին իր
նորափեսի ձեռքը սեղմել, փորձում էր յիշեց-
նել նորան իրանց սպասող քաղցր լուսակները,
բայց Սեդրակը սիրոյ այդ յառաջաբանների
վրա ուշադրութիւն չէր դարձնում, և ի՞նչպէս
կարող էր այդ երեխան հասկանալ կնոջ ամեն
մի շարժումների, ամեն մի հայտնայքի, ամեն մի
ցանկութեան նշանակութիւնը: Ախ իմ սիրելի
ընթերցող, քանի և քանի անգամ մեր սիրտը
ուրախ ուրախ բարախել և քանի անգամ սե-
քօղով է ծածկվել. մտաբերիր սիրելիս. . . յի-
շատակները երբեմն քաղցր են լինում. . . Բայց
Սեդրակը ուրիշ բանով էր զբաղված. նա զբաղ-
ված էր մակարների ուրաններով, Փշանգնե-
րով, իր հագուստով, մի ուրիշ դաստայ զուռ-
նով, որ իրանց տանից առաջ եկաւ իր դէմ,
բէնգալեան կրակներով, որ իրանց տան առաջ
վառեցին. . . այնպէս նա և նորա հետ էլ հան-
դիսականները մօտեցան իրանց տանը:

II

Մինչև որ հարսանիքը կատարվում էր, Հայ-

րապետենց Ասլանը, Սեդրակի հայրը, հպարտ
հպարտ ման էր գալի իր տան դահլիճում և
զանազան հրամաններ էր տալի թէ իր եղբայր-
ներին և թէ ծառաներին: Շատ հետաքրքիր
բնաւորութիւն ունէր Հայրապետենց Ասլանը. . .
Եթէ իմ ընթերցողը տեսիլ է մի ուռած, փքած
հնգուհաւ, եթէ նա երեւակայի, որ այդ հըն-
գուհաւը ունի մարդու պատկեր, միջակ հասակ,
կալմուսածքը առողջ, աչքերը պուշ, հուս-
տուած, երեսը վեր առած և բեխերը խուզած,
եւրօպական ձևով հագնված և ասիական կոշտ
և կեղտոտ պատկեր ունեցող, եթէ այս բոլորը
երեւակայի իմ ընթերցողը, — նա լաւ գաղափար
կունենայ Հայրապետենց Ասլանի վրա: Մի հա-
նաքչի նրան կնքել էր. Ասլանը թարգմանել էր
Алексѣй, իսկ Հայրապետը Герасимъ, և երբ
նրան ասում էին — «Алексѣй Герасимичъ, այս
բանը այսպէս է». նա մի առանձին հպարտու-
թեամբ ուսերը բարձրացնում էր, բռնում էր իր
սիւրտուկը կրծքի մօտ, թափ էր տալիս և ա-
սում էր.

— Հրամանացդ ասեմ, բոլորովին ճշմարիտ է,
да. . . Բայց դեռ մէկ ժամ առաջ այդ գործքի
հակառակ էր եղել. Алексѣй Герасимичъ-ը

ամեն բան յաղթեց. . . .

Այն մարդուց, որ իրան *Алексѣй Гера-
симичъ* էր կանչում, հացկերոյթի ժամանակ հե-
ռու էր նստում, որ ինչ է իր կենացը խմելու
ժամանակ հեռուից ձայն տալ՝ *Алексѣй Гера-
симичъ*, ձեր հրամանոց կենացը (և որքան յի-
մար էր լինում Ասլանի ժպիտը այդ րօպէին),
որ տեսնեն իր համագիւղացիները, որ ինքը
Алексѣй Герасимичъ է, և ոչ թէ Բոյաղչի
Թոմաս, կամ Դալգօզենց Մելքօն, կամ Զալվա-
դարենց Զորար, կամ թէ չէ Փափենց գիժ Սար-
գիս և այլն: Նա դրանց թայն չէր, նա *Алек-
сѣй Герасимичъ Алексѣевъ* էր: Նրան չէր
կարելի Ասլան ասել, պէտք էր աղա Ասլան ա-
սէին, որովհետև աղայութիւնը միայն իրան
էր յատուկ. . . ով ինչ ուզում է ասէ, ես իմ
հերոսին Հայրապետենց Ասլան կանուանեմ: Այս-
պէս իմ Ասլանը չափազանց փառասէր լինելով,
մի և նոյն ժամանակ և բարեգործ մարդ էր.
Նա մի քանի հարիւր մանէթ էր ընծայել տե-
ղական ուսումնարանին, մի քանի մանէթ էլ
տուել էր դասական պիտոյքների համար, մինչև
անգամ ինքն իրան տեղական ընթերցարանի
հիմնողն էր համարում, բայց այս անում էր ոչ

թէ գործի համար, այլ որ ասեն՝ «Աղա Ասլանը
այս և այն արեց»: Ասլանը ազնուական էր.
փառասիրութիւնը դորա տոհմի մէջ ժառան-
գական հիւանդութիւն էր, հանգուցեալ նրա
պապը (Աստուած ողորմի, Աստուած
հոգին լուսաւորէ, լաւ մարդ էր խեղ-
ճը) պարսից իշխանութեան ժամանակ մի մէ-
ջիթ էր շինել և դորա համար ազնուութիւն էր
ստացել: Հայրապետենց Ասլանը հարուստ էր
եթէ կարելի է հարստութիւն համարել յիսուն
հազար մանէթի կարողութիւն, և այդ կարո-
ղութիւնը մասամբ ժառանգական էր և մասամբ
բարեվաստակ: Թէ ինչպէս էր նա աշխատել
դորա համար պատմութիւնը լուծ է, այսքանը
միայն յայտնի է, որ գրեթէ բոլոր նրա հա-
մագիւղացիները մասամբ խարէութեամբ և մա-
սամբ անազնութեամբ էին հարստացել. մէկը
որբեր էր զըկել, միւսը իր բարեկամի թղթերն
էր գողացել և խեղճին անանկութեան էր հաս-
ցրել, երրորդը ազնիւ խօսքով պահ տուած
փողերն էր փախցրել և իր հօրը սպանել տուել,
չորրորդը իր աներոջ միակ տղին կամեցել էր
զեղել տալ, որ հարստութիւնը իրան մնայ, հին-
գերորդը. . . Բայց անվերջանալի է. . . ափսոս է

ընթերցողի ուշադրութիւնը: Չը պէտք է զարմանալ, որ Հայրապետենց Ասլանը և Նրա Համադիւպայինքը Հարուստ էին, և բոսպոլան հազուստ էին հագնուում, երկսեռ ուսումնարաններ ունէին և այլն:

Պարտիզապատ գիւղը ժայռերի վրա էր շէնած, Նրա միջեց մի սիրուն առուակ էր անցնում: Գիւղը լեքն էր համեղ, խօսկան աղբիւրներով: Պարտիզապատը իր բնակիչների աշխատանքին էր պարտական, որ գեղեցիկ, պողաբեր այգիներով էր ծածկվել:

Երկիրը բնակիչներին չէր տալիս անունդ և նոքա ստիպված էին օտարութեան մէջ աշխատել, տուութուր անելով բամբակով, մետաքսով և այլն: Շատերը նրանցից բացի Ռուսաստանը գնացել էին և արտասահման, բայց խօսելը մեր հերոսի վրա:

Ընտանեկան կեանքում Ասլանը կատաղի բռնուոր էր, իր գերդաստանի բոլոր անդամները դողում էին նրանից, վախում էին նրանից: Մինչև անգամ իր տան շունը և կատուն, բոլորը Նրա համար էին ստեղծված, Նրա ստրուկներն էին, Նրա ստրուկն էր և իր որդի Սեդրակը, այն գեղեցիկ երեխան, որ այժմ պսակ-

վում էր հօր հրամանով...

Մարիամի հայրը մեռել էր և իր միակ աղջկան չորս հազար մանէթի կարողութիւն էր թողել: այս դէպքից օգուտ քաղեց Հայրապետենց Ասլանը և հրամայեց իր որդուն պսակվել չորս հազար մանէթի և գեղեցիկ աղջկայ վրա: Պարտիզապատ գիւղում սովորութիւն չէ կար փող և բաժինք տալու, մինչև անգամ պսակի շորերն էլ տղան էր ուղարկում, բայց Ասլանը պէտք է կարգից դուրս բան անէր: Պարտիզապատ գիւղում հարսանիքը ցերեկով էին կատարում, իսկ Ասլանը գիշերը կատարեց (Թիֆլիսի պէս)...

Ամեն բանում Ասլանը ջոկվում էր իր հայրենակիցներից. մի խօսքով մազալու կենդանի էր Հայրապետենց Ասլանը: Հիմա նա կանգնած է դահլիճում, հպարտ թափ է տալիս իր սիւրտուկը, և սպասում է նորապսակներին:

III

Երկու զուռնաչիները միմեանց հակառակ ղայքաներ էին ածում, որպէս զի միմեանց շփոթեն: Նաղարաչի Գալուստը իր ձեռքի կէռ փայտը խփում էր ահագին նաղարին և իր բազմատեսակ հունարներն էր ցոյց տալի. եր-

բեմն իր երկար ոտը բարձրացնում էր, նորա տակիցն էր փայտը խփում, երբեմն նաղարի տակիցն էր խփում և երբեմն միւս դաստի զուռնաչիներին էր լեզու հանում: Ձահիլ կարճաթոյ զուռնաչի Խուդին կաշուց դուրս էր գալի այնպէս էր փչում: Իսկ պառաւ ուստայ Մնացականը մէջքը արհամարհանքով շուռ էր տըւել դէպի ուստայ Խուդին և պարզ ցոյց էր տալի իր արհամարհանքը դէպի այդ նոր ինքնակոչը: Ղրանք զուռնաչիներին հին և նոր սերունդ էին: Մակարբաշին թուշկոտում էր և ոտներով գետինն էր փորում: Վերջապէս նորապսակները հասան իրանց մեծ դրան մօտ... Алексѣй Герасимичъ-ը իր թանգազին ամուսին Ջարդալամի հետ դուրս եկան նորապսակների առաջ: Նոքա ասան Սեդրակին և Մարիամին. Ասլանը մէկ կանգնեց, նայեց այդ գեղեցիկ ջուխտակ տատրակներին և յիշեց իր երիտասարդութիւնը, իր հարսանիքը, իր կեանքի մէջ անցած քաղցր բօպէսները, մի վայրկենում մտածեց, որ իր դարը անց է կացել և արտասուների երկու փայլուն կաթիլներ գլորվեցին թշերի վրա. նա ուզում էր վազել, գրկել իր որդուն, համբուրել նրան, բայց դա բռնաւոր հօր սրտի մի

բօպէական փափագ էր: Ասլանը ծանր քայլերով առաջ գնաց, մեկնեց իր ձեռքը, որ նորապսակները յարգանքով համբուրեցին. հայրը և մայրը զրանց օրհնելով ներս ընդունեցին: Երկինքը պարզ էր, բիւրաւոր աստղեր լուսաւորում էին նրան: Աշունք էր և ցուրտ, տերեւները թափվում էին ծառերից, սենեակների պատուհանները զընգզընգում էին նաղարի և զուռնի ձայնից: Մնացականը սկսեց նաղանի ածել, իսկ Սեդրակի մեծ քոյրը պար գալ. սա կանգնեց մէջ տեղը, ծանր, կոտորվելով և նաղելով, կամաց կամաց բարձրացրեց իր կռները, աչքերը խորհրդաւոր կերպիւ պտտեց, առաջ նայեց իր մարդուն, տեսաւ, որ նա ուրիշ բանով է զբաղված, կրակոտ, սրտի խորքը թափանցող հայեացք զցնց մի սիրուն երիտասարդի վրա, որին հաւանում էր և յետոյ սիրամարգի նման փոքրիկ քայլիկներով սկսեց թեթեւ շարժվել, կարծես մի հրեշտակ էր օդի մէջ լողում... «Մշ շաբա՛ն, դռնաց նաղարաչի Գալուստը և մի քանի կօպէկներ բռնած ձեռքեր մեկնվեցան դէպի պար եկողը. իսկ սրա հաւանած սիրուն երիտասարդը աբասանոց ձեռքը դնելով, թեթեւ սեղմեց աղջկայ ձեռքը: Այսպէս կանայք պար

էին գալի. տղամարդիկը նրանց ձեռքերը կօպէկներ էին ղնում ի հարկէ զուռնաչիների համար, վերջապէս յայտնեցին, որ հացը պատրաստ է: Սեղանի վրա առանձին բան չը պատահեց: Թամազան լաւ էր կառավարում, տիրացու Աբգարը ամեն կենացի վրա յարմարաւոր երգեր էր ասում, իսկ մականները թագաւորի ամեն բաժակ խմելիս, մականբաշու հրամանով կանչում էին:

— Թագաւորի խումբ անո՛ւշ, անո՛ւշ, ուրբա:

Վերջապէս սեղանից եր կացան, եալին պար եկան և հիւրերը ուղեորվեցին դէպի իրանց տները: Ամենից ուրախ զուռնաչի Մնացականը դուրս եկաւ. նա տաս երեք մանէթ շաբաշի փող էր հաւաքել...

— Եէն կենայ աղա Ասլանը, ասում էր նա գնալով:

IV

Սեղրակը իր կրթութիւնը ստացել էր տեղական ուսումնարանում, որի վրա օրիորդաց ուսումնարանի հետ տարեկան չորս հազար մանէթ ծախս էր լինում: Ինքը մի աղա մարդու որդի կամեցել էր նոյն տղայութիւնը անել և ուսումնարանում, այնպէս որ ուսուցիչները

անկարող էին եղել նրան մի որոշ ուղղութիւն տալ, նախապատրաստել կեանքի համար: Սեղրակը խօսում էր ուրիշ խօսքերով, գատում էր հօր պատուութեամբ, գործում էր նրա կամքով: Ուրիշ էր Մարիամը: Այդ ընդունակ աղջիկը հարուստ պաշար էր դուրս բերել օրիորդաց ուսումնարանից և զանազան գրքեր կարդալով բաւական զարգացել էր, այնպէս որ նա աւելի լաւ վարժուհի էր Սեղրակի համար, քան թէ ամուսին:

Առաջին ամիսները բաւական խաղաղ անցկացան: Ամուսնութեան առաջին քաղցր ամիսները թռան գնացին... Պարտիզապատ գիւղի սովորութիւնն էր, որ երիտասարդները ամուսնանալուց հաղել երեք, չորս ամիս անցած գընում էին օտար երկիրներ և շատերը նրանցից տարիներով չէին վերադառնում: Կանանց մնում էր տնտեսութեամբ պարապել:

Երեք ամիս էր անց կացել Սեղրակի ամուսնութիւնից յետոյ: Երեկոյ էր, Ասլանի ընտանիքը հաւաքվել էր մի սենեակում: Գիւանի վրա նստել էր Ասլանը, քիչ հեռու իր թանգագին կէսը, մի կողմն էլ Սեղրակը և Մարիամը: Ամենքը լուռ նայում էին Ասլանին, սպա-

սում էին, որ նա սկսի խօսակցութիւնը: Բու-
խարում պառկած կատուն անգամ չուռ նայում
էր Ասլանին:

— Էգուց գնա պաշարածնա վեր առ, դի-
մեց Ասլանը Սեդրակին, ընդմիջելով խորհրդա-
ւոր լռութիւնը:

— Ո՞ւմ համար Ափի, հարցրեց Սեդրակը:
Մարիամի սիրտը խփում էր:

— Քեզ համար, պատասխանեց հայրը,
բաւական է ինչ տանը մնացիր: Մենք գործեր
ունենք, պէտք է գնաս Մօսկօյ, հսկես առու-
արի վրա:

— Լաւ կը լինի:

— Երկու օրից յետոյ պէտք է գնաս, շուտ
պատրաստվիր:

Մարիամը տեսնում էր իր սկեսարի վճռողա-
կան դէմքը, բայց չը կարողացաւ համբերել և
ասաց.

— Մի՞թէ այնքան հարկաւոր գործ է, որ
Սեդրակը այդքան շուտ պէտք է գնա. միթէ նա
չէ կարող մի քանի ժամանակ էլ մնալ...

— Գործը միշտ հարկաւոր է, ընդմիջեց
Ասլանը, իսկ նրա մնալը քո բանը չէ. Էդպէս
դու ինձ հետ չը պէտք է խօսես. առձեռն է ու-

ղեմն երկու օրից պատրաստ լինես, դիմեց նա
Սեդրակին և դուրս գնաց սենեակից: Նրան
հետեւեց և իր կինը:

— Ի՞նչի դու այդպէս շուտ համաձայնեցիր
հօրդ հետ, ասաց Մարիամը Սեդրակին, երբ
նրանք մենակ մնացին: Երեւի դու էլ ուզում ես
շուտ գնալ, հեռանալ ինձանից...

— Հօրս կամքը պէտք է կատարեմ, ես ինչ-
պէս կարող եմ նրան հակառակել. դու էլ
իզուր ասացիր, նա խօ քեզ էլ չը լսեց և մի
և նոյն ժամանակ նեղացաւ քեզ վրա:

— Բայց ես ուզում եմ, որ դու էլի մնաս.
հարկաւոր գործ չը կայ, մենք նոր ենք պսակ-
վել: Նս չեմ ուզում քեզանից հեռու լինել,
աղաչում էր Մարիամը Սեդրակին, փաթաթ-
վելով նրան:

— Կամաց, կամաց, հայրը կը լսէ. անկա-
րելի բան ես ուզում. պէտք է գնալ. Ափին
ասում է որ գործը միշտ հարկաւոր է, պատաս-
խանեց Սեդրակը, դու էլ նրան պէտք է խո-
նարհ լինես...

Առաջին անգամ չէր, որ Մարիամը այսպիսի
խօսքեր էր լսում իր ամուսնից: Առաջին ան-
գամ չէր, որ նախատվում էր իր սկեսարից...

նա շատ լաւ հասկանում էր իր ամուսնական իրաւունքները, բայց ում ասէր, ում գանգատ վէր, ումից պաշտպանութիւն խնդրէր: Մի քանի այսպիսի նախատինքներ, մի քանի այսպիսի թուլութիւններ ամուսնի կողմից և կինը առաջին պատահողը գիրկը կրնկնի...բայց ո՞վ է մտածում սրա վրա, ո՞վ նրան մարդատեղ է դնում,.

— Աւրեմն պէտք է դնաս, Սեդրակ, ասաց Մարիամը և արտասուքները թափվեցան նրա աչքերից...

Ափսոս չե՞ս, Մարիամ, որ լաց ես լինում: Ափսոս, որ չեմ կարող արտասուքներիդ քաղցր կաթիլները հաւաքել: Լաց մի լինիր, իմ քաղցրիկ, կամքիդ մատաղ լինեմ, Մարիամ...Բայց հայրը հրամայեց և որդին երկու օրից յետոյ ծանապարհին էր դէպի Մօսկվա...

V

Մարիամը մնաց իր սկեսորի կատարեալ իշխանութեան տակ: Պէտք է նրա բոլոր կամքերը կատարէր, պէտք է նրա բոլոր ցանկութիւնները գուշակէր, պէտք է նրա վերաւորանքները տանէր. հարսանիքից երեք ամիս յետոյ, այն ժամանակ երբ ամեն մի կին իրան

զրախտումն է համարում, Մարիամը այդ ժամանակ պէտք է ապրէր Հայրապետնեց Ասլանի համար: Իսկ պառաւի խիղճը նրան չէր տանջում. նորա համար անհասկանալի էր, որ որդին և հարսը իրանց համար են ստեղծված, իրանց կամքը պէտք է ունենան: Ոչ, նոքա ստեղծվել են պառաւի համար, նորա խաղաղիկներն են: Պառաւը իր բռնաւորութիւնը տաւածում էր կոպտաբար Մարիամի վրա, որովհետեւ դա իր ստորագրեալի, Սեդրակի, ստորագրեալն էր... Այլ ևս չեմ կարող համբերել, Սեդրակ, գրեց նա մի նամակ, եկ չուտով: Ինձ ամեն բօպէ նախատում են...եթէ դրանք կանգնում եմ, հայրդ ասում է, որ ես սիրեկանի ծանապարհ եմ սպասում... եթէ մի մարդու նայում եմ, ասում է, որ դա ո՞վ է, որ դրան այդպէս մտիկ ես տալի... եթէ մի գիրք եմ կարդում, ասում է, որ սիրահարութիւն ես սովորում...» Սորա պատասխանը հօր նամակումն էր գրած. «Սփի, Մարիամին ասա, որ քեզ հնանդանդ լինի...» Այլ ևս Մարիամին չէին տալի Սեդրակին առանձին նամակ գրել և ինքն էլ ցանկութիւն չունէր գրելու. Սեդրակը չը կարողացաւ նրան պաշտպանել, Սեդրակը չէր

կարող նրան պաշտպանել, նա կրաւորականութեան էր հասցրած, Սեդրակը կորցրեց իր համարումն Մարիամի աչքում: Մէկ մարդ պատահէր Մարիամին, մէկը թող նրան համակրէր, երկու միտիթարական խօսք ասէր, և Մարիամը նրա գիրկը կընկներ, նրա ստրուկը կը լինէր... բայց ո՞վ կար Պարտիզապատում:.. Ոչ ոք չուներ Մարիամը, որին գանգաւակէր, նա որք էր, ազգականները նրան չէին հասկանայ և եթէ պատմէր էլ նրանց, պէտք է Սեդրակի խօսքերը կրկնէին:

Տարի ու կէս անցել էր Սեդրակի գնալուց: Մեծ պատի առաջին շաբաթվայ ուրբաթ երեկոն էր: Սուրբ Շմաւոն եկեղեցում ժամը արձակվել էր: Մերունի քահանան (զա Մարիամի կրօնի ուսուցիչն էր) սև փիօնը ծածկած, չոքել էր կանանց դասում, նորա ետեւից խոստովանող կանայքն էին կանգնել ամենից յետ Մարիամն էր: Կանայք պատկառանքով մօտենում էին քահանային, ստանում էին միտիթարական խօսքը և հեռանում: Ամենից վերջը մօտեցաւ Մարիամը, ծնկի վրա ընկաւ և արտասուք թափելով պատմեց ամեն բան իր նախկին ուսուցչին: Մերունին լսում էր և գլուխը շար-

ժում: Երբ Մարիամը վերջացրեց, նա ասաց.

— Աղօթիր, Մարիամ, աղօթքի մէջ հանգստութիւն կը գտնես: Հնազանդվիր քո վեճակիդ: Փրկիչը հեղութիւն է քարոզում:

Մարիամը հեռացաւ մի փոքր թեթեւացած, բայց երկար չըտեւեց այդ դրութիւնը. նա 17 տարեկան էր, նորան սէր էր հարկաւոր, նրան կեանք էր հարկաւոր... մէկը չը կար, որ ասէր. «Արի ես սփոփեմ ցաւերդ», մէկը չասաց նրան. «Դու միայն ուրիշների համար չես ստեղծվել, քեզ համար պէտք է յապրես. արի, գնանք փախչենք. ապրենք միասին, ես քեզ երջանիկ կաննմ»: Զը կար տղպիսին և մինչև հիմա էլ չը կայ: Ես էլ ընթերցող, կը վերջացնեմ պատմութիւնս, մինչև այդպիսի մէկը երևան զայ... Բարով մնաս իմ սիրուն, իմ քաղցրիկ, իմ հոգւոյս հատոր Մարիամ:

Մ Ա Ր Ի Ա

I.

Յունվար ամիսն էր: Այն օրերից մէկը, երբ վաճառականները և կոմիսիօներները Փօթիում աւելի շատ են զբաղված, օրովհետեւ այդ օրը մի քանի նաւ էր եկել և մի քանիսն էլ զընում էին: Ամեն տեղ աղմուկ և վազվզոց էր: Վաճառականները շապեցնելով մշակներին, մի քանիսը իրանց ապրանքը նաւի վրա էին դրած և տալիս, միւսները նուեւ զիւր բերում: Այնտեղ շոգենաւերից մէկը, բոլորովին պատրաստ դէպի ճանապարհ, կապիտանի հրամանից յետոյ, շարժում է իր անիւները և վրդովելով Ռիօնի հանգիստ մակերեւոյթը վազում է առաջ, թողնելով իր ետեւ ալիքներ, որոնցից փախչում են փոքրիկ նաւերը:

Շոգենաւի վրա անց ու դարձ են անում զանազան մարդիկ, մի քանիսը երեսը խաչ հանելով, իսկ միւսները նայելով Ռիօնի ափերին, որոնց նրանք թողնում էին: Մի ուրիշ նաւ դեռ նոր է պատրաստում իր շօգիները, որոնք բար-

կանալով դուրս են թափվում խողովակներից. արեւը բաւականին բարձրացել էր, նրա ճառագայթները, անցնելով Ռիօնի ջրերից խառնվում էին յատակում, երեւեցած ամպերի ցողացման հետ:

Արեւ մարդ մօտենում էին ափին, դէպի այն կողմը, ուր միշտ կանգնած էին լինում նաւակներ: Նրանք հագած ունէին եւրօպական հագուստներ: Նրանք կարծես հաւասար մարդիկ էին, կարելի է ընկերներ, այդպէս գոնեա երեւում էր նրանց քայլուածքից, բայց եթէ մօտիկ լսէին նրանց խօսակցութիւնը, կերևար, որ պարոններից մէկի ձայնը աւելի հրամայողական էր և թէպէտ միւսները նրան ասում էին «դու», բայց այդ զգուշ փաղաքշական էր: Երեւում էր, որ միւսները կախում ունէին նրանից: Սրա դէմքը մաշված էր, աչքերի տակ սև գիծ էր անցկենում, երեւում էր, որ սա բաւական շոյլ կեանք է անցկացրել: Միւսները դրանից շատ քիչ էին զանազանվում:

— Ուրեմն, Օսինկա, դու այստեղ կը սպասես, մինչև Վասօի դալը:

— Գիտեմ, ես լաւ սովորել եմ իմ դասը. բայց ասա խնդրեմ, Ստեփան, ինչե՛ր համար

դիմել այդպիսի միջոցներին. կարծես ուրիշ կերպ չէ կարող լինել:

— Ես ասում եմ, որ չէ՛ կարելի, ասաց երիտասարդներից նա, որին դիմեց Օսինկան կիսաընկերական և կիսահրամայողական ձայնով. մի՞թէ այդքանը քեզ բաւական չէ: Իսկ եթէ դու ինձ չես ուզում օգնել, այդ ուրիշ բան է:

— Այդ մասին ես չեմ խօսում, հարցը դրա մէջ չէ. ես ուզում էի, որ կարճ միջոցում լինի և այդպէս չերկարանայ, ասաց Օսինկան:

— Եղբայր, մենք դրա մասին արդէն խօսեցինք, խառնվեց երրորդ երիտասարդը, Վասօն, էլ ի՞նչի ես երկարացնում:

Վերջապէս, Օսինկա, ասա կարճ, որ դու ինձ չես ուզում օգնել. դու գիտես, մի և նոյն է, ասաց Ստեփանը:

— Լաւ է, զնացէք. ինձ համար էլ մի և նոյն է, այդ որսը իմ սեղանի համար չէ պատրաստվում, ես այստեղ սպասում եմ:

— Ուրեմն ցտեսութիւն, իմ ապագայ բժիշկ:

— Ցտեսութիւն իմ ապագայ հիւանդ, ասաց Օսինկան:

Երիտասարդներից երկուսը, Ստեփանը և Վասօն, սեղմեցին Օսինկի ձեռքը և նստեցան

ափի մօտ կանգնած երեք թիաւարներով նաւակի մէջ:

— Որ կողմը, հարցրեց թիաւարներից մէկը:

— Դէպի փարոսը, ասաց Ստեփանը, նրստելով նաւակի մէջ: Թաւարները խփեցին իրանց թիկերը և նաւակը սողալով Բիօնի երեսին, վաղեց դէպի ծովը, որի մօտ գտնվում էր փարոսը:

II.

ՍԼ ծովից փոքր ինչ հեռաւորութեամբ, Բիօնի ափին գտնվում է փարոսը, որը ամեն զիշեր լուսաւորված է լինում նաւերին ճանապարհ ցոյց տալու համար: Այդ ահագին շինուածքը տիրապետում է ոչ թէ միայն Փօթիի վրա, այլ և նրա շրջականների վրա: Փոքրիկ բալկօնից, որ շինած է փարոսի ծայրի չորս կողմը, երևում է մի կողմից ծովի մեծ տարածութիւնը, միւս կողմից Փօթիին շրջապատող դաշտերը, ծածկված անտառներով, որոնք փոքրը ծառերով սկսվում են Փօթիի մօտ, և աւելի ու աւելի հեռանալով դէպի Գութայիս նրանք ստանում են հսկայական դէմք: Կանգնած այդ բալկօնի վրա, նայելով դէպի ծովը և ցամաքը

մարդ զուարճութիւն է զգում, տեսնելով իրան այդպէս մօտ բնութեանը: Այստեղ, հեռու շատ հեռու ավից երկինքը միանում է ծովի հետ, կարծես կազմելով մէկ անանցնելի սահման: Թեթև քամին այդտեղից ծալելով մէկը միւսի վրա բերում է փոքրիկ ալիքներ, որոնք աւելի և աւելի մեծանում են, դիպչում են ավին և փշրվում են բարձր գցելով փոքրիկ կաթիլներ, որոնց միջից անցնելով արևը կարծես կայծեր է կազմում և հօղի վրա թողնում է փոքրիկ ծիածան: Այստեղ և այնտեղ զանազան թռչունները խաղալով իրանց թևերով քամու հետ ընկղմվում են ծովի մէջ և իրանց կտուցով ձուկը բռնած, հեռանում են դէպի ցամաք իրանց աւարով: Այստեղ փոքրիկ նաւակը հաղիւ հաղ երևում է ծովի մակերևոյթի վրա, այնտեղից մի շողենաւ հսկայական քայլերով մօտենում է դէպի ավի: Յամաքից զանազան թռչունների ձայներ են լսվում, նրանց թռում, ագռաւի զըրյորոցը խառնվում է երգիչ թռչունների ճրկճրկալու հետ:

Ահա այստեղ կը խնդրէի իմ ընթերցողին հեռւել ինձ, և ինձ հետ միասին մի հայեացք ձգել փարոսի մօտ գտնված, կիսածուռ տախ-

տակեայ շինուածքի դրան վրա: Այդտեղ նստած է մի աղջիկ, որին 16 տարիից աւելի տալ չէ կարելի: Նա հագնված է հասարակ չիթ դերիա, որի տակից, ինքնահաւանութեամբ դուրս է բերած փոքրիկ, դեղնցիկ ոտք: Նրա սև, խայտառ մազերը երկու հարուստ հիւսեր են ներկայացնում, որոնցից մէկը մէջքի վրա է զգված, իսկ միւսը ընկած է սպիտակ կրճքի վրա, որ մօտակայ ծովի ալիքների նման բարձրանում և ցածանում է: Նրա դէմքը մանուկ երեսայի դէմք է, բայց նայիր նրա վառված աչքերին, նրա լայն կրճքին, նրա բոլոր կազմվածքին և դու կը տեսնես այն կրակով լեքը, հասալին առած աղջիկներից մէկին, որոնց պատահում ես միմիայն հարաւում:

Նրա փափուկ ծնկան վրա յանդգնութեամբ դրել է իր դուխը մի ծերունի և պարկել է գետնի վրա: Աղջիկը մէկ ձեռքով թեք է ընկել սանդուղքի վրա, իսկ միւսով խաղում է ալեորի ձիւնի նման սպիտակ մազերի հետ:

Ծերունու ճակատը և դէմքը ծածկված են կընձիւններով, սպիտակ միրուքը ծածկել է նրա կուրծքը: Ծերունին ուշադրութեամբ լսում է աղջկայ երգը և նրա աչքերից վազած արտա-

սուքները թաց են անում իր ալեզարդ միրուքը:

Լուսինը բարձրից նայում է դրանց վրա և այդ պատկերին տալիս է մի խորհրդաւոր դէմք:

Աղջեկը կարեց երգը, նրա արձագանքը խառնվեց ալիքների աղմուկի հետ:

— Ծարունակիր, Մարիա, ասաց ծերունին, շարունակիր. մէկ այդ քո երգը և մէկ Գրիգորի տեսքը ինձ յիշեցնում են իմ երիտասարդութեան երջանիկ ժամանակները, այն ժամանակները, երբ այս ձեռքերը մի անգամից բարձրացնում էին առագաստը, երբ այս կռները ուժով խփում էին թիերը և նաւակը մի քանի քայլափոխ առաջ էին գցում: Ծերունին այս ասելով ձեռքը տարաւ իր միրուքին և այդպէս լուռ մնաց, կարծես նա ընկղմվեցաւ անցեալի մէջ:

— Դու ծովը շատ էիր սիրում, հայր, ասաց աղջեկը փաղաքշելով ծերունուն:

— Հա, լաւ ժամանակներ էին, շարունակեց ալեւորը, կարծես հետևելով իր մտքերին, շատ լաւ ժամանակներ էին: Մանաւանդ երբ ես պսակվեցայ: Այն ժամանակ ես չէի ափսոսում, երբ հեռու ճանապարհորդութենից գալիս էի ցամաքը, երբ զըկվում էի ծովի հսկայական պատկերը տեսնելուց... հա, չէի ափսոսում,

որովհետեւ ափին ինձ սպասում էր Սալոմէն: Ես լաւ յիշում եմ այն քաղցր լուսին, երբ նրա հետ ամբողջ տարի ու կէս չը տեսնուէրուց յետոյ, նա իմ առաջը դուրս եկաւ 8 ամսական Գրիգորին դռնէն կապած: Սա քո որդին է, Զաքար, ասաց նա և ցոյց տուեց երեխային: Մի և նոյն դէմքը, որ հիմա դու տեսնում ես, մի և նոյն դէմքը ունէր Գրիգորը երեխայ ժամանակ: Երբ առաջին անգամ ինձ տեսաւ մանուկը, նա պտրդեց դէպի ինձ իր առողջ ձեռքը և զլխարկս մէկ սաժէն հեռաւորութեամբ գցեց, այն ժամանակ ես 47 տարեկան էի, հիմա անցել են 30 տարի և այն երեխան իմ Գրիգորը, որ փետուրի նման թեթեւ էր, այս լուսիններէի խաղում է ծովի զայրացած տլիքների հետ: Նա այժմ երջանիկ է:

Ծերունի Զաքարը սիրում էր միշտ պատմել իր անցեալը: Շատ անգամ Մարիան մի և նոյնը լսել էր նրանից, շատ անգամ տեսել էր ծերունու սպիտակ միրուքի վրա փայլուն արտասուք անցեալը մտաբերելիս, բայց կրկին նա ուշադրութեամբ լսում էր, լսում էր, որովհետեւ դիտէր, որ այդ պատմութիւնը ծերունուն թեթեւացնում է:

— «Դու կրկին գնացիր ծովը, հայր, ասաց Մարիան, և երբ վերադարձար:

— Հա, գնացի... վերջին անգամ գնացի, իսկ երբ վերադարձայ Սալոմէն չը կար. նա իր շունչը փչել էր Աստուծուն: Մնաց ձեռքիս երկու տարեկան Գրիգորը և նրա համար ես մնացի ցամաքի վրա: Իմ բոլոր կեանքը կենտրոնացաւ Գէորգի վրա, նրան ես գոհեցի ծովը, նրա համար հայրը և մայրը ես էի: Երբ նա բաւական մեծացաւ, ես տանում էի նրան փոքրիկ նաւակով ծով, սովորեցնում էի թիավարել, իսկ տան և հինգ տարեկան հասակում նա ամենալաւ թիավարն էր: Իմ պատկերը ես նրա մէջն էի տեսնում... հա, շատ նմանութիւն կայ իմ և նրա մէջ, ասաց նա, կարծես ինքն իրան, միայն նրա վերջը... ես չէի ուզէնայ, որ նրա վերջն էլ իմ նման լինի... Մարիա, ի՞նչ ասաց նա քեզ վերջին անգամ գնալիս, հարցրեց նա յանկարծ:

— «Ապասիր, Մարիա, սպասիր, յիշեր և ինձ մի մոռանայ:»

— «Ապասիր, յիշեր և ինձ մի մոռանայ,» նոյն խօսքերը, որ ես Սալոմէին ասացի: Հա, ինձ խիստ է նման Գրիգորը: Ես յիշում եմ,

ինչպէս նա, երբ մէկ անգամ մենք փոքր նաւակով գնացել էինք ծովը, փոթորիկ բարձրանալուց յետոյ, խնդրում էր, որ մենք փոխանակ դէպի ափ թիավարելու, դէպի ծովը գնանք, իսկ երբ ես թոյլ չը տուի, նա սկսեց դէպի ցամաքը թիավարել, բայց ժամանակ առ ժամանակ կրակոտ հայեացքներ էր դնում դէպի ծովի խորքը, կարծես նա մենամարտութեան էր կանչում ալքներին, կարծես նա ուզում էր ասել. «ես ստիպված եմ փախչել ձեզանից, բայց ուրիշ անգամ կը պատահենք:»

— Դու մասնակցեցիր նրա առաջին ճանաչորդութեանը ծովով, հարցրեց Մարիան:

— Չէ, ես պատրաստվում էի, բայց իմ մի ընկեր թիավար մեռաւ ձեռքերիս վրա և քեզ երկու տարեկան երեխիդ թողեց իմ հովանաւորութեան տակ: Ես թողի իմ որդուն և սկսեցի քեզանով պարապել: Այն ժամանակից դու իմ անբաժան ընկերն ես, ես սիրեցի քեզ իմ որդու չափ, Մարիա, և այժմ դու վաճարում ես իմ սիրոյ փոխարէնը:

Մի արտասուք զորովեցաւ ծերունու սպիտակ միւրուքի վրա, աղջկը իր սիրուն ձեռքերով գրկեց նրա ալեղարդ գլուխը:

— Ես միշտ կը սիրեմ քեզ, դու իմ երկրորդ հայրն ես, դու իմ հարազատ հայրն ես, ասաց նա վերջապէս երկար լռութենից յետոյ:

— Սիր, Մարիա, ասաց ծեր Զաքարը մի քննող հայեացք ձգելով աղջկայ վրա, դու սիրում ես Գրիգորին:

— Հա սիրում եմ, քեզանից յետոյ նրան եմ սիրում: Նա իմ եղբայրն է, իմ բարեկամը, ի՞նչպէս կարող եմ չը սիրել նրան: Ի՞նչպէս կարող եմ մոռանալ նրան, իմ մանկութեան ընկերոջը:

— Հա, սիրիւ նրան, Մարիա, ես երջանիկ կը մեռնեմ երբ կը տեսնեմ ձեզ պսակված:

Աղջկէ կարմրեց: Նա անհանգստութեամբ իր աչքերը չորս կողմը դարձրեց, կարծես վախենալով, որ մէկ ուրիշը կարող է այդ խօսքերը լսել... Նա յիշեց այն երիտասարդին, որ արգէն քանի օր է շրջում էր փարոսի չորս կողմը և շուաքի նման ամեն տեղ հետեւում էր Մարիային: Անծանօթը շատ հետաքրքրում էր Մարիային: Աղջկէ շուտ ընդմիջեց ծերունու խօսքը:

— Քննելու ժամանակ է, հայր, ես արգէն պատրաստել եմ քո անկողինը, գնանք:

Ծերունին համբուրեց աղջկան և իր ձեռքը նրա ուսին դրած մտաւ տուն: Մի քանի ժամից յետոյ ամեն տեղ լռութիւն էր տիրում: Ծովի հանգիստ մակերևոյթի վրա պառկել էր փարոսի հսկայ շուաքը...

Երկար ժամանակ մի կողմից միւս կողմը պտըտում էր Մարիան իր անկողնի մէջ այդ գիշեր, բայց չէր կարողանում քնել: Նրա առաջ կանգնած էին Գրիգորը և իր տեսած անծանօթը, այդպէս էր թւում աղջկան: Նա չիր աչքերը հեռացնում էր, բայց այդ երկու մարդիկ կրկին նրա առաջն էին: Նրա երեւակայութեան մէջ այդ պատկերը փոխվում էր: Ծերունու մօտն էր Մարիան: Զաքարը ասում էր, որ երջանիկ կը մեռնի, երբ կը տեսնէ Մարիային ամուսնացած Գրիգորի հետ... իսկ այն անծանօթը մօտիկ կանգնած, լսում էր այդ խօսքերը:

Աղջկէ իր սրտում նեղանում էր ծերունու վրա, նեղանում էր անծանօթից, որ նա այդ խօսքերը լսում էր...

Մարիային թւում էր, որ իր անծանօթը հեռու կանգնած է և կանչում իրան և ինքն էլ չէ կարողանում ընդգրիմանալ, ուզում է վազել նրա մօտ գրկել նրան...

Նա վերկացաւ անկողնից, մօտեցաւ պատուհանին և բաց արաւ: Լուսնի արծաթեայ ճառագայթը ընկաւ նրա սպիտակ, մերկ կուրծքի վրա: Նա գցեց իր հայեացքը հեռու, անսահման տարածութեան մէջ և այդպէս երկար մնաց այն դրութեան մէջ, երբ ուղեղը այլ ևս չէ աշխատում ու մարդու գոյութիւնը զգացմունքի մէջ է կենտրոնանում:

Մարիան ցուրտ զգաց...

— Ես չեմ սիրուն Իրիգորին, հայր, չեմ սիրում նրան, ասաց նա բարձր և փակեց պատուհանը:

— Չեմ սիրում նրան, կրկնեց խորխոս փաբոսի արձագանքը:

III

— Է՛յ, ո՞վ կայ այդտեղ, մենք ուզում ենք փարոսը տեսնել:

Այս ասողը Ստեփան, կամ Ստեպկօն էր, ինչպէս ընդունված էր նրան կանչել իր ընկերների մէջ:

Մամաջանեանց Ստեպկօն մի շատ հարուստ մարդու որդի էր, այնքան հարուստ, որ կարող էր պարծենալ, թէ Թիֆլիսի կէսը իրանն է:

Հարստութեան հետ Ստեփանի հայրը ուս-

ել էր և կրթութիւն: Ռուսաստանի համալսարաններից մէկումն էր դասախօսութիւններ լսել Ստեփանը, բայց այնտեղից դուրս էր եկել նոյն դասարկ գլխով, որով մտել էր:

Փոխանակ սովորելու, նա քէֆ էր անում, սիրեկաններ էր պահում և փոխում էր նրանց, ինչպէս շապիկը փոխում են: Նա լաւ երգում էր օպերեաներից, կանանց հասարակութեան մէջ անման էր, գիտէր ժամանակին մի օրիորդի շողքօրթով խօսք ասել, իսկ պսակված տիկնոջը բարեկեղիս սովորականից աւելի պինդ սեղմել ձեռքը: Ստեփանը իրան շրջապատել էր իր նման ընկերներով, որոնք նրա հաշուով էին ապրում և մի և նոյն ժամանակ նրա նպատակներին ծառայում: Ստեփանը ունէր փող, գումար, այդ միակ բանը, որ իրաւունք է տալի ամեն բան անելու և ամեն բան անում էր: Նա այժմ եկել էր մի քանի օրով Փօթի և չէր ուզում վերադառնալ Թիֆլիս առանց սովորական որսը անելու, իսկ այդ որսը նա տեսել էր փաբոսի մօտ, որտեղ նա հիմա կանչեց պահապանին, որ զուրը բաց անեն և ցոյց տան նրան փարոսը:

— Պահապանը այնտեղ չէ, պարոն, ասաց

Նրան Մարիան, ես կը բաց անեմ ձեզ համար դուռը:

— Հա, խնդրեմ բաց արձ, ասաց Ստեփանը և աղջկայ վրա ձգեց մի կրակոտ հայեացք, որի առաջ Մարիան աչքերը վեր թողեց:

Դուռը բացվեց և Ստեփանը Վասսի հետ մտան փարոսը և սկսեցին բարձրանալ սանդուղքով:

Բայց դեռ կէսին չը հասած յանկարծ մի ձայն լսվեցաւ և Ստեփանը ընկաւ սանդուղքների վրա:

Վասոն նրան ցած բերեց: Այդ աղմուկը լսելով դուրս եկաւ և ծերունի Զաքարը: Վասոն դիմեց նրան:

— Իմ բարեկամը յանկարծ հիւանդացաւ, նրան այժմ չէ կարելի տանել, չունէք արդեօք մի սենեակ, որտեղ դնենք նրան մինչև բժշկի բերելը: Ես ձեզ կը վարձատրեմ:

— Չէ հարկաւոր, ասաց ծերունին: Մարիա, դիմեց նա աղջկան, տուր դրանց քո սենեակը ատ. ժամանակ, իսկ դու ինձ մօտ կը լինես:

Ստեփանին տարան սենեակը և դրին Մարիայի անկողնի վրա: Վասոն գնաց բժշկի ետևից, ծերունին դուրս եկաւ և հիւանդի մօտ

Ֆնաց Մարիան: Նա նայում էր Ստեփանի մաշված, գունաթափ երեսին:

Աղջկը ճանաչեց անձանոթ իրիտասարդին, որ անդադար շրջում էր փարոսի չորս կողմ: Նա մօտեցաւ նրան, կռացաւ և երկար հայեացք ձգեց հիւանդի վրա. կարեկցութիւն գծազրկեցաւ Մարիայի երեսին:

— Մի բաժակ ջուր, ասաց հիւանդը թոյլ ձայնով:

— Իսկոյն:

Մարիան բերեց ջուրը, բարձրացրեց հիւանդի գլուխը և մօտեցրեց բաժակը նրա շրթունքներին: Հիւանդը խմեց, յետոյ նայեց Մարիայի վրա: Նրանց հայեացքները պատահեցան:

— Շնորհակալ եմ... ի՞նչպէս է անունդ:

— Մարիա:

— Շնորհակալ եմ, Մարիա:

Եկաւ բժիշկը դրեց մի դեղ և արգելեց հիւանդին տեղափոխել, ասելով, որ դրանից Ստեփանը կարող է մեռնել:

— Գոնեա մի երկու շաբաթ հարկաւոր է դրան այստեղ թողնել, իսկ յետոյ կարծեմ կարելի է տեղափոխել, ես երեկոյեան ելի կը մտնեմ, ասաց բժիշկը, վերցնելով իր գլխարկը:

— Ի՞նչպէս պէտք է գործածել այդ դեղը, հարցրեց Մարիան:

— Դո՛ւ կը ծառայես հիւանդին, շատ լաւ. արվէք ամեն երկու ժամից յետոյ մի մի բաժակ այդ դեղից, այս ասելով բժիշկը կամ աւելի լաւ է ասել Ստեփանի մտերիմ Օսինկան դուրս գնաց սենեակից:

Մարիան մնաց հիւանդի մօտ: Նա ծառայում էր հիւանդին, տալիս էր նրան դեղ, ուղղում էր նրա բարձերը, խօսում էր նրա հետ:

IV

Անցան ութ, ինն օր: Մարիան փոխվեց. նրա առաջվայ միշտ ուրախ դէմքը միայն այն ժամանակ լինում էր հանդիստ, երբ նա խօսում էր հիւանդի հետ կամ նրան ծառայում: Այդ փոքրիկ ծառայութիւնները աւելի շուտ և շուտ էին կրկնվում: Հիւանդի և Մարիայի յարաբերութիւնները բարեկամական էին իսկ բարեկամութենից դէպի սէրը մեծ չէ հեռաւորութիւնը:

Անցան ութ, ինն օր. Մարիան Ստեպկօից չէր հեռանում՝ նրանք երկուսը անբաժան էին: Ստեպկօն հետզհետէ առողջանում էր: Նրանք միասին նստում էին վառած բուխարի առաջ,

միասին անցնում էին փարոսի չորս կողմը: Մի կար, կամ կիսագործ չուլքին ձեռին Մարիան միշտ Ստեփանի կողքին էր լինում, ժամանակ առ ժամանակ նա բարձրացնում էր իր սիրուն աչքերը, մի հայեացք էր գցում Ստեփանի վրա, մի թափանձիկ հայեացք, որ կարծես սիրտն էր մտնում, տեսնելու թէ այնտեղ ինչ է լինում: Կարծես Մարիան մոռացաւ ծերունի Զաքարին, չը կար այլ ևս առաջուայ հոգատարութիւնը, նա էլ չէր երգում ծերունու սիրած երգը, չէր նստում նրա հետ դուրսը և Գրիգորի վրա խօսում: Ստեփան, Ստեփան և միշտ Ստեփան, սրա մօտ էր լինում Մարիան:

Մարիան տասն և վեց տարեկան էր արդէն: Նա այն հասակումն էր երբ ամեն աղջիկ, ամեն երեխայ կին է դառնում: Այդ փոփոխութիւնը նշմարվում էր և Մարիայի մէջ: Նա անհանգիստ էր լինում, ընկնում էր յանկարծ մտածմունքի մէջ, բայց թէ ինչի վրա էր մտածում, ինքն էլ չը գիտէր: Անցնելու ժամանակ նա յանկարծ բռնում էր Ստեփանի ձեռքը և քաշ էր ընկնում նրա ուսից:

— Ախ Ստեփան, էլի կրկնիր ինձ, որ սիրում ես ինձ, էլի մէկ անգամ ասա:

— Սիրում եմ և միշտ կը սիրեմ, թող բոլորը, լսիր ինձ: Ինչ պէտք է լինի քեզանից այստեղ, այդ մարդիկը չեն կարող քեզ գնահատել, իսկ մենք միասին երջանիկ կը լինենք:

— Դու ինձ կը թողնես Ստեփան: Այս ինչի տեսայ քեզ, ինչի դու հիւանդացար, ինչի եկար մեր տուն, ասում էր աղջկը յուսահատված:

— Քեզ թողնել, չէ Մարիա, երբեք ես քեզ չեմ թողնի: Մենք անբաժան կը լինենք: Ես ինչի պէտք է թողնեմ քեզ. ես հարուստ իսկ դու գեղեցիկ. ասում էր Ստեփանը սեղմելով Մարիայի ձեռքը:

— Մի բան մոռանում ես, չէ՞ որ դու կամուսնանաս, իսկ այն ժամանակ... ինձ կը թողնես... մի ուրիշ կնոջ համար... ոչինչ, թող ինձ, բայց ոչ թէ ուրիշ կնոջ համար, աւելի լաւ է մեռնել:

— Ամուսնանալ: Ձեմ հասկանում թէ դու ի՞նչի ես կարծում, որ մենք ամուսիններ չենք լինի: Անպատճառ հարկաւոր է, որ քահանան մեզ պսակէ, այդ է քո կարծիքով ամուսնութիւնը:

— Բաս ուրիշ ի՞նչ կարող է լինել, ասում

էր Մարիան զարմացած, առանց քահանայի ամուսնութիւն...

— Երեխայ ես, հոգիս: Մենք միասին կապենք, ուրիշն չեմ առնի կնութիւն, սա ամուսնութիւն չէ բաս ի՞նչ է:

Այսպէս խօսելով նրանք մօտենում էին փարոսին: Ստեփանը յոյսեր էր տալիս, փողաքշում էր աղջկան. սեղմում էր նրա ձեռքը: Մարիան հետզհետէ անշարժ էր դառնում, նա իր հայեացքը ցցում էր մի առարկայի վրա և ելչէր հեռացնում:

Նրանք մօտեցան փարոսին, բաց արին դուռը և մտան ներս: Լսվեցան նրանց քայլերի ձայնը, որ աղմուկով կրկնեց փարոսի արձագանքը: Քամին փչում էր, երկինքը ամպերով էր ծածկվել և փարոսի շրջակայքի վրա կիսամութ էր տարածվել:

— Գլուխս պտուտ է գալիս, ասաց Մարիան և իր գլուխը դրեց Ստեփանի ուսի վրա...

— Դու երեւի վերեւ նայեցիր, ասաց Ստեփանը, ծածկիր աչքերդ՝ այդ սանդուղքի պտոյտներին է:

Աղջկը ծածկեց աչքերը, նա աւելի մօտիկ կպաւ Ստեփանին...

— Կարծես այստեղ մի մարդ կայ, ասաց Մարիան, ես վախենում եմ:

— Չէ, մի վախենայ, նստի՛նք այստեղ. բայց ինչպէս խփում է քո սիրտը, ասաց Ստեփանը և սկսեց աւելի պինդ սեղմել աղջկայ ձեռքը:

Նա իր ձեռքը փաթաթեց աղջկայ մէջքին և այդպէս մնում էին մի քանի րոպէ:

Աղջկը հետզհետէ թուլանում էր: Նրա շըրթունքների վրա անզգայ մի ժպիտ էր խաղում: Կուրծքը անհանգիստ բարձրանում էր և թեթևանում էր ծանր և խորը հառաչանքներով: Նա սկսեց լաց լինել ինքն էլ չը գիտենալով ինչի համար, առաջ կամաց, յետոյ բարձր, յետոյ էլի կամաց: Նա սեղմում էր Ստեփանի ձեռքը և ժամանակ առ ժամանակ իր աչքերը բարձրացնում էր նրա վրա:

— Սօտեցիր, էլի էլի, շնջում էր աղջկը, այդպէս... Ստեփան դու ինձ սիրո՞ւմ ես:

— Սիրում եմ, երգում եմ քո բաղդով: Նոքա լռեցին և այդպէս գրկած մնում էին մի քանի ժամանակ...

Այժմ քո սիրտը չէ՞ խփում, Մարիա, ասաց Ստեփանը:

— Ո՛չինչ, կանցնի, տուր միւս ձեռքը, աս-

ում էր Մարիան աւելի և աւելի կամաց, տուր... այդպէս... դու ինձ չե՞ս թողնի... ասա...

V

Ժամանակը անցնում է և ամեն բան փոփոխութեան է ենթարկում: Տեսնում ես այսօր մի պատուաւոր մարդ, հիանում ես նրանով, բաղդաւորութիւն ես համարում նրա ձեռքը սեղմել, վաղը նա ընկնում է, անպատիւ է լինում և դու քեզ հեռացնում ես նրանից. ի՞նչի համար... որովհետեւ ամենքը այդպէս են անում... Մի երիտասարդ յոյսերով լի, աշխատանքի համար պատրաստ գալիս է իր հայրենիքը, ուղում է դործել, սկսում ես հաւանել նրան, բայց վաղը տեսնում ես, որ նա էլ գնաց միւսների շաւղով, հոսանքը նրան էլ տարաւ, իսկ դու անտարբեր նայում ես... ամենքը այդպէս են անում, դրա համար ինքն իրան առաջ եկած կանոն կայ, որին չես կարող ընդդիմանալ... ամենքը այդպէս են անում... հիւանդին հարկաւոր է բժիշկ, ընկնողին պէտք է ձեռք մեկնել, խեղդվողին պէտք է ազատել: Բայց ո՞վ կանէ, ո՞չ ոք չէ անում այդպէս, ես էլ չեմ անի, իմ դործս չէ...

Բայց ո՞ւր է Մարիան, Թիֆլիսի թաղերից

մէկում երկու յարմարաւոր սենեակ միշտ վարձով են տրվում:—Այդ սենեակները շատ յարմարութիւններ ունեն, մանաւանդ դրանց տէրը, որ երբէք չէ հարցնում, թէ այնտեղ ում է բնակվում, ինչ տեսակ մարդ է, միայն թէ իւրաքանչիւր ամիս տան վարձը սկզբից վճարեն: Այդ սենեակները արժեն որ մի հայեացք ձեռք նրանց վրա: Մեծ սենեակը մէկ դուռն ունի դէպի դուրս և չորս պատուհան, միւս դռնով անցնում էք փոքր սենեակը, որ միայն մէկ դուռն ունի դէպի դուրս, պատուհան չունի, միայն դրան վրա ապակիներ կան որոնք միշտ կանանչ վարագոյրներով են ծածկված: Յերեկ և գիշեր սենեակի մէջ կիսամութ է տիրում, որովհետեւ երբէք դրան վարագոյրները չեն բարձրացնում, և միշտ լամպայի լոյսը գիշերով ցածր է լինում: Սենեակի մի անկիւնում վառարանն է, որի դիմացը դրած է մեծ մահճակալ, հասարակ, բայց մեղմ անկողինով ծածկված: Մահճակալի մօտ պատին մի գորդ է կպցրած, իսկ գետնին խալի է փռած: Միայն երկու աթոռ կայ այդ սենեակում մէկը մահճակալի մի գլխին դրած, իսկ միւսը միւս գլխին. մի կամօդ և շորի շկաֆը լրացնում են

սենեակի զարդարանքը: Ժամացոյց չը կայ: Սենեակի կարասիքը գեղեցիկ են և թանգ առած: Միւս սենեակը մի ընդունարան է, որտեղ կայ մի դիւան, երկու բազկաթոռ սեղանի մօտ, որի վրա գեղեցիկ լամպա է դրած, իսկ պատերի մօտ մի դիւժին աթոռ: Սեղանի վրա դրած է սամովար և երկու մաքուր բաժակ: Դիւանի վրա գլուխը կրծքի վրա դրած խորը մտածմունքի մէջ նստած է Մարիան: Նա երբեմն երբեմն բարձրացնում է գլուխը. մի փոքր լսում է և կրկին մտածում: Մի րօպէի մէջ անցնու է նրա փոքրիկ գլխում բոլորը, ինչ որ եղաւ: Ահա նա դուրս է գալի փարոսից Ստեփանի կռանը կպած, «գնանք, գնանք շուտ, փախչենք», ասում է նրան և առանց նայելու դէպի տունը, դէպի իր մանկութեան խաղաղ օրօրոցը, առանց մտածելու ծերունու վրա, մօտենում է Բիօնին, նստում է նաւակը, իսկ միւս օրը Ստեփանի հետ երկաթուղով թռչում է դէպի Քիֆլիս: Երկաթուղու կայարանից ուղղակի գալիս է այս տունը կտուքով, այստեղ մի դառը ժպիտ երևում է Մարիայի գեղեցիկ շրթունքների վրա:

— Նոր աղջիկ պարոն ես բերել, աղա, ասում է դուռը բացանող ծառան Ստեփանին:

Այս խօսքերը այն ժամանակ անհասկանալի էին Մարիայի համար, հիմա նա հասկանում է... Մարիան այս տան առաջին տանտիկինը չէ...

Չանգի ձայնը վերջ դրեց Մարիայի մտածմունքին։ Սենեակը մտաւ Ստեփանը, համբուրեց Մարիային, մտաւ փոքրիկ սենեակը, հանեց վերարկուն, դրեց երկու աթոռից մէկի վրա (միւսի վրա Մարիայի շալն էր դրած), եկաւ միւս սենեակը և նստեց Մարիայի մօտ բոլորովին ազատ, զգալով որ նա իր տանն է, իր սեփականութեան մօտ։

VI.

Մարիան մեկնեց ձեռքը դէպի թէյամանը և ծանր սկսեց ածել հոտավէտ թէյը բաժակի մէջ։ Նրա դէմքի գծագրութիւնը բոլորովին չքիփովեց։ Նրա դէմքը արտայայտում էր իր դեռ մի րօպէ առաջ տխուր մտածմունքները։

— Դու ինձ համար թէյ ես ածում։ շատ շնորհակալ եմ, ասաց Ստեփանը։ Գիտես քեզ մօտ թէյը մի ուրիշ տեսակ համ ունէ։ Ես շատ եմ սիրում քեզ հետ թէյ խմել։

Մարիան ոչինչ չը պատասխանեց։ Նա մէկ հայեացք միայն գցեց Ստեփանի վրա և այդ հայեացքը ամեն բան ասում էր։ Երկիւղ և սէր

էր արտայայտում այդ հայեացքը։ Աղջկը հասկացել էր իր դրութիւնը, դիտէր, որ նա սիրում է, զիտէր որ առաջին սիրուհին չէ ու վերջինն էլ չը պէտք է լինի, բայց կրկին նրա աչքերը սէր էին արտայայտում։ Նա կրկին սիրում էր Ստեփանին։ Սիրում էր, վախենում էր և մի և նոյն ժամանակ յոյս ունէր և միթէ իրաւունք չունէր այդ 17 տարեկան աղջկը, որ այնքան մօտ էր Ստեփանին, որ արդէն զգում էր, թէ մի երկու ամսից յետոյ պէտք է մայր լինէր, միթէ իրաւունք չունէր այդ ողորմելի կինը յուսալու որ իրան տանից դուրս չեն անի, ինչպէս դուրս են ձգում հին շորի կտորը կամ աւելորդ զարդարանքը....

— Այսօր դու ուրիշ տեսակ ես, Մարիա, շարունակեց Ստեփանը, ինչ է պատահել քեզ։

— Ոչինչ։

— Գուցէ քեզ ծառադ նեղացրել է. նա շատ կոպիտ է։

— Չէ, ոչինչ չէ պատահել։

— Այամ դու կրկին յիշում ես ծովի ափը, ծերունուն և նրա այն Գրիգոր որդուն, որ քեզ հետ պէտք է պսակվէր, ասաց հեգնական ձևով Ստեփանը, Մարիան լռում էր։

— Վերջապէս մէկ բան ասա՛ւ Դու իմ ոչ մի հարցմունքին պատասխան չես տալի...

— Գիտես ինչ է Ստեփան, ասաց Մարիան անհամարձակ, ես ուզում եմ... Նա վերկացաւ, մօտեցաւ Ստեփանին և նստեց նրա կողքին:

— Գիտես, ես ուզում եմ, ասաց նա փաղաքշելով Ստեփանին, հարցնել, ո՞վ էր այն կինը, որ մեզ հետ ընթրեց այգում մի քանի ամիս առաջ:

— Ի՞նչ կին, ես չեմ յիշում և ինչ ընթրիքի համար ես խօսում:

— Յիշում ես, մենք նոր էինք եկել... ես նոր էի փախել հօրս մօտից, երեք շաբաթ այստեղ մնալուց յետոյ մենք գնացինք դերմանացու այգին, այնտեղ շատ երիտասարդներ կային, շատ աղջկաներ կային և նրանցից մէկը նստած էր Օսինկի մօտ: Նա այնպէս տխուր դէմք ունէր, սե մազերով և մոխրագոյն դերիա էր հագել:

— Այո գիտեմ, դու խօսում ես Օսինկի սիրուհու վրա: Ի՞նչի նա քեզ այդպէս հետաքրքրում է:

— Այդքանը միայն. էլ ոչինչ չը գիտես նրա մասին:

— Չէ ոչինչ:

Ստեփանը սուտ էր ասում, նա գիտէր այդ աղջկայ պատմութիւնը, որովհետեւ դա իրանց տան զեղեցիկ հայ աղախինն էր, մի խղճկալատօզի աղջիկ, որի ծնողները մեռնելու ժամանակ յանձնել էին իր մօրը: Աղջկը պէտք է ծառայէր և յետոյ, երբ մեծանար Ստեփանի մայրը նրան պէտք է մարդու ասար:

Այս ամենը գիտէր Ստեփանը: Չէր մոռացել իր յարաբերութիւնը դրա հետ: Նա յիշում էր այն մութ գիշերը, որ քօղարկեց իր յանցանքը և աղջկայ անկումն: Վերջապէս Մարիայի բնակարանի ամեն մի անկիւնը, ամեն մի պատը, ամեն մի կարասիքը տեսնելիս յիշում էիր այդ աղջկան, այդ տան նախկին տիկնոջը, բայց նրանք չէին խօսում, չէին պատմում, իսկ Ստեփանը չէր կամենում պատմել:

— Բայց քեզ ի՞նչն է հետաքրքրում, թէ ո՞վ է այդ կինը, հարցրեց Ստեփանը, փոքր լուութենից յետոյ:

— Գիտես, ես նրան մէկ անգամ միայն տեսայ, այն գիշերը, բայց չեմ կարողանում մոռանալ: Յիշում ես այն օրը, մենք մօտեցանք այգիում այդ խմբին, բոլորը կարծես մեզ էին

սպասում, ամեն բան թողին և սկսեցին հետաքրքրութեամբ նայել ինձ և քըչփըչալ: Նա ամաչեցի, կարմրեցի, որովհետև զգում էի, որ թշերս այրվում են տաքութիւնից... իսկ այն կինը, տէր Աստուած, նայում էր ինձ վրա, նայում էր այնպէս, գիտես, կարծես ուզում էր ամեն բան տեսնել իմ մէջ, ամեն բան իմանալ և բոլորը ժամանակը նա ինձանից աչքը չէր հեռացնում: Իսկ յետոյ երբ իմ կենացը իմեցին, նա բաժակը բարձրացրեց և ասաց. «քո կենացը» խմեց, նայեց և բարձր ծիծաղեց... գիտես, դա այնպէս վատ ծիծաղ էր, կարծես լաց էր լինում:

— Դու դարմանալի բաներ ես յիշում: Մի քանի ամիսների գործը հիմա ես մտաբերում: Հասկանալի է քո դրութեան մէջ այդպէս խօսել...

— Սպասիր, Ստեփան, ինձ այնպէս է թւում, որ դու ինձ կը թողնես. գիտես, շատ վատ կը լինի: Նթէ ես գոնեա միայնակ լինէի... բայց ես շուտով երեխայ կունենամ... ինչ պէտք է անեմ:

Ստեփանը լուռ նստած էր: Նրա գլխում նոր անցաւ այդ միտքը: Առաջ երբ տեսաւ

Մարիային, երբ նրան խաբեց, նա դիտէր, որ մի ժամանակ պէտք է թողնէ աղջկան: Նա չէր կարող պատկիլ մի այդպիսի աղջկայ հետ, նա, Ստեփանը, հարուստ, համալսարանում աւարտած Մամաջանեանց Գուրգենի որդին, նա, որի հետ ամեն մի օրինաւոր, հարուստ և մի նոյն ժամանակ կրթված աղջիկ ուրախութեամբ կը պսակվէր: Միթէ կարելի էր կապիլ մի խեղճ, անմեղ, իր ձեռքով անպատված աղջկայ հետ: Զէր կտրելի: Դիտէր այս ամենը, բայց մի և նոյն ժամանակ զգում էր, որ կապված է Մարիայի հետ: Առաջ դա մի սովորական որս էր, մի զուարճութիւն, բայց հիմա Մարիայի հետ ապրելուց յետոյ, նա զգում էր, որ փոքր ի շատէ սիրում է այդ աղջկան: Մարիան գեղեցիկ էր: Գիտես, ընթերցող, լինում են հասարակ խեղճ աղջիկներ հասարակութեան ամենաստոր դասակարգերի մէջ, որոնց բնութիւնը ամենառատ պարգևներ է տալի: Քնքոյշ կազմուածք, նրբութիւն, գեղեցկութիւն, ոգի և խելք և այս բոլոր պարգևների մէջ նա մի գեղեցիկ ներդաշնակութիւն է դնում: Ինչպէս երաժշտական օրկեստրի մէջ զանազան ձայն ունեցող գործիքներից հմուտ արհեստագէտը ներդաշ-

Նախութիւն է կազմում, ինչպէս մի գործիքի ձայնը միւսին համեմատ է անում, այնպէս էլ բնութիւնը Մարիայի բոլոր գոյութեան մէջ ներդաշնակութիւն էր զրել: Նա կանգնած է, դերիան գեղեցիկ նստել է վրան. գնում է, գնացքը թիթե է, համեմատ է իր հազուատին. ձայն է հանում նոյն հարմօնիան կայ, վերջապէս տեսնում ես երեսը, խօսում ես հետը, ծանօթանում ես նրա խելքի հետ և ապշած մնում ես: Այո, Մարիան այն հասարակ աղջիկներին էր, որոնց կամենում են նմանվել կրթված օրիորդները, բայց չեն կարողանում: Դա ստորին դասի աղջիկ էր, խեղճութեան գեղեցիկ մսիթարանք:

Ահա այսպիսի աղջկայ հետ ապրեց Ստեփանը գրեթէ մի տարի և այդ աղջիկը նրա համար անհրաժեշտութիւն դարձաւ, մինչև անգամ սիրեց նրան, բայց անբաժան մնալ, կապվել Մարիայի հետ երբեք չէր մտածում: Շատ անգամ նա ինքը որոնում էր պատճառը, մտածում էր, թէ ի՞նչի չէ կարող անբաժան ապրել այդպիսի գեղեցկութեամբ հարուստ, բայց խեղճութենից անպատուած աղջկայ հետ և ոչինչ չէր գտնում, ոչ մի արգելք չէր գրա-

նում, այնու իմենայնիւ մտածում էր՝ ինչպէս կարելի է: Երբեմն դաւանութիւնը պատճառ էր բերում իրան արդարացնելու և դա օգնում էր:

Մարիան վրացի էր. այն մարդը, որ հարկաւոր դէպքում ոչ թէ միայն կրօնուրաց, այլ և ազգուրաց կը լինէր, այդպիսի մէկը դաւանութիւնը իրան արդարացնելու գործիք էր չինում: Նա հայ սիրուհի ունէր, որին այդպէս չէր սիրում, ինչպէս Մարիային, բայց եթէ սիրէր էլ նրա հետ չէր կապվի:

Շատ անգամ Մարիան յայտնել էր, որ վախենում է, թէ իրան Ստեփանը կը թողնէ, այնպէս որ այս անգամի տասածը նոր չէր Ստեփանի համար, բայց այժմ մի տեսակ տպաւորութիւն գործեց Ստեփանի վրա: Երեխան էլ մէկ միջնորդ էր դառնում, այն անմեղ էակը, որ դեռ նոր պէտք է կեանք ստանար, նա միջնորդ էր դառնում իր մօր և իր համար իր բնական հարազատ հօր առաջ:

Ստեփանը գիտէր որ մի ժամանակ կը թողնէ Մարիային, գուցէ այդ ժամանակը շատ էլ հեռու չէր, բայց այնքան քաջութիւն չունէր, որ ասէր Մարիային: Նա լռում է:

Ստեփան, Ստեփան, մի խօսք ասա, դու ինձ

կը թողնես, աղաչում էր աղջիկը: Սուս ես կե-
նում, հասկա իմ երեխան, ի՞նչ անեմ ես քո
երեխային:

— Ի՛հ, Մարիա, ասաց նա վերջապէս, ինչ
բաներ ես խօսում: Հաղար անգամ մի և նոյնը
կրկնում ես: Նա սիրում եմ քեզ չեմ պսակվի
քեզ հետ, բայց կապում և քեզ, չեմ թողնի:

Մարիայի երեսը պարզեց: Ուրախ ժպտը
խաղում էր նրա գունաթափ երեսի վրա....

Սպիտակ դերիա հագած, հարուստ մազերը
ազատ, չը հիւսված թափվել էին մի մասը կրծ-
քին, իսկ միւս մասը կռտնը: Խորհրդաւոր
գունաթափութիւնը, որ ամեն մի կին ունե-
նում է, երբ պատրաստվում է մայր դառնալու,
փռվել էր Մարիայի երեսին: Այդ այն գունա-
թափութիւնն է, որ ամեն մի կնոջ, ինչ կար-
գի և պատկանէր նա, պատկառելի է անում
մարդու առաջ:

— Ախ Ստեփան, գիտես ինչքան եմ սիրում
քեզ, գիտես ես զգում եմ, որ իմ երեխան ար-
դէն քեզ սիրում է: Գիտես... իմ երեխան...

Մարիան ուրախ ծիծաղեց:

— Իմ երեխան, կրկնեց նա և դարձեալ
ծիծաղեց:

Խեղճ աղջիկ: Ինչքան խորվում ես: Դեռ
անցեալ օրը Ստեփանի ազգականները առաջար-
կում էին նրան պսակվել, վուր յիշատակը
չը վեր ննգնի, վուր աղջիկը լաւ աղ-
ջիկ է, ուսում ունէ, համ էլ հինգ
հազար թուման փուլ: Եւ այս խօսքերը
նստում էին Ստեփանի խելքում...

Դեռ Մարիան շարունակում էր իր ծիծաղը,
երբ սենեակը մտաւ Օսինկան: Սրա հասակը
աւելի բարձր էր, քան թէ միջակ, երեսը չօղ
և ճոկաւոր փայլուն: Այնում էին ժամեր, երբ
Օսինկի երեսին նայելու ժամանակ կարծես այդ
երեսից իւր է դուրս գալի: Նրկու ահագին աչ-
քերը և դէպի աջ ծռած քիթը նրա դէմքին
տալիս էին շատ անսխորժ արտայայտութիւն:

Ամեն տեղ կը պատահէիր Օսինկին: Նա լի-
նում էր նշանաւոր հիւրանոցում և ամենայեւ
ընկած միկիտանի դուքանում: Հարբում էր շան-
պայն և ամենահասարակ թթու գինով, ինչ-
պէս կը պատահէր: Նրան կարելի էր տեսնել
Թիֆլիսի նշանաւոր սիրուհիների և ամենավեր-
ջին ընկած կանանց սներում: Սիօնի, Անչիս-
խատի և Փէթխայինի տօներին նա անպակաս
էր և հէնց որ դայրան կածէին, նա կըսկսէր

կանանց խնդրել, որ պար զան և ինքն էլ պինդ
կը ծափ տար: Օսինկան մի ժամանակ ունէր
միջոցներ, բայց հիմա ոչինչ չունէ, այնու ամե-
նայնիւ քէֆ է անում, լաւ է հագնում և
փող է վատնում: Նա անհրաժեշտ մարդ է ամեն
մի երիտասարդի համար, որ նոր է ժառան-
գութիւն ստացել: Ամեն մէկի համար, որ ու-
զում է գեղեցիկ սիրուհի ունենալ, որ ուզում
է իր քէֆով և սիրուհու գեղեցկութեամբ
մարդիկ զարմացնել և երբ այսպիսի մէկը թող-
նում է իր սիրուհուն, կրկին Օսինկան է հար-
կաւոր: Այսպիսի կենդանի էր սենեակ մտնողը....

— Միշտ ուրախ էք, դիմեց նա Ստեփանին
և Մարիային, միշտ ծիծաղում էք: Ախ, ինձ
համար թէյ ես ածում Մարիա, շնորհակալ
եմ որ չես մոռացել Ստեփանի բժշկին: Նրբ
ենք կնքում երեսան, ես պէտք է կնքեմ. ու-
րիշին իրաւունք չեմ տալ:

Մարիան ծիծաղեց:

— Շուտով, ասաց Ստեփանը. գուցէ մի
քանի օրից յետոյ:

— Գիտէք, տղայ կունենանք: Ստեփանի պէս
զոչաղ տղայ: Նոր բան՝ Նիկօլը առաջարկել է իր
սիրուհու հետ պսակվել, իսկ նա չէ համաձայնել:

— Չէ:

— Ի՞նչ չէ... շատ հասկանալի է: Աղջկը
վախենում է, որ իր փողերն էլ այնպէս չը
վատնէ, ինչպէս վատնեց հօր կարողութիւնը:
Իսկ Միխայլ Նգօրիչը, այն պառաւը էլի փո-
խեց իր սիրուհուն: Գիտէք նորերումն ինչ է
պատահել. Խանալեանցի տղէն Մօն-Պլեղերում
մի սիրուն աղջկ է տեսնում և նրա ետեւից
ընկնում: Աղջկը վախում է նրանից, իսկ
տղան հետևում է «սիրում եմ քեզ», ասելով:
Աղջկը կառք է նստում, տղան էլ մի ուրիշ
կառք: Վերջապէս խեղճ վախեցած աղանին
իջնում է մի տան առաջ, մտնում է բազը,
բարձրանում է սանդուղքներով և մտնում է
սենեակը: «Սիրում եմ, սիրում եմ» ասում է
տղան և հետևում է աղջկան սենեակը և այն-
տեղ մի ծանօթ է տեսնում:

— Ո՞ւմ, հարցնում են միասին երկու սիրե-
կանները:

— Չեմ ասի:

— Ուրեմն չը գիտես, ասում է Ստեփանը:

— Չէ, գիտեմ, բայց այդ գաղտնիքը մէկ
ընթրիք արժէ:

— Տուե՛լ եմ, տառ ո՛ւմն է պատահում:

— Ի՞ր հօրը. Я не туда попалъ, մըթ-մըթում է խեղճ երիտասարդը: Впредь не ошибайтесь, милостивый государь, պատասխանում է հայրը ու վզաթիկն տալով դուրս է անում: Զարթե՛լ իմ նորութիւնը մէկ իրիդ-նահացի:

— Այո, արժէ, գնանք Նովի-Սվէա, կը գնա Մարիա:

— Չէ, ես տանը կը մնամ:

Երիտասարդները դուրս գնացին: Մի քանի րոպէ Մարիան նայում էր փակված դրանը, յետոյ վերկացաւ, ծանր քայլերով մօտեցաւ անկիւնին, որտեղ դրած էր Աստուածամօր պատկերը, ծունկ չոքեց և տաք աղօթքը թափվեց նրա բերանից: Ազօթում էր Մարիան իր երեխայի համար: Թշուառութեան և անբարոյականութեան վայրից նրա ջերմ աղօթքը բարձրանում էր երկինքը....

VII.

Գ...փողոցի վրա գտնվող տունը այս գիշեր սովորականից աւելի էր լուսավորված: Մարդիկ և կանայք մի սենեակից միւսն էին անցնում: Պառաւնները անկիւններում քրչփրչում էին,

քամբասում էին, ջահէները միմեանց կուռը տուած ճրկճրկում էին: Այդ տան մէջ ուրախութիւն կար, այդ գիշեր հարսանիք պիտի լինէր: Բաղդասարենց Յովսէփը պսակում էր իր գեղեցիկ, ուսում առած աղջկան:

Տան մի սենեակում կատերինը, գեղեցիկ, կրթված աղջկը, ժամանակակից օրիորդը, շրջագառված իր ընկերուհիներով, ժամանակակից օրիորդներով հագնվում էր:

Աղջեկները խօսում էին և հագցնում նորահարսին: Հայ լեզուն մօզա էր: Կատերինը և իր ընկերուհիները գիտէին այդ լեզուն, ինչտեղ հարկաւոր էր հայերէն էին խօսում, բայց իրանց մէջ միշտ ռսերեն:

— Ախ, ի՞նչ բեխեր ունէ քո փեսան, աւում էր օրիորդներից մէկը:

— Ես նորա մէջ հաւանում եմ նրա երեսփոխանութիւնը: Այնպէս նուրբ է աւդ գծագրութիւնը: Տեսնես ինչեր է ասում նա քեզ, Կատերին, երբ մենակ էք լինում:

— Ամեն բան ասում է: Նա ինձ սաստիկ սիրում է: Այն մարդը, որ շատ կանանց է իր վրա սիրահարացրել, ինձ Աստուծու չափ սիրում է:

— Բայց ասում են, որ...

— Հա ասում են, խօսքը կտրում է նորա-
հարսը, և ինքն էլ է ասում, որ սիրուհի է
ունեցել, ինչ անենք, հիմա ո՞վ այդպէս չէ:
Բայց ինձ ինչպէս էր խոստովանում: Ասում էր,
որ իրան խաբէլ են, որ ինքը միայն մէկ ան-
գամ իր կեանքի մէջ սիրել է, և ինձ է սիրել:
Ахъ какой онъ душка, а глаза то, глаза!
և երբ խօսում է... այնպէս ճիշդ հայեացք ունէ:
Նա աշխատակցում է հայ լրագրին: Ասում է
բոլոր ազգերի հոգևորականներին, բայց մեր
հոգևորականներին պաշտպանում է: Նրանք
մեզ անհրաժեշտ են, ասում է նա:

— Շատ է գովում, փափաց ընկերուհիներ-
րից մէկը միւսի ականջին, МНѢ ОНѢ ВСЕГО НЕ
ПРАВИТСЯ.

— Ինձ էլ, պատասխանում է ծածուկ ընկե-
րուհին...

Միւս սենեակումը նստած են պառաւանդ:

— Քա, Մարթա, ասումին սիրեկնիր է ու-
նեցի, ղուրթ է:

— Բաս սուտ է, քա վուրթի էլ ունէ կօտէ,
ի՞նչ իս ասում: Մարթա փեսայ գթաւ Անանին,
սասց միւս պառաւը, որ աշխատում էր իր թո-

ւանը տայ Ստեփանին:

— Խնամի ջան, համեցէք համեցէք մայինց
մէկ մէկու կու սիրէինք ու հիմի էլ միր վուրթ-
կերանց բախտաւորութենով բարեկամանում ինք,
ասում էր Անանին, նորահարսի մայրը, նորա-
փեսի մօրը:

— Աւքդ լուս Անանի ջան, մէկէլ աղջկադ
բախտաւորութիւնն էլ տեսնինք, պատասխա-
նում է Ստեփանի մայրը:

— Հինգ հազար թումանը հիմի կու համ-
բրիս, Իօսէր Զախարիչ, ասում էր մի ուրիշ
սենեակում Ստեփանի հայրը Կատերինի հօրը,
ու էքուցէւէա բանկը կուտամ քու աղջկայ
անումով:

— Ինչ խօսք ունիմ, միր ուսլովէն էտէնց
է էլի, վուր սլսակի գիշիրը փուղը ստանաս:
Էս սահաթին:

— Ղու գիտես, Օսինկա ջան, ասում էր
մի ուրիշ անկիւնում Ստեփանը իր ընկերոջը,
խայտառակութիւն չը գուս դայ:

— Ոչինչ չի լինի: Շատ ասացի, որ չը գայ
եկեղեցին, չէ համաձայնում: «Ուղտւմ եմ մէկ
անկիւնում կանգնել, ասում է, և ցոյց տալ իմ
աղջկան իր հօր հարսնիքը»...

— Բայց որ առաջ գայ, մէկ բան անէ:
— Չէ, Մարիան երգուեց, որ չի երևայ,
որ ձայն չի հանի, այլ հեռուից կը նայէ:
— Դու գիտես, այդ գործը քեզ եմ յանձ-
նում, էլի գնա ասա, որ ես նրան եմ սիրում,
որ հօրս խօսքն եմ կատարում, որ պսակվում եմ:
— Ժիտեմ, խօ առաջին անգամը չէ:
— Երկու ժամից յետոյ այս բոլոր խօսող,
բամբասող, հաշուող, անբարոյականացած հասա-
րակութիւնը կառքերով զիմեց դէպի Զրկինենց
եկեղեցին...

IX

Յուպը ձեռքին, պարկը ուսին դրած, սօլ-
դաթի շինեւ և կոշեկ հագած Թիֆլիսի փո-
ղոցները չափում է մի ձերունի: Նա ամեն դու-
ռը բաղխում է, ամենքից ողորմութիւն է խն-
դում և երբ դուռը բացվում է, նրա սուր
աչքերը այս կողմից այն կողմն են ընկնում,
նա որոնում է և չէ գտնում: Մերունի Զաքարն
է դա: Նա չափեց Փօթիի փողոցները, չափեց
Քուլթայիսի փողոցները, չափում է Թիֆլիսի
փողոցները և չէ գտնում իր աղջկան, իր ըն-
կերոջ որդուն: Մերունուն խիղճը տանջում է:
Հաղար ու մէկ բան է մտածում նա, գուցէ

լաւ չէ նայել աղջկան, գուցէ իր հոգատարու-
թիւնը օրինաւոր չէ եղել, գուցէ վերաւորել
է իր ընկերոջ աղջկան և զրանով խեղճի կորս-
տեան պատճառ է դարձել: Մերունին գիտէր,
որ Մարիան փախաւ Ստեփանի հետ: Բայց թէ
ի՞նչի փախաւ այն չը գիտէր, քանի որ աղջեկը իր
Գրիգորին էր սիրում: «Ես էի նրա փչանալու
պատճառը, մտածում էր նա, ես պառաւ յի-
մարս չը կարողացայ նրան օրինաւոր պահել»...

Այս գիշեր նա անցնում է Զրկինենց եկեղե-
ցու մօտ: Նկեղեցու դրանը մի քանի կառքեր
են կանգնած: Նկեղեցին լուսաւորված էր: Մե-
րունին նայեց, երեսը խաչ հանեց և ուզում էր
ճանապարհը շարունակել, երբ մի ուրիշ կարգ
կանգնեց դրան մօտ, որի միջից իջաւ մի կին
հինգ կամ վեց տարեկան երեխայի հետ: Աինը
սե շորեր էր հագել, երեսը ծածկված էր սե
քողով, իսկ երեխան ոտքից զլուխ սպիտակ շոր
ունէր հագած: Գիշերվալ խաւարի մէջ այդ
մանուկը մի հրեշտակ էր երևում:

— Այարապան, սպասիր ինձ ահա այն ան-
կիւնում, դիմեց կինը կարապանին:

Այս ձայնը մագիքական ազդեցութիւն ունե-
ցաւ ձերունու վրա: Նա փողոցի մի կողմից թը-

ուս միւս կողմը: Վեց տարի անցել էր Մարիայի փախչելու օրից, վեց տարի շարունակ ծերունին չէր լսել նրա ձայնը, բայց այնուամենայնիւ ճանաչեց այդ քաղցր նուագ, որ մի փամփոշի աղքատ յաճախ լսում էր:

— Մարիա, Մարիա, կանչեց նա, իմ սիրուն աղջիկ, դու մոռացար քո ծերունուն, չես ուզում ինձ ճանաչել:

Խեղճ կինը փաթաթվեց ծերունու շնքին, մէկ գրկախառնութիւն ամեն բան ներքեց: Ծերունին ներքեց աղջկան իր կրած տանջանքները, ներքեց նրա յանցանքը:

Ծերունու սիրտը ուրախ է, որ գտաւ իր մոլորված զաւակը:

Ոչ մէկ չար զգացմունք չը կար Ձաքարի սրտում, բացի ուրախութիւնը:

— Սա իմ աղջիկն է, հայր, ցոյց տվեց Մարիան երեխային: Տեսնում ես որքան զեղեցիկ է... և ի՞նչքան տարաբաղդ է իմ փոքրիկը... Բայց ես ուշանում եմ... արի... յետոյ կը պատմեմ: Արի նա պսակվում է ուրիշ կնոջ հետ, իսկ իր աղջկան թողնում է... արի հայր, միայն ոչ մէկ խօսք մի ասի: Գիտես ես նրան խոստացայ, որ լուռ կը մնամ: Գիտես, չեմ

ուզում խայտառակել... նա ինձ թողեց բայց, ես այնու ամենայնիւ սիրում եմ նրան, գիտես սիրում եմ նրան, գիտես սիրում եմ նրան... անըրան, որ ինձ անպատուեց, իսկ իմ երեխային անտէր թողեց...

Աղջիկը ծերունու կռնից քաշելով հասցրեց նրան եկեղեցու դրանը: Նրանք մտան տաճարը և երեսները խաչ հանեցին:

X

Մարիայի երեսի վրա տենդային հանգստութիւն էր տիրապետում:

չէնց Մարիան մոտաւ եկեղեցին, Օսինկան եկաւ և նրա մօտ կանգնեց:

Աստուածամօր պատկերի առաջ կանգնած Մարիան դիտում էր ամեն բան:

Ստեփանը կանգնած էր բեմի առաջ, իսկ նրա մօտ հարսանեկան շորը հագած Կատերինը, որ այդ խորհրդաւոր րօպէին շատ զեղեցիկ էր: Քահանան դառնում է Ստեփանին:

— Տէր ես, որդեակ իմ, հարցնում է նա:

Պատասխան չը կայ: Ինչ է մտածում Ստեփանը: Արդեօք իր պարտականութիւններն են նրան զբաղեցնում, արդեօք վախենում է, որ իր ամուսնու հետ էլ այնպէս կը վարվի, ինչպէս

վարվել է շատերի հետ: Ոչ, նրա աչքի առաջ զանազան զիրքերով կանգնած են և անցնում են իր հեշտասիրութեան զոհերը, նրանք մոտենում մոմերը հանդցնում են և իրան սպառնում են: Իր կեանքի ամենամանրամասն անցքերը կենդանի պատկերանում են նրա առաջ:

— Տէր ես, որդիակ իմ, կրկնում է իր հարցը քահանան:

— Այո, պատասխանում է Ստեփանը, թըմբութիւնից դուրս գալով:

— Մեռնի դեղէն ջանիդ, ասում է Ստեփանի մայրը, ինչքան ամանչքուտ է մէքաշ չասաւ թէ տէր իմ:

— Մարթա, էն աղջկին ո՞վ է, վուր էն ծիր մարդու մօտ կանգնած լաց է ըլում:

— Սիրեկանը, կուլի քա, ով կուլի: Այ աննամուս, վուր ժամն էլ է էկի քա:

— Իսթաւուր բան իմ օրումը չէի տէսի, հալբաթ էս էլ մօդա է, Մարթա ջան:

— Հալբաթ:

Արարողութիւնը վերջացաւ: Ամենքը պատրաստփեցին դուրս գնալու: Ստեփանը իր կնոջ ձեռքը տուած դուրս էր գալի:

— Հիմա մենք յաւիտեան անբաժան կը լե-

նենք, ասաց նա իր հարսին:

— Ахъ думка, պատասխանեց հարսը:

Երեկան Մարիայի հետ բոլոր ժամանակ կանգնած էր անկիւնում:

Նա չէր տեսնում իր հօրը, երեսայի հասակը շատ փոքր էր: Երբ Ստեփանը դուրս էր գալի, երեկան տեսաւ իր հօրը, ճանաչեց, վազեց նրա մօտ և ծնկներին փաթաթվելով ասաց.

— Հայրիկ, մայրիկ էլ այստեղ է:

Ստեփանը չըշփոթվեց, նա իր ձեռքով հեռացրեց երեսային:

— Վերցրէք այդ երեսային, ո՞վ է այդ երեկան, կանչեց նա:

— Какой скандалъ а! ասում էին միմեանց հիւրերը դուրս գալով:

ՄԱԴՅԻ ՕԴԱՆ

Շարաթ օրը առաւօտից արդէն պատվերիւ էի իմ Տարիէլ իմէրէլ ծառային, որ մինչև ճաշ պաշարեղէնները գնէր, դարսէր խուրճիկներ և ինքըն էլ պատրաստվէր խուրճիկներ շալակու:

— Ո՞ր կողմը, հարցրեց իմ հաւատարիմ ծառան փրացերէն:

— Որսի կերթանք ճաշից յետոյ, եգուց կիրակի է, երկուշաբթի էլ տօն, ուրեմն երկու և կէս օր ազատ ունենք: Կաքաւենիւր հիմա չաղ են, ասացի ես:

— Ո՛հ, չէնի կի ճիրիմէ լամաղօ քալօ դա թօփօ, *) կանչեց նա ուրախ: Եյ, Տօպս, էյ, շուացրեց նա իմ ցետերին, ախօտ պայդօմ կուրդիւլ կուշայի հը. խօչիշ: *)

*) Հողուդ մատաղ սիրուն աղջիկ ու հրացան:

*) Որսի կերթանք նապաստակ կուտես, կամենում ես:

Ճաշի ժամանակ ամեն բան պատրաստ էր իմ սենեակում: Խուրճիկի մէջ գինի ու արաղ, մի կտոր սուկի, հաց ու պանիր կար, իսկ սենեակի անկիւնում չորս որսորդական հրացաններ բոլոր պարագաներով, որոնց մօտ պղպղղել էր Տօպսը և մի ուր բարձրացած դողում էր անհամբերութենից:

Որսի գնացողները չորս հոգի էինք: Ես, իմ ծառան և երկու ընկերներս՝ Սիմօնը և Սամսօնը: Առաջինը մի շատ սովորական կարճատես մարդ էր, երբէք իր հրացանի ծայրից հեռու չէր տեսնում և միշտ ամառ, ձմեռ, ցրտին և շոգին դողում էր. միշտ մրսում էր: Իսկ երկրորդը մի լաւ ընկեր էր: Սամսօնը ամեն մարդու հետ չէր խօսի: Առհասարակ փոքրը ի շատէ բարձր սլաշտօն ունեցողի հետ լայիզ չէր անի խօսել, բայց երբ ընկնում էր իր ընկերների շրջանը, որոնք նրան ձանձուրում էին և որոնց նա սրտով սիրում էր, այդպիսի դէպքերում Սամսօնը չէր դադարում: Նա կամ թուրքի կանկան կը պար գար, կամ մէկ անտիցենդուրական անեկդօտ կը պատմէր, կամ եթէ ոչինչ չէր ունենայ անելու, կսկսէր իր ընկերներին պաչպչել: Ի՞նչ ասէին նրան ընկերները,

ի՞նչ հրամայէին, նա կը կատարէր, բայց երբ իր իշխանաւորը մի րան հրամայէր՝ կը կատարէր, բայց ինքն իրան մի լաւ յիշոց կը տար: Սամսոն մեծ մարդ էր, արդէն երկրորդ կնոջ վրա էր պսակված, բայց այնու ամենայնիւ նա վախենում էր իր պառաւ նանից առանց սրա թոյլատուութեան ոչ մի տեղ չէր գնայ: Ես էլ սովորել էի նանի ձեւը և միշտ խաբում էի նրան: Մէկ օր ասում էի, որ հիւանդ եմ, տանում եմ Սամսոնին ինձ մօտ, միւս անգամ, որ երեւելի ժողով կայ և մեծ գործեր ունենք և այլն: Խաբվում էր պառաւը:

— Այ սե սրտով, ասում էր նա իր որդուն, բա մի գիշեր քո տանը չը պըտի քնե՞ս, այ աւրայ:

— Դէ, նանի ի՞նչ անեմ, կը պատասխանէր սովորաբար Սամսոնը միրուքը արմբացնելով և և խոնարհ դէմք առնելով, դէ տեսնում ես եկել է, ասումա հիւանդ եմ. բա խաթրը կոտրեմ: Եւ էսպիսի շատ բաներով նա խաբում էր իր նանին: Այդ շաբաթ օրն էլ խաբեցինք նանին, ասացինք որ մի եպիսկոպոս է գալի, որ տեղական սրբազանը հրամայել է Սամսոնին (սա հոգեւոր իշխանութեան էր ծառայում),

որ եկողին դիմաւորէ և այլն:

— Դէ գնայ, այ որդի, սուրբազանի աջը քը պըհապան: Այ տղայ, կանչեց նա շտապով որդուն, կաց, մոմ տամ Քանաքեռայ մատուռումը վառիր:

Մոմերը ստանալուց յետոյ Սամսոնին տարայ: Էսպէս էր իմ Սամսոնը, էն լաւ Սամսոնը, որին միշտ կով էի կանչում և նա ուրախանում էր: Մի սովորութիւն էլ ունէր նա. հէնց որ ուսին ձերք գնէին կը ծըռվէր և կը բղաւէր, էլ չը գիտեմ հանաքի համար էր անում, թէ երեխայ ժամանակից նրա ուսը փռսված էր: Այսպէս ճաշեցինք չորսով սենիակումս, զցեցինք Բաքոսի կենացը, Սամսոնը ասաց իր սովորական «եւ Ալին» արաղ խմելու և ճանապարհ ընկանք երևանի փողոցներով դէպի Քանաքեռ: Ծօպը պոչը ոլորած, ուրախ հաչելով առաջ ընկաւ, իսկ Տարիէլը, իր ներկայութիւնը ցոյց տալու համար կանչեց:

— Назадъ, Ծօպս, время не пришли. о՛հ չէնի կի ճիրիմէ լամպօ քալօ դա թօփօ...

Դուրս եկանք երևանից, այդ թողի և աղբի մայրաքաղաքից և ընկանք երևանի խճուղին, վերջապէս Քանաքեռի տակը, այնտեղ, ուր ճա-

նապարհը բաժանվում է, մէկը տանում է դէպի Քանաքէռ, իսկ միւսը դէպի Յարաւ աղբիւր, մենք ջուկ ջուկ գնացինք, որսորդութեան կանոնին համեմատ: Հիմա լաւ եմ համարում, ընթերցող, ասել քեզ որ մեզանից ոչ ոք որսորդ չէր և թէպէտ շատ անգամ այսպէս թափառում էինք, բայց աւելի ղթութեան» համար, ինչպէս ասում է թիֆլիսեցին, քան թէ որսորդութեան համար. դրա ապացոյցը լեքը խուրջինն էր: Մեր բազդն էր, եթէ մի կոյր նապաստակ կը պատահէր, կամ մէկ ոտը կոտրած կաքաւ. երեք հրացան միասին կարձակէինք և Տարիէն ու Տօփս, միմեանց առաջ կտրելով կը վազէին որսը բերելու: Այդ օրը մեզ ոչինչ չէր պատահում, թէպէտ շատ էինք շրջում և Տօպս էլ անգաղար քարից քար, սարից սար էր անցնում: ամեն տեղ հող էր առնում, ամեն տեղ փնտռում էր, բայց 'ի զուր ոչինչ չէր պատահում:

— Ադա, վայ, վերջապէս լռութիւնը ընդհատեց Սամսօնը, զիտեմ ի՞նչի որս չէ պատահում:

— Ի՞նչի, հարցրի ես, գուցէ ժամանակը չէ, դեռ վաղ է:

— Չէ, տօ ախար մոռացանք քար շուր տայինք քաղաքի մէջ: Բն չը տեսար, որ տէր Չամաչէն պատահեց ճանապարհին, վայ նրա գլուխը թաղեմ արդի կարասում:

Տեսնելով, որ իր սրախօսութիւնը ոչ ոքի չը ծիծաղեցրեց, Սամսօնը սկսեց երգել: Լաւ էր երգում փուչը: Մանաւանդ այն երգերը, որոնց եղանակը պարսկականից էր վեր առած:

«Ի ննջմանէդ արքայական զարթիր, նազելիդ իմ, զարթիր, եհաս նշոյլ արեգական զարթիր, ասողիկդ իմ, զարթիր» կանչեց Սամսօնը ողբորված, միրուքը շարժելով և ներքեւի ծնօտը ծռելով: Վերջապէս հասանք ձորի գլուխը, որտեղ վազում է ուրախ Չանգուն: Գեղեցիկ տեսարան է բացվում այդ տեղից: Չանգուն ոլորված օձի նման, պառկել է այդ ձորի երկայնութեամբ, պոչը Սեանայ ծովի մէջ, իսկ գլուխը Հայաստանի մօր Արաքսի կրճքին դրած: Վազում է Չանգուն, Արուիւանի երգած և նկարած Չանգուն ձորի միջով, այգիներով շրջապատված: Շտապ, շտապ, արծաթեայ կաթիլները բարձր գցելով Հայաստանի հարսը դնում է իր մօր մօտ, Արաքսի մօտ և տանում է նրան իր գանգատները: Գնում է, գլուխը դնում է

Արաքսի կրծքին և պատմում է, պատմում զանազատվում է, և նրա պատմութիւնն ու զանգատները, ինչպէս իր մաքուր, փրփրոտ կենսական ջրերը չեն հատնում նա պատմում է Արաքսին, թէ որքան տգէտ են Աւանայ վարդապետները, այն արեղանների փոխանորդները, որոնք մի ժամանակ Հայաստանի նեցուկներն էին: Պատմում է Զանգուն իր մօրը, թէ քանի քանի տգէտ հովիւներ են ուղարկվում Աւանից հայ ժողովուրդը գայթակղեցնելու: Վամենում է հաւարել իր ճանապարհին պատահած հայ ումորները, բայց դրանց թիւը նա մոռացել է. պատմում է, որ հայ դիւղացին, հայութեան այդ ապաւէնը դեռ էլի տգէտ է և ոչ ոք չէ մտածում նրա լուսաւորութեան վրա. վերջապէս անմխիթար է նա, յուսահատված է Զանգուն... նա վազում է ձորի մէջ և անհետացնում է իր ճանապարհին պատահած արդելքները. նա քանդում է ապառաժը, որ նրան բանտարկել է իրան մէջ և անցնում է տխուր, բայց հպարտ այրիի նման, որ թաղեց իր ամուսինը, բայց ուրիշ ամուսին նրա համար աներեակայելի է: Արեւը նոր էր սկսել մայր մոտել, նրա վերջին ճառագայթները թաղվում էին

Զանգուի ջրերի մէջ: Ապրիլ ամսվայ վերջին օրերն էր: Ամեն ինչ ծաղկում էր, ամեն արած սկսում էր ապրել: Զանգուից մեղմ հով էր փչում և նրա ափերին տրնկած ուռնիքներին կանաչ գլուխները շարժում:

Կարծես այդ ծառերը գլուխ են տալի քեզ, հրաւիրում են բաժանել իրանց ուրախութիւնը, որ վերջապէս անցաւ ձմեռային թմրութիւնը, մեռելութիւնը, վերջապէս ամեն բան վերանորոգվեցաւ զարնան կենսատու արևի ճառագայթներից: Գետի ափերին դեռ անցեալ տարվայ աշնանային տերեւները թափված էին, դրանց միջեց նոր կանաչը իր գլուխը դուրս էր բերում և իր գոյնով ներկում էր ափերը, օդի մէջ մանուշակի հոտը կանգնած էր: Սիրուն էր ամեն բան Հայաստանի այդ սրտում, սիրուն և կոկ էր բնութիւնը Զանգուի ափի մօտ. ամեն բան այնտեղ կայ, թարմ տերեւների խօսքը խառնվում է հովի և թռչունների երգերի հետ...

Ես գնում էի բնութիւնը և չէի նկատել, որ ընկերներս արդէն ներքե ևն իջել և ինձ կանչում են. «կաքաւ» ձայնը ընկաւ ականջս: Երեսուն քայլ ինձանից հեռու, կուրծքը ինձ

դարձրած նստած էր որձ կաքաւը և կրչկրչալով
եր ընկերուհուն էր կանչում: Հրացանս պատ-
րաստ էր. «Դու ել մեռիր մտածեցի ես, թող
էդդ միայն մնայ»: Մի բողբոջ յետոյ Տօպը
բերանն առած գեղեցիկ թռչունը, ուրախ վա-
զում էր դէպի ինձ: Մի քանի ժամանակից
յետոյ ես ել վազեցի ներքև ձորակը ընկերնե-
րիս մօտ, որոնք սպասում էին Ծառաւ-Աղբիւրի
մօտ:

— Ա՛, քու տունը շինի, դիմեց ինձ բարկա-
ցած Սամսօնը, բա՛ մի սըհաթ բղաւում ի կա-
քաւ հա՛, կաքաւ, բա՛ դու քար էիր, ինչ էիր
թռանքիդ վրա կըթնել ու երկնքին թամաշ
անում. մօլլի ազանն իր տալի՞. եանի մի պու-
ճուր թուրք էլ ես:

— Բաս էս ի՞նչ ա:

— Աստօճ ոչ դիրէ իմ գլուխը, ասաց Սի-
մօնը ըստ սովորականին դողալով:

— Նստատակ ա, ի՞նչ ա: Էս քոռը չոբ-
նի շանն ա հրացանով խփել՝ նապաստակի
տեղա ընդունել, չոբաներն էլ հրացանը խել
են, երկու մանէթ ա տուել հետ առել, ասաց
Սամսօնը ու ծիծաղեց:

— Չիս տեսնում իս, վուր շուն ին... ինչէ

խրփում ին... էս կուրաղէլն, դուն քոր իս,
ջըգրացնում էր Տարիէլը Սիմօնին:

— Ալահ, ալահ ա, էս սարսաղն էլ որտե-
ղեց գլխիս ցաւ դառաւ, բարկանում էր Սիմօնը.

— Տղէրք, էդ թողնէք, էս գիշեր ինչտեղ
պիտի քնէք, արի էս տեղ աղբիւրի մօտ կրակ
անենք մնանք, ասացի ես:

— Չէ, քիչ էլ գնանք. կամուրջ կայ Ձան-
գուի վրա, անցնենք էն ափը, գնանք Մադօի
Սղան էնտեղ քնենք, ասաց Սամսօնը:

— Էդ ինչ Մադօ է, Սամսօն, հարցրի. ես:

— Տօ դա իմ ծանօթ մի լաւ քուրդ ա:
Շատ լաւ հիւրասէր մարդ ա, բոլ էլ ոչխար
ունի: Գնանք նրա մօտ, լաւ պատիւ կը տայ.
ոչխարն էլ ծնում ա:

— Դէ գնանք, ասացինք ամենքս:

Բաւական քաղցած էինք. ամենքիս աչքը
խուրջինի վրա էր: Հաց ուտելու և տաքանալու
յոյսը մեզ ոյժ էր տալիս: Թէպէտ այդ օրը շատ
էինք թափառել և յօգնել, այնու ամենայնիւ
շուտ շուտ էինք գնում և այգիներում փայտ
հաւաքում:

Ճանապարհին Սամսօնը պատմեց, թէ մեր տե-
սած աղբիւրը ի՞նչի է Ծառաւ-Աղբիւր անուանվում:

Երկու քանաքերցիք դրաղ են գալի: Մէկը ասում է միւսին, որ կը տանի Զանգուի ափի աղբիւրը և էնտեղից առանց ջուր խմելու հետ կը բերի: Քանաքէոցի երիտասարդները ճանապարհ են ընկնում, հասնում են աղբիւրին, մէկը ասում է միւսին — եթէ հիմա դու ջուր խմես, ով կիմանայ, որ խմել ես, դու կասես խմել եմ, ես կասեմ չես խմել: Եկ գնանք Քանաքեո, մի մարդ բերենք, որ վկայ լինի: Միա-միտ քանաքէոցին համաձայնում է և երկուսը հետ են դառնում, երբ հասնում են գիւղը նոր է հասկանում, որ խարվել է և ծարաւ է վերադարձել: Այդ անցքից յետոյ, իբր թէ, աղբիւրը անուանվում է Մառաւ:

Ի ուսինը բաւական բարձրացել էր, երբ մենք հասանք Մադօի Օդային, որտեղից մի թաքուն շներ յարձակվեցին մեզ վրա և Մադօի քուրդ ծառաները ահագին դազանակները ձեռքերին, եկան դէպի մեզ և անցկացրին շներից: Զորս կողմից լավում էին նոր ծնած գառների և ուլերի մըկըկալը:

II

Մադօի օդան միայն չէր այդտեղ, կային և ուրիշները. բայց նրանք թողած էին և ոչ ոք

այնտեղ չէր բնակվում: Քարերը դարսած միմե-անց վրա չորս կողմից պատեր են կազմում, առաստաղը եղեգնիցն է շինած և նրա վրա հող է ածած: Այս է բոլոր շինութիւնը: Մագօի օդան միւս օդաների մէջ տեղն էր գտնու-վում, որի չորս կողմը առանց առաստաղի քառանկիւնի պատեր էին դարսած՝ այդտեղ անասուններն են մնում քուրդերի ահագին շների հսկողութեան տակ:

Իր օդայի կտրին կանգնած, լուսաւորված լուսնի արծաթեայ ճառագայթով, բնդունեց մեզ՝ քուրդ Մագօն, այդ միջնադարեան հսկայ ասպետը: Նա ձեռքին ունէր իր դագանակը, քուրդի այդ անբաժան զէնքը, որով դրանք պատերազմում են մինչև անգամ զինաւորված մարդու հետ: Այդ մարդուն նայելիս հիանալ կարելի էր նրա դէմքի արտայայտութեան վրա. մարմնի կազմուածքը, հաքուտը, կոպիտ ձայնը ցոյց էին տալի, որ դա բնութեան որդի է, այն հովիւ-ներից մէկը, որոնց նկարագրութիւնը կարդում ենք Աստուածաշունչ գրքում: Նրբ նա մեզ տեսաւ, խիղջ հրաւիրեց. խիղջ հասկացաւ, որ հիւրեր են եկել և առանց հարցնելու, թէ մենք ով ենք, ի՞նչ ազգութեան ենք պատկանում,

նա առարջակեց մեզ իր բնակարանը:

— Համեցէք, աչքիս վրա, ասաց նա հայերէն, ձեզ Աստուած ինձ ղօնաղ ա ղարկէ:

— Իմ ընկերներն են, ասաց Սամսօնը, որսի դուրս եկանք մթնեց բերի քեզ մօտ ղօնաղ:

Սամսօնը Մադօի հին բարեկամն էր:

— Շատ լաւ ես արեւ, խալֆա Սամսօն: Համեցէք...

— Ադա, գէշ ա Սամսօն, էն Աստօծը գէշ ա, ասաց Սիմօնը ցոյց տալով դէպի տարածվող դաշտը: Ըհը՛ տես, ուզում ա ոչխար տանի: Կերթամ կը խփեմ:

— Ադա, սուս, այ քոր շուն, բիարուր արիր մեզ, մի շուն էլ ըստեղ կը սպաննես:

— Պէ՛ գու ես գիտում:

Մադօն կտուրից մեզ մոցրեց իր օդան: Մի ծակ, որից մի մարդ կարող է ներս սողալ, այդ օդայի ճանապարհն էր: Միւս կողմից օդան մի փոքր դուռն ունէր, բայց նա նշանակած էր անասունների և կանանց համար:

Օդայի մի մասում անասուններ էին գտնվում, նոր ծնող ոչխարներ և գառներ, միւս մասում փոքր վառարան, որի շուրջը ուրախ կրակի մօտ մենք շարվեցանք: Օդը սաստիկ ծանր էր,

այնպէս որ հազիւ էինք շունչ քաշում:

Օդայի մէջ գտնվողները բոլորը քուրդեր էին, քացի մէկ հայ քանաքէոցի, որը Սամսօնի հարցին, թէ այստեղ ի՞նչ է շինում, պատասխանեց, որ Մադօից միշտ ոչխարներ է գնում և նրա հետ զանազան հաշիւներ ունէ, որոնց պատճառով շուտ շուտ այցելում է այս տեղը: Մադօն հաստատեց նրա ասածը, միայն տանտիրոջ քուրդ չորաններից մէկը մի կասկածաւոր հայեացք ձգեց քանաքէոցու վրա և սկսեց վառվող կրակը խառնել:

Մեր խուրջինը բացվեց ու շուտով փայտեայ շամփուրների վրա շարած խորովածները սկսեցին խշխշալ կրակի վրա:

Ամենքս լաւ տրամադրված էինք: Մադօն խօսում էր Սիմօնի հետ նոր օրէնքների վրա, որոնցից Սիմօնը տեղեկութիւն ունէր: Սամսօնը հանաքներ էր անում, Տարիէլը զինի էր ածում և քթի տակ երգում էր վրացերէն՝

Չմեռն ինչ կուգէ ցուրտ ըլն

Եարի եարալն,

Թէ ակուան էլ սառիլ ըլն

Թարի եարալն,

Յուրտը մեղն չի վախեցնի

Թէ զլիններու տաք ըլի,

Եւ ցոյց տալով իբր Թէ ծածուկ է անում,
տկի բերանը իր բերնին էր կոյցնում...

Երբ բաւական մասնք կեր ու խումի մէջ,
երբ գինին տաքացրեց գլուխներս, էլ մեղ հետ
խօսել չէր կարելի:

— Հիմա նանս երազներ ա տեսնում: Տես-
նում ա, որ նրա Սամսոնը եպիսկոպոսի աջն
առել ա, օրհնութիւնը ստացել ու առօք փա-
ռօք բերում ա քաղաք, ասում էր Սամսոնը:
Հայ գիղի, նանի, Թէ մին կիմանաս, որ ան-
առակ որդիդ հրմի էս չօլումը բաքոսաբանու-
թիւն ա անում... յետոյ երգում էր՝

Ախ ի՞նչ քաղցր բան

Ըլլալ կոնծարան,

Ախ ինչ դառը բան

Ըլլալ կարտարան:

Ո՛հ ի՞նչ դառը բան

Ըլլալ սիրական,

Ո՛հ ինչ քաղցր բան

Աին ունենալ տան:

Քանաքէոցին մասնակցում էր մեր քէֆին:
Դա մի զեղեցիկ առողջ տղամարդ էր: Մաղօն
առաջարկեց նրան ածել չորանի շվիի վրա և

քանաքէոցին սկսեց իր փայտեայ դորձիքով
հովիւների բոլոր եղանակները շվացներ և մեն-
քը ուշադրութեամբ լսում էին, եղանակները
շատ զեղեցիկ էին: Նրանց մէջ երևում էր
մէկ վայրենի ներդաշնակութիւն, որ այդքան
սիրելի է ասիացի մարդուն...

— Որտեղեց է սովորել այս քանաքէոցին,
մի՞թէ իր հաշիւների համար Մաղօի օդան
այցելելով, նա սովորեց և հովի շվին ածել,
մտածում էի ես, երբ ետեիս նստած Տարիէլը
երկու երեք անգամ բօթեց մէջքիս:

— Ի՞նչ ես ուզում, հարցրի ես:

— Նայիր, ասաց նա, գլխով ցոյց տալով
դէպի օդայի մութ անկիւնը:

Երկու փայլուն աչքեր երևում էին մութ
անկիւնում: Նս երբէք չեմ մոռանալ այդ աչ-
քերը, որոնք սաստիկ կրքոտ արտայայտութիւն
ունէին: Այդպիսի աչքեր անուանվում են իւ-
ղօտ աչքեր, այն մտքով, որ ինչպէս իւղը շու-
տով բորբոքվում է, վառվում է, այնպէս էլ
այդ տեսակ աչքերը, որոնք շատ քիչ են պա-
տահում և որոնց առաջ տղամարդը խոնար-
հեցնում է իր հայեացքը, մարմնի մէջ մի տե-
սակ ցնցիւն զգալով...

— Ո՞վ է հարցրի ես ծառայիցս:
— Աղջիկ է... հէնց դա սկսեց շվի ածել նա երևաց:

— Բայց ի՞նչ գիտես, որ աղջիկ է:
— Գիտեմ, ես տեսայ երբ նա մտաւ: Հէնց քանաքէռցին սկսեց ածել նա էլ մտաւ:

Քանաքէռցին շարունակում էր շուացնել աւելի ոգևորված. Մարտի քուրդ հովիւր անհանգիստ էր լինում: Նա վերկացաւ և ուղևորվեց դէպի մութ անկիւնը, որտեղից իսկոյն աչքերը անհետացան և մէկը շտապով տանից դուրս գնաց:

Քանաքէռցին և քուրդ հովիւր միմեանց շատ բարեկամաբար չէին նայում...

— Այստեղ բոման կայ, մտածեցի ես: Աղջիկ է երևում քանաքէռցու երաժշտութիւնը լսելու, քուրդ հովիւր քանաքէռցու վրա թշնամական հայեացքներ է գցում, գնում է աղջկայ կողմը, որը փախչում է: Այո, բոման կայ, վճռեցի ես մոքումս և սկսեցի մտածել, թէ ինչպէս տեղեկանամ հանգամանքներին...

— Աղա, քունս տանքմա, մեր տղերք ա-սաց Սամսօնը, երբ արդէն բաւական երկրպագութիւն էր մատուցել բաքոսին, քննեք ոչ:

Ընկերներս օդայի մէջ պառկեցին, որովհետեւ դուրսը ցուրտ էր: Ես աւելի լաւ համարեցի ցրրտում քնել, քան թէ օդայի մէջ, որովհետեւ ծանր օդը և զանազան միջոտները ինձ անհանգստացնում էին: Քանաքէռցին մնաս բարև ասաց: Նա պէտք է առաւօտը մեզանից շուտ գնար...

III

Քուրդի կարպետի մէջ փաթաթված պառկած էի օդաի կտերը, բայց քունս չէր տանում. քանաքէռցին և երկու փայլուն սևորակները ինձ հանգստութիւն չէին տալիս: Բոման կայ այստեղ, մտածում էի և ինքս էլ չը գիտեի թէ ի՞նչի եմ այդպէս կարծում: Քուրդ հովիւ կատաղութիւնը կարող էր երևայկայական լինել, աղջկայ օդա մանեղը պատահական...

— Տարիէլ, էն աղջիկը ի՞նչի եկաւ օդան:

— Քանաքէռցուն սիրում է, պատասխանեց Տարիէլը:

— Ի՞նչ գիտես:

— Գիտեմ, հաստատ գիտեմ:

— Բա, ինչպէս անենք տօ, որ իմանանք բանը ինչումն է:

— Դու քնիր, ես չեմ քնի, դուրս կը գան

կը խօսեն, կիմանամ:

— Թէ զօջաղ ես, Տարիէլ ջան, թէ եմ լօ-
թի Տարիէլն ես, իմացիր, փող կը բախշեմ:

— Արմանամ, փողն ինչ եմ անում, դու
փող չեմ:

— Դիէ լաւ:

Մենք էլի երկար խօսում ինք: Ես կարծում
էի, որ ես և Տարիէլը մենակ էինք, չը հաշւե-
լով ի հարկէ Տօպսին, որ ոտքերիս մօտ կօլօլ-
ված երազներ էր տեսնում: Բայց վերջը դուրս
եկաւ որ Մադօն էլ քանաքէոցու հետ դուր-
սըն էր:

— Մադօ ախպէր, դեռ չե՞ս քնել:

— Քնել չեմ, բարեկամիս հետ հաշիւ ենք
անում, պրծանք:

Լաւ գիշեր ա:

— Հա լաւ գիշեր է...է Մադօ,—մի բան
հարցնեմ, ամօթ չըլի:

— Ասա ինչա ա:

— Էսքան ոչխար ունես, հարուստ ես, որ-
դի էլ ունես:

— Չէ տղայ չունեմ, խի ա ամօթ: Մի
լաւ աղջիկ ունեմ, տղից լաւ: Շատ բաժինք
են տալի, որ Զօրաիս մարդի տամ, տալիս չեմ:

— Երեւի շատ փոքր է:

— Ղարափաշդ տասնը հինգ տարեկան ա:
Մենք թէզ մարդի կը տանք, ամա ես ուզում
չեմ: Բարի գիշեր, ասաց նա և մտաւ նեղ
ձակից օդայի մէջ:

Տասն և հինգ տարեկան աղջիկ, սիրուն աչ-
քեր և քանաքէոցի տղայ, որ շատ լաւ շվի է
ածում, ի՞նչ կայ զարմանալու, որ այդ երկուսը
սիրում լինեն միմեանց...

Այսպէս տրամադրված ես քնեցի:

Դեռ լուսնի ճառագայթը նոր էր իր տեղը
արեւի լուսին թողնում, հեռու, սարերի մէջ
նոր էին սկսել իրանց երգը արտուտները, կա-
քաւները սկսել էին իջնել դաշտը կերակրի
համար, երբ շվիի ձայնը ինձ զարթեցրեց: Այդ
քանաքէոցին էր ածում, զնալով գէպի սարը:

Տարիէլը և շունն չը կային:

Օդայի պատի մօտ դրսից կանգնած էր Զօ-
րան և նայում էր հեռացող քանաքէոցուն:
Դրա գեղեցկութեան նմանը ես կեանքումս չէի
տեսել: Չէի իմանում ինչի հետ համեմատեմ
նրա գէմքը: Երեսի նուրբ գծագրութիւնը մի
հակապատկեր էր ներկայացնում նրա աչքերի
վայրենի փայլունքին: Մարմնի ամբողջ կազմ-

վաճքը մի խառնուրդ էր փափկութեան և կոպտութեան: Մաղօտ յօնքերը խառնվում էին թերթերունքների հետ:

Քանաքէռցիին դադարեցրեց շվե ածելը, յետ դարձաւ, բարձրացրեց գլխակը և խաղացրեց օդում: Զօրան էլ պատից բարձրացրեց ձեռքը և նրանով մի քանի պտոյաններ արաւ: Եւ փաթաթվեցի կարպետի մէջ և աչքերս փակեցի:

Մի քանի ժամանակ լսվում էր քանաքէռցու երգը. «Քանաքէռ բարձր սար ա վա՛յ լօ, լօ, լօ, վա՛յ լօ, լօ, լօ» կանչում էր նա և յետոյ դարձեալ ամեն բան լռեց:

Երբ ես վերկացայ բաւական հեռաւորութեամբ ոչ ոք չէր երևում, միայն Զօրան մի քանի ոչխար էր քշում դէպի այն կողմը, որ կողմը, քանաքէռցիին դնաց:

Բաւական ժամանակ նրան հետևում էի հայկեացքով, յետոյ վեր առայ հրացանս և գնացի դէպի սարերի ստորոտը, որտեղ յոյս ունէի գրտնել կաքաւների, որոնք այդ ժամանակ քարափներից դաշտ են իջնում կերակրի համար: Մօտ մէկ ժամթափառեցի, շատ կաքաւ ինձ պատահեց, բայց չը յաջողվեց ոչ մէկին սպանել:

Մէկ բլուրի մօտից որձ կաքաւի ձայն էր

լսվում: Կամաց կամաց ես սկսեցի բարձրանալ սարը: Շուենչս պահում էի, որ գոնեա այս անգամ սպանեմ, որ մէկ բան ունենանք տուն տանելու: Հրացանիս ոտքերը բարձրացրած էին, երբ մէկը փեշս քաշեց: Դա Տարիէն էր, որ քարի ետևը ծածկվել էր:

— Սուս, նստիր, ասաց նա, նայիր էն կողմը, ցոյց տուեց նա սարի մէջ ճեղքը, տեսա՞ր:

Փոքրիկ, կանաչով ծածկված տափարակ տեղ նստած էին քանաքէռցիին և Զօրան: Նոքա խօսում էին միմեանց հետ, չը կասկածելով, որ մենք զրանց տեսնում ենք: Խեղճ սիրահարները ապահով տեղ էին գտել. որտեղ կարծում էին նրանց ոչ ոք չի տեսնի:

— Էն կողմը նայիր, ցոյց տուեց ինձ Տարիէն, էն մէկն էլ զրանց է մտիկ տալի:

Միւս կողմ Մաղօի քուրդ չօբանն էր, որ անդադար սեղմում էր իր խանջալի կոթը:

— Աղա էն քուրդն էլ է սիրում աղջկան, էսէնց էլ խաթաբալա կը լինի, ասում էր Տարիէն ծիծաղելով:

Կանաչի վրա նստած երկար խօսում էին քանաքէռցիին Զօրայի հետ: Մենք չէինք լսում նրանց խօսակցութիւնը, որովհետեւ շատ էինք

հեռու: Վերջապէս քանաքեօցին վեր կացաւ, պատրաստովեց գնալու: Մօտ երկու բօպէ աղջիկը և տղան նայում էին միմիանց, յետոյ մէկը ընկաւ միւսի գիրկը: Հրացանի ձայնը արգելեց նրանց վայելել այն գրիստառնութիւն: Նախանձոտ քուրդը չըհամբերեց, արձակեց իր հակառակորդի վրա հրացան և շտապ քայլերով հեռացաւ: Բաղդաւորապէս քրդի գնտակը չը հասու նպատակին, միայն խանդարեց սիրահարներին աւերորդ բօպէ երջանիկ լինել: Նրանք շուտ բաժանվեցան և գնացին հակառակ կողմեր, անդադար յետ նայելով մէկը միւսի կողմը:

Այդ օրը ճաշի ժամանակ բոլորս դարձեալ հաւաքվեցանք Մադօի օդայում, բայց չը տեսանք ոչ Զօրային, ոչ քուրդ հովւին: Ընկերներին որսը ինձանից աջող էր. Սամսօնը երեք կաքաւ էր սպանել, իսկ Սիմօնը մի նապաստակ:

Մադօին շնորհակալութիւն անելուց յետոյ մենք գնացինք Նրեւան, որտեղ Սամսօնը դարձեալ խաբեց իր նանին, տեսլով, որ եպիսկոպոսը եկաւ և ոչ թէ միայն ինքը ստացաւ նրա սուրբ օրհնութիւնը, այլ և պառաւ նանի համար էլ է բերել:

— Ապրես, այ որդի, ասում էր բարի կինը,

ապրես, Աստուած գործիդ աջողութիւն տայ, իշխանաւորիդ խիտ աչքը բարի ըլն վեհ:

Խեղճ նանի, եթէ դիտենայիր հոնցա քո անառակը քեղ խաբում, նրա գլխի մազերը կը հանէիր: Բայց դու ճիշտեղեց կիմանաս, երբ այդքան քաղցր, բարի և միամիտ ես...

Մի քանի ամիս անցել էր այն օրից, երբ մենք որսի էինք գնացել: Ես մոռացել էի մեր որսն էլ, Մադօին էլ, և միւսներին էլ: Ես ման էի գալի Նրեւանի թողոտ, փոքրիկ այգիի մէջ, որ զանաւում է պօլեցիայի առաջ: Այդտեղ բաւական շատ մարդիկ էին հաւաքվել: Նրբ ես հարցրի թէ «Ի՞նչ խաբար» է, ինձ պատմեցին, որ մի քանի ժամանակ առաջ մի քանաքէօցի էր անհետացել, որ նրան շատ էին պտռել: Բայց ի զուր, իսկ այսօր քանաքէօցու դիակը գտել են Զանգուի մէջ:

— Ինչպէս երևում է քանաքէօցին ջրում չէ խեղդվել, ասում էր պատմողը, որովհետեւ նրա պարանոցի վրա թոկի հեղքեր կան:

— Ոչինչ չեն խօսում, թէ ո՞վ կը լինի խեղդած, հարցրի ես:

— Ինչպէս չէ, ասում են, որ քուրդներն են խեղդել, մի քանի օր ծածկել են դիակը ի-

րանց մօտ և յետոյ գցել են Զանգուն:

— Հա՛, մի՞թէ, բացագանչեցի ես մօտքերելով Մաղօի օդան, բայց ինչ են ասում ինչեհամար կը լինեն սպանած, չէ որ մի շարժառիթ պէտք է ունենային:

— Պատմում են, որ քուրդերը սպանւածին փող են եղել պարտ և չեն կամեցել վճարել, հանգուցեալը պահանջել է և խեղդելով դրանից ազատվել են:

Այսպէս խօսում էինք, երբ մեզ մօտեցաւ Սամսօնը:

— Ադա էդ ինչ քանաքէռցի են սպանել, հարցրեց նա իմ ծանօթից:

— Տօ էն Կովակենց Խէչօն ա, էն ինչ կորել էր է՛:

— Գիտես այդ ինչ Խէչօ ա, զիմեց ինձ Սամսօնը, էդ էն քանաքէռցին ա, որ մեզ հետ Մաղօի օդայումն էր էն զիշերը, միտդ ա՛:

— Ինչպէս չէ:

Խեղճ Զօրա, մտածում էի ես, քո սիրածին էլ սպանեցին: Ով է խմանում նախանձոտ քուրդ հովիւն էր սիրեկանիդ խեղդողը: Նիթէ նա վճռեց հրացան արձակել իր հակառակորդի վրա, մի՞թէ չէր կարող խեղդել էլ:

Զօրային էլ մէկ անգամ պատահեցի: Նիթէ ժամանակ կունենամ մի ուրիշ անգամ կը պատմեմ նրա մասին:

ՄԻ ԹԵՐԹԻ ԻՄ ՅԻՇՈՂՈՒ ԹԻԻՆՆԵՐԻՑ

I

Երկու տարի միակերպ կեանք անցկացրի Պարտիզապատ զեղաքաղաքում, որի միզերը, պարտէշներով պատած դիրքը և զեղեցիկ, բարի կանայք աշխարհի այդ փոքրիկ անկիւնի զրեթէ միակ արժանաւորութիւններ են կալմամ: Նրբ մարդ դանվում է մի այսպիսի տեղ կամայ ակամայ զուարճանում է որսով, ձի նըստելով և այլն: Այդ բանը անում էի ես մեծ ուրախութեամբ, որովհետեւ երեխայութենից սիրում էի թէ ձի, թէ որս և թէ որսորդական շներ:

Գիւղի չորս կողմը դանված սարերը մի ծայրից մինչև միւս ծայրը հազար անգամ չափել եմ, ընկնելով կաքաւի ետեւից, որ զեղեցիկ աղջկայ պէս փախչում է քեզանից և մի և

նոյն ժամանակ իր երգով, շարժվածքով մարդու այնքան հրապուրում է, որ նա հետևում է չը պաշտով յոգնութիւն:

Առաւօտները երբ նոր է արշալոյսը բացվում, երբ արևը պատրաստվում է տալ իր ողջոյնը ցուրտ ժայռերին, կամ երեկոյեան երբ արևը արդէն մնաս բարև է ասում տաքացած քարերին և պատրաստվում է ծածկվել հորիզոնի ետևը, սրանք են այն ժամանակները, երբ կաքաները սկսում են կանչել իրանց հեռացած ընկերներին, երգել և զրանով ցոյց են տալի որսորդին թէ իրանք ինչ տեղ են դռնվում: Այս ժամանակները լաւ որսորդի հրացանը երբէք ուսի վրա չէ լինում, այլ հրացանի երկու ոտքերը բարձրացած, մատը հրացանաքաշի վրա, հրացանի կոթը աջ կռանը կպած, իսկ խողովակը ձախ ձեռքի վրա: Այս զրութեան մէջ նա կատուի պէս ոլորվելով քարից քար է անցնում, ժայռից ժայռ և սիրահարված երիտասարդի պէս հետևում է իր սիրուհւոյ, կաքաւի, բոլոր շարժվածքներին և շուտով որսը իր ձեռքին է լինում: Սպանված կաքաւը որսորդին լոպէսապի է բաւականացնում, նա իսկոյն նոր դո՛հ է փնտռում: Այս լոպէն որսորդի կեանքի մէջ

ամենաանագնիւ լոպէն է, և մի նոյն ժամանակ սա լաւ որսորդի յատկանիշ է: Այսպիսի բաւականութիւն ևս շատ քիչ անգամ էի վայելում, որովհետեւ լաւ որսորդ չէի: Բայց մի և նոյն ժամանակ ունէի և իմ մխիթարութիւնը՝ դա իմ ճարիէլ իմէրէլ ծառան էր իր անհատնելի խուրջնով:

— Աղա, կը կանչէր նա ինձ վրացերէն իւրաքանչիւր անաջող հրացանաձգութենէ՛ց յետոյ աղա կաքաւը մէջն է չի փոխէլ, այ տես, հրէն էն քարի ետևը նստեց:

— Արի գնանք... ամա չէ, դու այստեղ կաց:

— Ձէ, կը պատասխանէր նա, մի էս սառը խորոված սուկու կտորը կեր, մի էս գինին խմէ, գիտես, աղա, սրա խաղողը Պարտիզապատի աղջիկն է քաղել ու իր կիլոտո մասներով քամել... Ս'հ շէնի կի ճիրիմէ, լամաղօ քալօ դա թօփօ, յետոյ երգում էր.

«Երբ մենք կունենանք պատուական գինի աշխարհըն էլ քանդվի, քէֆներս էլ լաւ կը լինի»

Այսպէս էր անցնում կեանքս Պարտիզապատ գիւղում՝ որսը և Սրբիանանց մօխսու տունը իմ ապաստանարաններն էին:

Սրբիանանց մուխսին մի փոքրիկ մարդ էր: Նրա հասակը մի արշին ու կէսից աւելի չէր, մաշկերը արդէն սպիտակել էին, թշերը երկու մի-րուքով էին ծածկած, իսկ կզակը վեր արած: Նա ման էր եկել արտասահման, զնացել էր մինչև անգամ Նգիպտոս, ներկայացել էր Նուբար՝ փաշային: Մուխսին շատ էր սիրում պատմել իր ճանապարհորդութեան մանրամասները: Պատմելու ժամանակ խօսելով իր քաղաքական բանակցութեան մասին Նուբար-փաշայի հետ, նա չէր մոռանում պատմել և այն հանգամանքը, թէ ինչպէս ինքը փաշայի այգիից նարինջներ էր գողացել: Խօսելու ժամանակ նա անդադար զաղիներէն աղավաղված ֆրագներ էր գործածում: Մուխսին պսակված էր, ունէր մի կին, երկու աղայ և մի ոչ թէ սիրուն, այլ աղի, փափուկ, կօկէա աղջիկ, որի աչքերից կարելի էր զուշակել, որ ժամանակով նա շատ երիտասարդներին պէտք է հիացներ: Մուխսին քնքոյշ հօր սիրով սիրում էր իր բոլոր ընտանիքը և պատրաստ էր նրա համար ամեն տեսակ զոհաբերութիւններ անել: Պարտիզապատ գիւղում իմ եղած ժամանակ Սրբիանանց մուխսու կեանքում փոփոխութիւն պատահեց:

Նա ընտրվեց գիւղի մեղք և այնուհետև նրան էլ մուխսի չէին կանչում, այլ «մեղք աղա»: Նոր պաշտօնի մէջ մի վաղեմի հարուստ և այժմ գրեթէ աղքատացած վաճառականը ցոյց տուեց իր բոլոր կառավարչական ընդունակութիւնները: Միամիտ մուխսին դարձաւ կառավարիչ և այդ իրողութիւնը նա ամեն զործով ցոյց էր տալի՝ սկսած իր ռուսերէն գրած օրէնքների յօդուածներով լի պաշտօնական թղթերից մինչև իր տուած ընթրիքները դաւաապետին կամ նրա օգնականին: Այդ ընթրիքների ժամանակ նա ճաշակով էր հաւաքում հիւրերին: Պարտիզապատ գիւղի շրջականների աստիճանաւոր դասը նրանից հիացած էր: Այսպիսի «cochon» էր իմ Մուխսին, որը սիրում էր այդ բառը անդադար գործ ածել:

II

Յուզիս ամսի տաք երեկներից մէկն էր: Արևը տաքացրել էր ժայռոտ սարերը և ինքը մայր էր մտել: Պարտիզապատ գիւղից գոլորշի էր բարձրանում: Այգիների մէջ ծոյլ օփիները զանդաղ շարժում էին իրանց գլուխները: Նա ամբողջ օր սարերը չափելուց յետոյ, երկու կաքաւ որսորդական պարկիցս կախ ըն-

կած, հրացանը ուսիս և հաւատարիմ ճարիչէլն և Տօպսի հետ վերադառնում էի որսից: Դեռ մի ժամ առաջ սպիտակ ամպեր էին հաւաքվում մաքուր երկնականաւորի վրա: Դիւղի մէջ տօթ էր արիւել և ժամանակ առ ժամանակ անձրևի խոշոր կաթիլները թափվում էին տաքացած կաուրների վրա: Դիւղն չորս կողմից զանգակի մեղամաղձոտ ձայնը աստուածասէր քրիստոնեաներին կանչում էր երեկոյեան աղօթքի: Դիւղն մի ծայրում երևաց Տէր-Սիմօն հայրը և միրուքը ուղղելով, տէր-ողորմիան գցելով, պաշտօնական քայլերով դիմեց դէպի սուրբ Նմաւօն եկեղեցին, իսկ միւս կողմից նախընչ Կալօն տէր հօր նման ճիշդ, փայտը խաղացնելով, մէջքը քորելով «օհօ հօ, հօ հօօօ քեաֆիր, հօ շուն տղի կուվ», կանչելով երևում է զիւղի միւս ծայրում և իր նախիրը քշում: Ուսումնարանից ապագայ հասարակութիւնը ճանապարհին պատահածը վայր ձգելով, տուն է վաղում և օդը թնդացնում է անմեղ, մանկական քաղցր ծիծաղով: Դրանց հանդէպ զոյգ զոյգ կանգնած, պարծենկոտ վերակացու աշակերտուհու հսկողութեան տակ, գնում են օրիորդ աշակերտուհիները: Փողոցները ծածկված են ժամ գնացող գոյնզգոյն հագն-

ված կանանցով: Նախիրը մօտենում է զիւղին, աշակերտները աշակերտուհիներին, հորթերը պատասխանում են իրանց մայրերի բռնչալուն... ամառային յանկարծակի անձրևը թափվում է մեծ կաթիլներով: Անասունների, մարդերանց, տղաների ձայները խառնվում են միմեանց հետ ու միանալով ամպի որոտման հետ, մի անորոշ աղաղակի են փոխվում...

— Բարիգուն, cochon, կանչեց ինձ մուխսին, որ մի դրան մօտ պատասպարվել էր:

— Բարին արեւիդ, մուխսի, պատասխանեցի ես, տեսնում եմ ժամ ես գնում, հոգուդ պահպան:

Մուխսին տարին մի անգամ էր ժամ գնում:

— Էդ թողնենք, ես քեզ cochon ասացի, դու ինձ մուխսի, բարեբար ենք դուրս գալի: Հիմի պարոն ջան, տեսնում եմ կաքաւներ ես սպանել, ո՛ւր ես տանում:

— Տանում եմ էսպէս. որ դրան մօտ ինձ կասեն լաւ գինի ունեն, այնտեղ կը մօտենամ:

— Որ ասեմ թէ մեր տանը շատ լաւ գինի կայ, էն կարմիր գինուց, որ շատ նման է ճնոկ ունչին, նոկ» կախեթու գինուն:

— Ի հարկէ ձեր կողմը կերթամ:

— Որ ասեմ թէ Շաքրօն էլ մեր տանն է:

— Գաւառապետը:

— Հօ:

— Ձեր դուռը կը ծեծեն:

— Որ ասեմ թէ, մեր հարեանի տանն է սայրուն հորսը:»

— Գնացի, դուզ ձեր տուն գնացի, Մելք աղա:

— Դէ գնա. ճարիելիդ էլ տար, տանը ծառայ չը կայ:

— Ձը նայելով անձրևի մեծ մեծ կաթիլներին ես ուղևորվեցի դէպի մուսաու տունը:

— Աղա, է՛ի, կանչեց մելքը իմ ետեւից, շատ սաղ ու բաղ չանեա սայրուն հորսի հետ, թէ չէ կինս կիմանայ, տանից քեզ էլ դուրս կանի ինձ էլ:

— Հանգիստ կաց....

— Մի քանի րոպէից յետոյ ես մելքի տանն էի:

III

Կտնաչ սեղանի շուրջը, միջակ մեծութեան սենեակում նստած էին գաւառապետը և մի քանի պարտիզապատգիք, մի ուսուցիչ, մի փոքրը աստիճանաւոր, որ իր կօկարդով էր պար-

ծենում ու եթէ չամաչէր գաւառապետից, սենեակումն էլ գլխարկը չէր վերցնի, որ իր կօկարդը անյայտ չը մնար: Այգտեղ էին պարտիզապատցի խելօք Սարգիսը, կնոջ նման խարար բլան հերբար Օվանիսը, սիրուն Կապետը, այդ ձուկից դուրս եկող ու զեռ նոր կազմակերպվող փոքրիկ մարդը: Հինգ հոգի խաղ էին կազմել և ստուկօղկա էին խաղում:

— Վրաս, կանչում էր տաքացած Կապետը:

— Փաս, երկարացնում էր հերբար Օվանիսը, որին Կապետը երևի ոտի հարուածով յայտնել էր թէ ինքը լաւ թուղթ ունէ:

— Գիժ Դիգօլին էլ վիստ, կանչում էր Սարգիսը, որ իրան խաղի ժամանակ գիժ Դիգօլի էր կանչում:

— И я пойдю, ասում էր գաւառապետը:

— Իս նստեմ, այ աման, փրնթփնթում էր Սարգիսը ու ճշմարիտ նստեց 45:

Բոլոր խաղացողները աննշան մարդիկ էին, բացի գաւառապետից:

Դա մի ազնուական թիֆլիսցի վրացի էր, որ մի քանի տարի ծառայել էր պօլեցիայում: Մի դարդիմանդ վրացի էր: Նորա հասակը նստած ժամանակն էլ բարձրանում էր շրջապատողնե-

րից: Արծուանման քիթը տիրապետում էր սիրուն գծագրած երեսի վրա: Շաքրօ էր նրա անունը: Նա երբէք չէր թողնում իր երկար չուբուխը: Զի նստած ժամանակը չուբուխի կոթը միշտ բօտֆօրտի մէջ էր լինում կոխած:

Շաքրօի հետ ես կապված էի ամուր բարեկամական կապով, որ գուցէ ինքն էլ չէր գուշակում: Նրան երեխայութենից յիշում էի, որովհետեւ 8 տարի շարունակ նա մեր հարեան էր Թիֆլիսում: Այն ժամանակից, որ նա իր ոտքը դրեց Պարտիզապատ, շրջականերում աւազակութիւնը անհետացաւ: Նրա հետ միշտ խօսում էինք վրացերէն կամ ռուսերէն եւ անդադար խօսում էինք մեր մի ընդհանուր բարեկամի վրա եւ միմեանց պատմում էինք նրա քաջագործութիւնները:

— Ս'զ գամարջօբա, ասաց նա ինձ, երբ մտայ սենեակը, հը կաքաւ ես բերել, ամա լաւ էլ թրջվել ես: Դէհ, աթոռ վեր առ, արի խաղանք: Ստուկօրիկա, Ֆիշը հինգ կօպէկ:

— Գիտէք, ես չեմ խաղում: Խաղը արիւնս փչացնում է: Մի եւ նոյն ժամանակ զիմացը մի շատ գեղեցիկը կայ, աւելացրի ես, որի վրա

կամենում եմ մի քանի հայեացքներ ձգել:

— Այ դա մաշենիկ, ամեն տեղ կը գտնես: Կաւ, մի խաղա, բայց ինձ մօտ երբ կը գաս Վ. գիւղը:

— Մի օր երբ ազատ ժամանակ կունենամ:

— Այնտեղ շատ լաւ է, կաքաւներ շատ կան, վեր առ մի օր Տարիէլիդ, հրացանդ, ձի նստիր ու արի: Կամենաս էգուց միասին գնանք, ազատ օրեր են:

— Չէ, ես ինքս կը գամ:

— Դու գիտես:

Խոյ դացողները շարունակեցին իմ պատճառաւ ընդմիջված խաղը:

Ես սկսում էի ձանձրանալ միակերպ «վիստ» եւ «պաս» լսելուց, երբ մտաւ մուխսին:

— Bon soir, կանչեց նա, Տարիէլդ ղօշաղ է, զիմեց ինձ, արդէն կաքաւները խորովում է. վերջացրէք խաղը, հաց ուտենք, եթէ կը կամենաք իրիգնահացից յետոյ կը խաղանք: Նս էլ եմ սիրում դոկ կարտերը:

Աստուծոյ տուած բարիքները բերեցին սեղանի վրա: Պարտիզապատի բնակիչները, ինչքան էլ աղքատ լինեն միշտ առատ սեղան ունեն: Մուխսին ընտրվեց թամաղա: Բաժակները դա-

տարկվում էին միմեանց ետևից: Մեր ուրախ երգերը չէին դադարում մինչև ժամի երկուսը: Այսպիսի յանկարծակի քեֆերը միշտ լաւ են լինում, միշտ ուրախ են լինում: Մենք վեր էինք կենում սեղանից, ես պատրաստվում էի քնել, միւսները խաղալ, երբ սենեակը մացրին Շաքրօի թուրք չափարներից մէկին, որ յայտնեց դաւաճապետին, թէ Ուստուպի գիւղում, մի թուրք են սպանել:

— Խելքդ ի՞նչ է կարում, հարցրեց Շաքրօն չափարից, ով կը լինի սպանած:

— Չեմ գիտում, աղա, ասում են կինն է սպանել, պատասխանեց թուրքը:

— Կի՛նը, կանչեցին բոլորը զարմացած:

— Հա, ասում են սիրեկան է ունեցել, մարդուն սիրում չէ եղել ու երկուսով սիրեկանի հետ սպանել են:

— Կինը փախել է:

— Չէ, մելիքը երկուսին էլ բռնել է, ջոկ ջոկ կազամատ է գցել:

— Էդ ի՞նչ թուրք է սպանած, հարցրեց Շաքրօն, բէգ է:

— Չէ ըսի թուրք էլ չէ: Մի տեղից եկած քուրդ է: Էս է երեք տարի է Ուստուպի են

ապրում: Կինը, աղա, մին սիրուն է, մին սիրուն է, որ էլ ինչ ասեմ:

— Հըմ, ասաց Շաքրօն, չուբուխից ծուխ թողնելով, գնա, ձիա թամբեցէք գնանք:

— Գիտէք Շաքրօ, ասացի ես, այդ կինը իմ հետաքրքրութիւնը շարժում է:

— Գնանք միասին, կը տեսնես:

— Ինչ կը լի, ասաց մուսաին, ես էլ կը գամ տեսնելու:

— Լաւ, գնանք, ասացի ես:

— Աղա, դուն Սարգսի ձիու վրա կը նստես, կանչեց դրան ետևը կանգնած Տարիէլը, ես էլ չափարի թարքին, միասին կերթանք:

— Դու էլ ես գալիս հա, Տարիէլ:

— Հա, թէ որ կը տանես:

IV

Մէկ ժամից յետոյ մենք անցանք Պարտիզապատի միջեց և ընկանք քարոտ ճանապարհները: Նոր եկած անձրևի կաթիլները փայլում էին տերևների վրա. հեռու սարի մէջ բուխ միակերպ ձայնն էր լսվում: Լուսինը, բնութեան սիրելին, բարձր կանգնել էր, հպարտ գեղեցկուհու նման: Միլիօնաւոր աստղերը ծածկել էին

երկնքի երեսը: Ձիաների միակերպ քայլվածքը լավում էր գիշերային լուսլուսեղան մէջ: Մեծ տարածութեամբ ոչինչ չէ երևում, միայն երբեմն վախեցած նապաստակը դուրս է ընկնում թփի տակից և անհետանում լայն տարածութեան մէջ:

— Ախ, ստում էր մոռնալին, ի՞նչ սիրուն է, ի՞նչ լուս է գիշերը ճանապարհ գնալ:

— Այո, լուս է, պատասխանում էր Շաքրօն, երբ հազարից մի անգամ է պատահում: Բայց երբ ինձ նման քաղաքի աղմուկին սովոր, միակերպ կեանք ես անցկացնում, երբ անդադար ձիու մէջքից կպած սարեր և դաշտեր ես չափում, ման ես գալիս գիշեր ու ցերեկ, ականայ սովորում ես արհամարհել բնութեան գեղեցկութիւնները:

Քաղաքի կեանքին սովոր վաղեմի պօլեցիականը թափում էր իր սրտի մէջ հաւաքված թօյնը:

— Դուք մաւնգալու ժամանակ երևի ձեր գործով էք լինում զբաղված և չէք նկատում ամեն բան:

— Ի՞նչ դործ կայ, ի՞նչով զբաղվես: Բոլորը միակերպութիւն է:

— Բայց այն յանցանքները, որ դուք քննում էք:

— Ի՞նչ յանցանքներ... միշտ մի և նոյն բանն է կրկնվում: Սպանութիւն, դողութիւն ծածկված տեղից: Այս երկրում դու ոչ մի ազնիւ աւազակի չես պատահի, բոլորը ստոր մարդասպաններ են... այսպէս մենք գնում ենք, կարող է պատահել, որ այն քարի ետեւից մի գնտակ կարձակեն և մարդ շան պէս սատկում է, չիմանալով մինչև անգամ, թէ ումն է պարտական այդ բարերարութեան համար:

— Բայց այս անգամ կարծեմ այդպէս չէ. այս անգամ կին է սպանողը:

Այո, բայց ո՞վ է իմանում... գուցէ կինը չէ սպանել, այլ նրան մեղադրում են. կրկին նոյն ստորութեանը պիտի պատահենք:

Այսպէս խօսելով մօտենում էինք Վ.... գիւղին, որտեղ բնակվում էր գաւառապետը և որ Ուստուպի գիւղի ճանապարհին էր:

Ամբողջ այդ օրը ես արեւի կիզող ճառագայթների տակ էի ման է եկել: Այս հանգամանքը, այդ գիշերը դատարկած գինու բաժակները, վերջապէս անբուն գիշերը ինձ շատ վատ էին տրամադրել: Դլուխս չափազանց ծանր էր:

Նս կարծում էի, որ քնել եմ ուղում, ննջու
էի ձիու վրա, բայց ոչինչ չէր օգնում: Նս նկա-
տեցի, որ չեմ կարող շարունակել ճանապարհը
և երբ հասանք Վ. գիւղին յայտնեցի իմ դի-
տաւորութիւնը մնալ այդտեղ: Շաքրօն ուրա-
խութեամբ ինձ առաջարկեց իր անկողինը և
ես սպանվածի պէս քնեցի:

Քունս շատ անհանգիստ էր: Երազները չէին
հանգստացնում: Նս Երեւան եմ, տեսնում էի
երազումս, գնում եմ որսի... պատահած կաքաւի
վրա հրացանս արձակում եմ, նա ընկնում է.
մօտենում եմ, որ վեր առնեմ և սպանած կա-
քաւի տեղ Զօրայի դիակն եմ տեսնում...
իսկ հեռուից դալիս է Մադօն: Նա բարկացած
է ... Նս մօտենում եմ դիակին և կանչում եմ:

— Զօրա, Զօրա:

— Հա Զօրան է, միտքդ չէ՞:

— Ի՞նչ Զօրա, յանկարծ զարթնելով հար-
ցնում եմ ծարիեղին, որ ինձ մօտ կանգնած երա-
զումս արտասանած խօսքերիս պատասխան էր
տալի:

— Ի՞նչ Զօրան, էն Զօրան էլի, Մադօ
աղջիկը, միտք չէ ծարաւ աղբիւրը:

— Գիտեմ: Յետոյ ի՞նչ է պատահել նրան:

— Ճաշի վախար եասաւըները բերին: Էն
սահաթին ճանցայ: Հարցրի եասաւըներից
անունն ի՞նչ է, Զօրա է:

— Ուրեմն նա է սպանել իր մարդուն:

— Հա:

— Բայց այստեղ ի՞նչ է շինում:

— Չեմ գիտի: Եասաւըները նրան բերին,
ճանփին չին տեսի Շաքրօին, գօմի մէջն է, զրան
էլ ղարաուլ կայ:

— Խօսեցիր հետը:

— Չէ, եասաւընիրը չը թողին: Շատ ասի,
վուր նաչալնիկը վունչիչ չի ասի, ամա չը թո-
ղին:

Անհամբերութեամբ կամենում էի տեսնել
Զօրային, բայց Շաքրօն դեռ չէր վերադարձել:
Նա պէտք է քննութիւն անէր անցքը պատա-
հած տեղը, այնպէս որ նա մինչև 8 ժամ էլի
կուշանար: Ամբողջ օրը ես քնել էի: Պէտք էր
մի հնար մտածել Զօրային տեսնելու: Նս
դիտէի, որ կամակոր եասաւըները ինձ էլ չէին
թողնի մօնել Զօրայի մօտ: Վճռեցի դիմել Տա-
րիէլիս հնարագործութեանը:

— Տարիէլ, ինչպէս անենք, որ Զօրային տես-
նեմ:

— Իս փիքը իմ արի, կաց լաւ մթնի:

— Յետոյ:

— Գոմի կտուրը վերեւ բաց տեղ ունէ երկթ-
ներով զայմացած, ամա դուն կարողես անց կե-
նայ երկթների մէջով:

— Յետոյ թոկ կը լինի, որ դու վերեւ կը
բռնես, ես ներքեւ կերթամ:

— Զէ, իս ճամփէն կու սովընցնիմ, մէնակ
գնա. թոկը երկթեմէն կապէ ու դեմեր գնա:
Իս էլ կերթամ զարաուլին կու խօսեցնիմ ու թէ
կմացան կօսիմ վուր դուն իս, թօփ չը դցին:

— Ապրես, Տարիէլ ջան, ղօչաղ իս: Աբա ի՞նչ
անում ես արա:

— Աաց, լաւ մթնի: Այ էս մոմ, էս էլ թոկ:
Սաղ տունը տակն ու վրա արի, թոկ չը կար,
ասում էր Տարիէլը ծիծաղելով, իս էլ գնացի
սւ եասաուլի ձիու ջելաւը գողցայ:

V

Ամեն բան ինձ օգնում էր: Հէնց մթնեց,
ամալը սկսեց գոռալ և անձրեւ եկաւ: Ոչ մի
կերպ չէր լավի իմ քայլերը կամ ձայնը: Վտան-
գաւոր գործ էի սկսում: Թուրք զարաուլը կա-
րող էր ինձ տեսնել և առանց մտածելու հրա-
ցան արձակել: Բայց այս երկիրդիս հետաքը-

քու թիւնը յաղթեց և ճշմարտն ասեմ, ըն-
թերցող, շատ էի կամենում առանց վկաների
մի հայեացք ձգել Զօրայի սիրուն դէմքի վրա,
որ ես երեք տարի չը տեսնելուց յետոյ, էլի
չէի մոռացել:

Երբ ես բոլոր նախադգուշութիւնները տես-
նելուց յետոյ, թոկով ցածրացայ գոմը, այն-
տեղ սաստիկ մութն էր, երբեմն երբեմն կայ-
ծակի փայլումը փոքր լոյս էր գցում: Սա մոմ
վառեցի. անկիւնում պառկած էր Զօրան և
քնած: Եթէ երեսի վրա կարող է մարդու հո-
գին երեւալ, նա երևում էր Զօրայի երեսին:
Առաջվայ գեղեցկութիւնը նոյնութեամբ պահ-
պանվել էր: Այդ բոպէին ես այնքան համա-
կում էի խեղճ կնոջը, որ պատրաստ էի ամեն
բան անել նրան ազատելու համար:

— Զօրա, Զօրա, կանչեցի ես կամաց:

Նա բաց արեց աչքերը, երկար նայեց ինձ
ճակատը ճմրելով և յետոյ յանկարծ յիշելով
ինձ ընկաւ ոտքերս և փաթաթվեց:

— Ազատիր ինձ, ասաց նա թուրքերէն,
ղուրբան, ազատիր ինձ... ես քո զարապաշը կը
լինեմ, կանչեց նա բարձր լաց լինելով:

Բաղդադուրապէս ամպի գոռալը արգելեց պահապանին լսել նրա ձայնը:

— Կամաց խօսիր, տեսնում ես ինչ ճանապարհով եմ եկել, ասացի ես, ցոյց տալով նրան ընկած թուրը:

— Ուրեմն եկել ես ինձ փախցնելու, շուտ գնանք, էգուց էլ որ հարցնեն ես ամեն բան կասեմ:

— Սպասիր. ի՞նչ կասես... դու սպանեցիր...

Նա նայեց ինձ վրա կասկածով, յետոյ գլուխը թափ տուեց և շրթունքները մօտեցնելով ականջին հաղիւ լսելի կերպով արտասանեց:

— Քեզանից չեմ վախենում: Դու իմ հօր դնադն ես, ես սպանեցի հօրս չօբանին...

— Երևան. ուրեմն այստեղի սպանածդ երկրորդն է:

— Ձէ, նա է, հօրս չօբանը: Նա ինձ առաւ հօրիցս: Սկանք Ուստուպի, երկու տարի է այդտեղ էինք բնակվում: Սպասում էի, որ լաւ ժամանակ պատահի և մէկ շաբաթ առաջ նրան խեղդեցի,

— Եւ նոր իմացան:

— Հա: Նոր իմացան, որովհետեւ քարերի

տակն էի պահել ու նոր հանեցի տարա գցեցի ջուրը:

— Ի՞նչի էիր պահում, վախենում էիր:

— Ձէ, միտդ է Խէչօն, քանաքեռցին... չօբանը իր ծունկը դրեց նրա կուրծքին, ձեռքով հուփ տուեց բողաղին, մի շաբաթ մեր օդայի մօտ եղած քարերի տակը պահեց, յետոյ գցեց Ջանգուն: Նա էլ այնպէս արեցի: Ջանգուն մեծ էր, կօնակ, տարաւ Խէչօին, Ուստուպի գետը փոքր. չօբանի լէշը գեղումը մնաց... կօնակ, գնանք էստեղից... ես կը փախչեմ... աղաւթի ինձ:

— Ասել ես մէլիքին, որ դու ես սպանել:

— Հա: Նրբ լէշը գցեցի ջուրը ես փախայ Ուստուպից, եկայ Յընայ, չը համբերեցի, գնացի մէլիքի մօտ և բոլորը պատմեցի: Նա ինձ բռնեց... գնանք փախչենք... էլ ի՞նչ ես կանգնել:

— Ո՞ր կերթաս, Զօրա, աւելի վատ է, կըրկին կը բռնեն:

— Ի՞նչ անեմ... կօնակ, մեր հացը դու կերել ես, մեր առաստաղի աակը քնել ես, թող, ես փախչեմ, թող թէ մօրդ կաթը կը սիրես, ասում էր Զօրան ընկնելով ոտքերս:

Ինչ լինում է թող լինի, մտածեցի ես և

բարձրացրի Զօրային ձեռքերիս վրա և մօտեցրի թոկին:

Վատուի պէս արագութեամբ նա բարձրացաւ և դուրս եկաւ կտուրից: Նա նրան հետեւեցի և իմ եկած ճանապարհով պատից ցած բերի:

Երբ նա ընկաւ փողոցը, իրան զգաց ազատ, սկսեց իմ ձեռքերը համբուրել...

— Մնաս բարով, կոնակ, ասաց նա, թող արշալը պահի նրան ումը սիրում ես...

VI

— Դու իզուր չեկար, ասում էր ինձ մի քանի ժամից յետոյ Շաքրօն, որ իր գործը վերջացրել էր և վերադարձել, շատ հետաքրքիր գործ է:

— Ախ, ասում էր մուխսին, սպանածը մարդ է սպանել:

— Ի՞նչպէս թէ մարդ է սպանել:

— Այնպէս: Մենք գնում էինք մարդասպան կին բռնելու և նրա տեղ հին մարդասպան կալանաւորեցինք, ասաց Շաքրօն:

— Իսկ այս կինը, որ այստեղ կալանաւորած է, սա իր մարդուն չէ սպանել:

— Երազումը, այո, սպանել է: Այդ կալանաւորած կինը գիտ է:

— Զօրան գիտ է:

— Դու անունն էլ գիտես, ուրեմն մեր բացակայութեան ժամանակ պարապ չես մնացել:

— Շաքրօ, խնդրում եմ, թողէք հանաքը, մէկ պատմեցէք:

— Այդ կինը քուրդի կին է, իր հօր չօբանի կին: Ամուսնանալուց առաջ աղջկը մէկ քանաքեռցու սիրելիս է լինում: Գործը երևան է պատահում: Նախանձոտ քուրդը խեղդում է քանաքեռցուն և Ձանգուի մէջ զցում: Աղջկը մարդու է գնում քուրդին այն նպատակով, որ նրան նոյնպէս սպանէ, ինչպէս քուրդը քանաքեռցուն է սպանել: Երեք տարի այստեղ ապրելուց յետոյ, քուրդը նկատում է, որ իր կինը անդադար մի փայտ թաղում է քարերի տակ: Վերջապէս իմանում է, որ փայտը աղջկայ երեակայութեան մէջ իրի դիակն է: Մի քանի ժամանակ աղջկան պահում է փակած...

— Վերջը նա փախչում է, պատմում է մելիքին, որ իր մարդուն սպանել է, կտրեցի եւ նրա խօսքը:

— Եւ որովհետեւ ես իրաւունք ունէի մոռնել, որ աղջկը պէտք է առիթ ունենար, որ ուզում էր իր մարդուն սպանել, քննութիւն

արի և քուրդը խոստովանելը, որ ինքը քանաքեռցուն...

— Աղա, աղջիկը փախել է, կտրեց Շաքրօի խօսքը մի եասաուլ, կտուրից ղարտուլի ձիու ջելաւն է կախ ընկած: Նրա վրա է բարձրացել:

— Ղարաուլին բռնել էք:

— Հա, աղա:

— Լաւ, բաս ես կը բռնեմ աղջկան, հեռու չի գնայ:

— Շաքրօ, կանչեցի ես նրան մի կողմ, ոչ ոքի մի մեղադրի: Աղջկան ես փախցրի, ջելաւն էլ իմ ծառան գողացաւ: Զօրան իմ հին ծանօթն էր, նրա հետ մի բան կարող է պատահել, գտիր նրան....

— Ախ երիտասարտութիւն, երիտասարդութիւն. գիտես ինչպէս դու կարող էիր պատժվել: Ի՞նչ արած, պէտք է ուղղել քո փշաքրած գործը:

Երկու ժամից յետոյ ես վերադառնում էի տուն: Զօրան գլխիցս չէր դուրս գալի: Ինձ հարկաւոր էր տաքանալ, հարկաւոր էր զգացմունք... Ժայռի տակից դուրս ընկաւ մի նապաստակ և փախաւ դէպի դաշտ, ես մտրակեցի ձիս և կատաղածի պէս, ոչ մի արգելքի վրա ուշադրութիւն չը դարձնելով վաղեցրի ձիս նապաստակի

ետեից: Յանկարձ ձիս կողմ թռաւ և ես գետնին փռւեցայ:

Զօրան նստած է մէկ խոր ընկած տեղ: Զիս նրանից էր վախեցել. ես նրան մօտեցայ:

— Զօրա, Զօրա, եկ ինձ հետ փախչենք: Զօրա, կրկնեցի ես, վեր առնելով նրա ձեռքը, ինձ չես ճանաչում:

— Նա նայեց ինձ վրա պղտոր աչքերով և սխեց ծիծաղել:

— Մնաս բարով, Զօրա...

Այդ վերջին անգամն էր, որ ես տեսայ Զօրային...



Handwritten text in German, likely a letter or document, written in a cursive script. The text is mirrored across the page, suggesting it was written on a single sheet of paper that was later folded or scanned twice. The text is mostly illegible due to the quality of the scan and the cursive nature of the handwriting.



Գինն է 60 կոպ.

25
Հայաստանի Ազգային գրադարան



NL0445913

